<<ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

# 2023-2028թթ.-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հավակնորդ՝ Վերոնիկա Կարենի Բաբաջանյան

**Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցումներն ու պահանջները հաստատելու մասին» N 35-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Այն կազմվել է նաև դպրոցի վերջին հինգ տարիների ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների խորը և համակողմանի վերլուծության հիման վրա:**



www.school20.safe.am , https://www.facebook.com/groups/dzerjinka , https://www.4teachme.com/

Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցի զարգացման տվյալ ծրագիրը գրելու համար նաև հիմք են հանդիսացել.

1. Դպրոցի վերջին 5 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները
2. Ուսումնադաստիարակչական վերջին 5 տարվա աշխատանքային պլանների հաշվետվությունները
3. Աշակերտական և մանկավարժական համակազմի ձեռքբերումները
4. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը

5. Գործող տնօրենի 2021-2023 թթ.-ի դպրոցի զարգացման ծրագիրը:

6. Դպրոցի զարգացման ծրագիրը գրելու համար մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների անդամների հետ հանդիպումները:

ա. 29.06.2023թ. – հանդիպում աշակերտական խորհրդի հետ. Առաջարկներ՝ նոր լեզուների ներդրում, տնային աշխատանքների կրճատում, ֆիզկուլտուրայի գույքի հարստացում, կանաչ դաշտի վերականգնում, բուֆետի առկայություն, ֆիզիկայի կաբինետի հագեցվածություն, մաքուր ջրի սարքեր, հագուստի կարգավորում:

բ. 29.06.2023թ. – հանդիպում ծնողական խորհրդի հետ. Առաջարկներ՝ գեղագիտական և առարկայական խմբակների ավելացում, մասնակցային գործնական աշխատանքներ, հոգեբանի համագործակցություն բարձր դասարանցիների հետ, օլիմպիադաներում մասնակցող սովորողների համար ուսուցչական հզոր խմբի ստեղծում, չինարենի, իսպաներենի, ֆրանսերենի խմբակների ստեղծում, համագործակցություն Արմաթ լաբորատորիայի հետ, դպրոցի շրջանավարտների կամավոր աջակցությամբ անվճար ծրագրավորման դասընթացների կազմակերպում:

գ. 30. 06. 2023թ. – հանդիպում մանկավարժական խորհրդի հետ. Առաջարկներ՝ բոլոր սովորողների համար անհատական պլանշետներ ինֆորմատիկայի դասաժամի համար, ՏՀՏ հագեցվածություն, անխափան ինտերնետ կապ, զուգարաններում, հանդերձարաններում օդափոխություն, ռեսուրս սենյակների հագեցվածություն, տարրականի 4-րդ դասարանի դասվարի և միջին դպրոցի առարկայական ուսուցչի համատեղ դասավանդման մոդելի կիրառում, հատուկ սենյակ-խոհանոց տեխնոլոգիայի դասերի համար, բացի հայերենից ԲՏՃՄ առարկայական տերմինների իմացություն անգլերենով և ռուսերենով, բացել ադապտիվ հատուկ խումբ, ավելացնել անգլերենի ժամերը:

ՀՀ <<Երևանի Ջ. Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական **տարրական և հիմնական** ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:



ԼԻՑԵՆԶԻԱ



ԼԻՑԵՆԶԻԱ

2018 թվականից դպրոցում գործում է Նախակրթարան՝ Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրով: Ծրագրի իրականացման համար, համագործակցության արդյունքում, 28 տոկոս ներդրում կատարել է համայնքը: Սովորողների սահմանային թիվը՝ 30 է:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա

ԼԻՑԵՆԶԻԱ № 0542

Սույնով վավերացվում է, որ
<<ԵՐԵՎԱՆԻ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ք. Երևան, Կենտրոն, Այգեստան 9/4

ք. Երևան, Կենտրոն, Այգեստան 9/4

Իրավունք ունի իրականացնելու

Նախադպրոցական կրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Հարությունյան

Կ.Տ. «26» նոյեմբերի 2018 թ.

Անժամկետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ՆԵՐԴԻՐ N 001**
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՍԵՐԻԱ Ա N 0542 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

**<<ԵՐԵՎԱՆԻ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ**
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ <<26>> ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թ. N 1582-Ա/2 ՀՐԱՄԱՆԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ.

| N | Կրթական ծրագիրը | Հաստատության տեսակը | Տարիքային փուլերը | Համակազմի նախատեսվող սահմանային թիվը | Ուսուցման տևողությունը | Ուսուցման լեզուն | Կրթության ձև |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նախադպրոցական | Մանկապարտեզ | Ավագ նախադպրոցական տարիք | 30 | 1 տարի | Գրական հայերեն | Առկա |

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

(ստորագրություն)
Կ.Տ.

Մ. Մովսիսյան
(անուն, ազգանուն)
26 նոյեմբերի 2018թ.
(ամիս, ամսաթիվ)

2005 թվականից դպրոցը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ասոցացված դպրոցների անդամ է:

2007թ.-ից դպրոցն իրականացնում է ներառական կրթություն: Բարի հասարակություն կառուցելու այն գաղափարախոսությունը, որը դրված է ներառականության հիմքում, 2007 թ.-ից գործում է այս դպրոցում: Այստեղից ԿԱՊԿ ունեցող երեխաները հասարակություն են մտնում որպես լիարժեք անդամ :

Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցը <<Էլեկտրոնային ուսուցում իրականացնող>>, ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների ՀՊՉ ներդրման նպատակով վերապատրաստումներ իրականացնող մենթոր դպրոց է:

Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցը հիմնադրվել է 1943թ.-ին և անվանվել Ֆ.Է. Ձերժինսկու անվամբ: 1999թ.-ից այն կրում է հայ մեծանուն պատմաբան, պետական գործիչ Ջոն Կիրակոսյանի անունը:




80-ամյա դպրոցը անցել է կրթական երկար ճանապարհ, որի ընթացքում նրա շրջանավարտները դարձել են մեր պետության համար անփոխարինելի անուններ:

<<Ջ. Կիրակոսյանի անվ. հ.20 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը ստեղծվել է Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցի /բյուջետային հիմնարկ/ իրավահաջորդը հանդիսացող Ջոն Կիրակոսյանի անվ. հ. 20 միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության անվանափոխության արդյունքում (գրանցված թիվ 27321003398, վկայական N 03Ա058243, ծածկագիր 10046523, տրվ. 27.01.2003թ.) և հանդիսանում է նրանց իրավահաջորդը:




Դպրոցի գտնվելու վայրն է ՀՀ, ք.Երևան, Այգեստան 9/4ա:

Դպրոցը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք:
Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
Դպրոցի ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից /նոր կարգի համաձայն՝ դասարան թվից/:

Դպրոցի գործունեության նպատակն է սովորողների կողմից Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշչի և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինքնակրթության պայմանների ստեղծման ապահովումը:

Դպրոցի գործունեությունը հիմնվում է **ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության, ազգային և համամարդկային** արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

Դպրոցը միահերթ է: Դպրոցում սովորողների թիվը համապատասխանում է հաստատության

նախագծային հզորությանը և հաստատության՝ լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին՝ տարրական դպրոցում՝ 400 սովորող, միջին դպրոցում՝ 470 սովորող ։



Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցն ունի իր պաշտոնական կայք էջը՝ [www.school20.safe.am](http://www.school20.safe.am) , այն համապատասխանում է արդի պահանջներին և նպատակաուղղված է միասնական տեղեկատվական դաշտի ստեղծմանը: Դպրոցի ֆեյսբուքյան էջը՝ [https://www.facebook.com/groups/dzerjinka](https://www.facebook.com/groups/dzerjinka) ստեղծվել է դպրոցի շրջանավարտների կողմից, այն դպրոցի առօրյայի մասին է, ուսումնադաստիարակչական աշխատանքների մեծ մասը արտացոլվում է այս էջում: Էջի համակարգողը ցանկացած նյութ ուսումնասիրում է, նոր տեղադրում: Դպրոցն ունի իր կրթական տիրույթը՝ [https://www.4teachme.com/, որտեղ](https://www.4teachme.com/) ուսուցիչները տեղադրում են իրենց ստեղծած տեսադասերը: Նյութերը պարբերաբար թարմացվում են:











Դպրոցի դասարանների թիվը **27** է: Աշակերտների թիվը՝ **823**, որից 378-ը սովորում են տարրական դպրոցում, 431-ը՝ հիմնական, և **14** երեխա՝ նախակրթարանում: Դպրոցում սովորում է 81 ԿԱՊԿ ունեցող երեխա՝ տարբեր կարիքներով:

Դպրոցի աշխատողների թիվը **80-ն** է, դրանցից 5-ը՝ վարչական, 64-ը՝ մանկավարժներ /6-ը համատեղությամբ/ և 16-ը՝ սպասարկող:

Մանկավարժներից 49-ը դասավանդող ուսուցիչներ են, որոնցից 12-ը ստացել են տարակարգ՝ որակավորման առաջին աստիճան՝ 10 ուսուցիչ և երկրորդ աստիճան՝ 2 ուսուցիչ, 1 ուսուցիչ անցել է կամավոր ատեստավորում և հավաքել 79 տոկոս: 2 ուսուցիչ և 1 հատուկ մանկավարժ ՀՄԿ-ի կողմից ընտրված են մենթոր վերապատրաստողներ, իսկ 4 ուսուցիչ ԿԶՆԱԿ-ի կողմից ընտրված են որպես մենթոր վերապատրաստողներ: Ուսուցիչներից 2-ը համարվում են <<Հույսի կամուրջ>> ՀԿ-ի ներառական կրթության փորձագետ-վերապատրաստողներ և <<ԿԱՍ>> ՀԿ-ի կողմից իրականացվող տնօրենների հավաստագրման, ուսուցիչների հերթական ատեստավորման առարկայական վերապատրաստողներ: Ուսուցիչներից 2-ը մշակել են Տավուշի մարզում առարկայական՝ անգլերենի 4-րդ, 5-րդ, 6-րդ դասարանների և 5-րդ դասարանի <<Ես և իմ հայրենիքը>> և 6-րդ դասարանի << Իմ հայրենիքը և աշխարհը>> փորձարկվող նյութերը: Դպրոցի 4 ուսուցիչ ԿԳՄՍՆ-ի կողմից ընտրվել են տարբեր առարկաների Դասագրքերի գնահատման հանձնաժողովում: Դպրոցի 1 ուսուցիչ Հայկական Կարմիր խաչի կամավոր է:

## Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», <<Երեխայի իրավունքների մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, <<Հանրակրթության պետական չափորոշչի>> դրույթներով, իր Կանոնադրությամբ, Դպրոցի ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով:

## Դպրոցի գործունեության համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին

*/ՀՀ կրթության մինչև 2030 թ.զարգացման պետական ծրագիր, ՀՀ Հանրակրթության մասին օրենք/*

Հարափոփոխ աշխարհում գիտելիքն ու ստեղծարարությունը դարձել են մարդկային կապիտալի զարգացման, տնտեսական և մշակութային կայուն առաջընթացի գրավական, սովորելը դարձնել ազգային կենսակերպ, արդյունավետ և ստեղծարար սովորելու միջավայրի ապահովումը, թվային և այլ գործիքների ներդնումը, դերերի և պարտականությունների արդյունավետ

բաշխումը մասնակիցների միջև, կառավարման նոր որակի ապահովումը և ծախսարդյունավետության բարձրացումը դարձել են նպատակի առանցքային բաղադրիչներ:

Պետության կրթական քաղաքականության Ծրագրի հիմքում Հայաստանի վերափոխման ռազմավարությունն է, և հատկապես առաջին մեգանպատակն է՝ գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը, ով առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն:
Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:
Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն **ազգային դպրոցն է**, որի գլխավոր **նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:**
Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը: Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա պարտադիր միջնակարգ կրթություն՝ անվճար:
Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:
Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:

**Հենց այս տեսլականն է իմ կողմից մշակված որպես Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցի զարգացման ծրագրի առանցքային բաղադրիչների կիզակետ:**

**Դպրոցի առաքելությունն է՝** <<Ստեղծել փոքրիկ ներառական դպրոցական համակարգ, ուր յուրաքանչյուր երեխայի համար ապահովված լինի կրթության մեջ առավելագույն ընդգրկվածություն, հավասար մասնակցություն, ուսումնառության մատչելություն և որակյալ կրթություն>>:

**Դպրոցի** զ**արգացման ծրագրի գերակա նպատակն է** ապահովել յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունը և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական տարրական և հիմնական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ այդ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքների, որոնց **հասնելու համար անհրաժեշտ են՝**

- ✓ աջակցել սովորողներին 21 -րդ դարի հմտությունները տիրապետելուն
- ✓ համապատասխանեցնել կրթությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել

լինելու համար, սովորել միասին ապրելու համար

- ✓ կրթական բարենպաստ /խելամիտ հարմարեցումներ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար/ ու ապահով, անվտանգ և հարմարավետ, փոխադարձ վստահության միջավայրի ստեղծում աշակերտների, ծնողների և ուսուցիչների համար
- ✓ միասին սովորելու, աշխատելու, ապրելու կանոնների կերտում, համագործակցային ուսուցում
- ✓ հաղորդակցական հմտությունների զարգացում և բարոյական արժեքների դաստիարակում
- ✓ բնապահպանական կրթության միջոցով բոլոր սովորողներին հասարակության կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով և կարողություններով զինում
- ✓ կրթության և ողջ կյանքի ընթացքում սովորելու նկատմամբ դրական վերաբերմունքի խթանում
- ✓ որակյալ կրթության իրավունքի իրացման գործում ուսուցչի, ընտանիքի, համայնքի դերի կարևորում
- ✓ իրենց գործին նվիրված և անընդմեջ ինքնակրթությամբ զբաղվող ուսուցչական որակյալ ուժեղ թիմի՝ տարակարգ ունեցող, մենթոր և կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների խթանում և խրախուսում
- ✓ մանկավարժական անձնակազմի մասնագիտական զարգացման շարունակական այնպիսի գործողությունների իրականացում, որի արդյունքում դպրոցի մանկավարժական աշխատողները կտիրապետեն և կկիրառեն ՏՀՏ-ներ և ժամանակակից դասավանդման մեթոդներ
- ✓ կրթական բարեփոխումների նկատմամբ լավատես ու հայրենասեր որակյալ մասնագետներ
- ✓ ներառական կրթության ճիշտ ռազմավարություն և աջակցող թիմի լավագույն մասնագետներ
- ✓ արտադասարանական խմբակների և երկարօրյա խմբի արդյունավետ գործունեություն
- ✓ անհրաժեշտ գույքով զինված մարզադահլիճներ, տարբեր սպորտաձևերին հարմարավետ մարզահրապարակներ, անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով և սարքերով հագեցած լաբորատորիաներ, գեղարվեստական գրքերով և ուսումնամեթոդական ձեռնարկներով հարուստ գրադարան, ԿԱՊԿ ունեցող սովորողներին աջակցություն ցուցաբերելու համար անհրաժեշտ նյութերով հագեցած առանձին սենյակներ
- ✓ դպրոց-համայնք ամուր կապ և փոխադարձ հարգանք միմյանց նկատմամբ
- ✓ արդի նյութատեխնիկական զինվածությամբ կաբինետներ և դասասենյակներ և դրանց անընդմեջ համալրում
- ✓ համացանցի որակյալ հասանելիության ապահովում
- ✓ գրադարանի ծրագրային գեղարվեստական գրքերի աստիճանական թվայնացում
- ✓ սերտ համագործակցություն Աշակերտական խորհրդի և Ծնողական խորհրդի անդամների հետ, ծնողների ներգրավվածություն սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին
- ✓ ներդպրոցական բազմակողմանի վերահսկողություն
- ✓ համագործակցություն կրթական գործունեությամբ զբաղվող տարբեր ՀԿ-ների հետ
- ✓ տարբեր ծրագրերի մասնակցություն, այդ թվում՝ դրամաշնորհային
- ✓ ուսուցիչների խրախուսման նոր մեխանիզմների ներդրում
- ✓ բազմակարծիք և մասնակցային մանկավարժական, աշակերտական, ծնողական ազատ մթնոլորտ

**որպեսզի ունենանք մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքներով զինված, դրանք կյանքում կիրառելու կարողություններով և հմտություններով օժտված, բարոյական և հոգևոր արժեքները յուրացրած, քննադատական մտածելակերպով, հայրենասեր, քաղաքացիական պատասխանատվությամբ, քաղաքակիրթ, ինքնուրույն մտածողությամբ, ինքնավար շրջանավարտ ավագ դպրոցում կամ մասնագիտական հաստատությունում ուսումը շարունակելու համար:**

**Անժխտելի փաստ է, որ դպրոցի ներկա իրավիճակը համապատասխանում է ցանկալի իրավիճակին:**

Իսկ իրատեսական  նպատակներ և խնդիրներ սահմանելու համար եկեք  վերլուծենք դպրոցի առկա իրավիճակը, բացահայտենք ուժեղ և թույլ կողմերը, վեր հանենք հիմնախնդիրները: Եվ որպեսզի անհամապատասխանություն չառաջանա ցանկալիի և իրականի միջև, դպրոցի զարգացման ծրագիրը կազմելիս առաջնորդվել եմ այն նպատակներով և խնդիրներով, որոնք առաջիկա մի քանի տարում կդրվեն դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմքում:

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Զարգացման ծրագիրը կազմել եմ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների հետ հանդիպումներից հետո: Իրավիճակի վերլուծությունից հետո վեր եմ լուծել հետևյալ ոլորտները՝**

1. Դպրոցի շենքային պայմանները
2. Դպրոցի նյութատեխնիկական բազան
3. Կառավարման և խորհրդակցական մարմինները
4. Համագործակցություն համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ
5. Դպրոցի կրթական միջավայրը՝ ուսումնական և դաստիարակչական գործընթացները
6. Դպրոցում օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների օգտագործումը
7. Կրթության որակը ըստ սովորողների ուսումնառության արդյունքների
8. Առկա հիմնախնդիրները
9. Դպրոցի ֆինանսական գործունեությունը
10. Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը
11. Վերջաբան

Ներկայացնում եմ իրավիճակների վերլուծությունը ըստ ոլորտների՝ սահմանելով նպատակներն ու խնդիրները, ռիսկերը, ռիսկերը մեղմացնող գործողությունները, աշխատանքների պատասխանատուներին, դրանց կատարման ժամանակացույցը, գնահատման չափանիշները, ցուցանիշները, վերահսկողության մեխանիզմները:

## Ջոն Կիրակոսյանի անվան հ. 20 հիմնական դպրոցի շենքային պայմանները

Ջոն Կիրակոսյանի անվան հ. 20 հիմնական դպրոցը գտնվում է Այգեստան թաղամասում, բաղկացած է 3 մասնաշենքերից, ունի գլխավոր, աջակողմյան և ձախակողմյան մասնաշենքեր, որոնք միմյանց հետ կապված են: Կենտրոնական մասնաշենքը 4 հարկանի քարե շենք է, նաև ճարտարապետական կառույց, աջակողմյանը և ձախակողմյանը՝ 3 հարկանի են, պանելային՝ բարվոք վիճակում: Մասնաշենքերն ունեն նկուղային հարկեր: Գլխավոր մասնաշենքը կառուցվել է 1953թ.-ին, իսկ կից 2 մասնաշենքերը՝ 1967թ.-ին, մակերեսը՝ 7514 քմ /ըստ անշարժ գույքի վկայականի/: Շենքը կայուն է ուժեղ քամիների, հրդեհների, խոնավության նկատմամբ: Երկրաշարժերի վտանգի հետ կապված փորձաքննություն կատարված չէ, բայց սեյսմիկ կենտրոնից մասնագետներ հրավիրված են եղել: Աջակողմյան մասնաշենքի կցակառույցի ճաքերը կապվել են Սպիտակի և Վանի երկրաշարժերի հետ: Գնահատվել է նաև դպրոցին ամրացված անշարժ գույքի տեխնիկական վիճակը և սեյսմիկ խոցելիության աստիճանը:

Դպրոցում առկա են դեպի ներս բացվող երկու պահուստային և երեք հիմնական ելքեր: Գլխավոր մասնաշենքը դրսի կողմից 2 հարկի բարձրությամբ ունի լրացուցիչ հակահրդեհային սանդուղքներ: Մասնաշենքերը ջեռուցվում են դպրոցական համալիրի տարածքում կառուցված կաթսայատնից, որը գործում է անխափան: Դպրոցի մասնաշենքերի տարածքները փողոցից առանձնացված են մետաղական ցանկապատերով և անվտանգ են սովորողների ազատ տեղաշարժման համար: Դարպասները երկու կողմից բացվում են, ԱԻՆ-ի մեքենաները հանգիստ մտնում են ներս: Առկա է դպրոցի մուտքերի, դիմացի բակի, մարզահրապարակների, ինչպես նաև միջանցքների տեսահսկման համակարգ: Դպրոցում չկա հրշեջ-ծորակ, սակայն յուրաքանչյուր հարկում ջրի առնվազն չորս ծորակ կա: Հակահրդեհային անվտանգության լրակազմից կա երկու հատուկ վահանակ կենտրոնական մասնաշենքի առաջին և երրորդ հարկում և երեք մասնաշենքերի բոլոր հարկերում կան կրակմարիչներ՝թվով 20, որոնք սարքին և պատրաստ վիճակում են, տանիքը պատված է հրակայուն նյութերով: Առաջին և երկրորդ հարկերի պատուհանները մետաղյա վանդակաճաղեր ունեն, որոնք շարժական չեն: Դպրոցում առկա է ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ԵՓ վարչության պետի և դպրոցի տնօրենի կողմից հաստատված քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույց, մշակված է սովորողների և անձնակազմի տարհանման պլան, հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Դպրոցի նախասրահում, բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով: Դպրոցի տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով: Դպրոցի շենքային պայմանները ոչ լիարժեք են հարմարեցված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների

անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին՝ ներսում չկա թեքահարթակ: Թեքահարթակը միայն դրսից ՝ կենտրոնական մուտքի մոտ և կա մեկ շարժական թեքահարթակ կենտրոնական մասնաշենքի շքամուտքի երեք աստիճանների համար:
Ջոն Կիրակոսյանի կիսանդրին տեղադրված է դպրոցի նախասրահում:
Դպրոցի տարածքը մաքուր է, այն պարտադիր կերպով մաքրվում է ամեն օր:
Դպրոցի դիմացը՝ Չարենցի փողոցի վրա առկա է ստորգետնյա անցում:

Դպրոցի ենթակառուցվածքներն իրենց հնարավորություններով և մարդկային ռեսուրսներով համապատասխանում են ուսումնադաստիարակչական գործընթացի պատշաճ կազմակերպմանը, բովանդակության իրականացմանը և ապահովում են հանրակրթական ծրագրերի իրականացումը:

**Նպատակ**

- ✓ ապահովել ուսումնական միջավայր որակյալ կրթության համար՝ ներառյալ խելամիտ հարմարեցումները
- ✓ պահպանել շենքային պայմանները նորմալ վիճակում
- ✓ պահպանել տարածքի անվտանգությունը
- ✓ ապահովել ԱԻ մեքենաների անարգել հասանելիությունը դպրոցին

**Խնդիր**

- ➢ նպաստել ուսուցման և ուսումնառության գործընթացին
- ➢ հարստացնել կրթական նյութատեխնիկական բազան ի նպաստ կրթության որակի
- ➢ ստեղծել խելամիտ ֆիզիկական միջավայր ԿԱՊԿ ունեցող սովորողների համար
- ➢ կահավորել և արդիական սարքավորումներով հագեցնել դպրոցական գույքը,
- ➢ բարելավել և արդիականացնել ենթակառուցվածքները՝ արդիականացնել լաբորատոր պարապմունքների անցկացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան՝ ըստ մասնագիտական ուղղությունների
- ➢ պահպանել սանիտարահիգիենիկ և անվտանգային նորմերը
- ➢ արդիականացնել ենթակառուցվածքները, հարմարեցնել ֆիզիկական միջավայրը ԿԱՊԿ ունեցող սովորողների համար
- ➢ արդիականացնել հանդիսության դահլիճի կահավորվածությունը
- ➢ վերանորոգել մարզադահլիճները և հարստացնել գույքը
- ➢ համագործակցել համակարգողի հետ խելամիտ լուծումների հասնելու նպատակով

Դպրոցն ունի միջազգային նորմերին համապատասխանող 2 մարզադահլիճ 4-րդ հարկում և 1 մարզադահլիճ 1-ին հարկում , գրադարան, ընթերցասրահ , նորագույն տեխնիկայով հագեցած տեղեկատվական <<Վիրտուալ դպրոց>> /Կենտրոնական մասնաշենքի 3-րդ հարկի 6 առարկայական կաբինետներն են, որոնք կահավորված են նորագույն էլեկտրոնային գրատախտակներով, կահավորված բուժսենյակ /նկար 4/, բուֆետ, 2 ուսուցչանոց, 10

առարկայական կաբինետ /քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, պատմության կաբինետը անվանված է Արցախյան պատերազմներում զոհված 6 ազատամարտիկների անունով, ՆԶՊ՝ դպրոցի զոհված ազատամարտիկ Դավիթ Սարապյանի անվամբ անվանակոչված, տեխնոլոգիա /2/, երաժշտություն, շախմատ /, 4 առանձին դասասենյակ օտար լեզվի կիսվող խմբերի համար, 1՝ հայերենի, 5 ռեսուրսային կաբինետ՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների աջակցության համար, 27 դասասենյակ, որոնցից 3-ը ունեն նաև խաղասենյակներ, հանդիսության դահլիճ, Դավիթ Սարապյանի հերոսական անկյուն, հաղթանակների փառքի անկյուն, առանձին էլեկտրոնային հրաձգարան,զենք պահելու սենյակ՝ճաղավանդակած դռնով, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության՝ արդի պահանջներին համապատասխանող լաբորատորիա /միայն չկա օդափոխիչ/ ,նախակրթարան, երկարօրյա խմբի դասասենյակ՝ իր խաղասենյակով, ուսուցիչների հանգստի սենյակ: Դպրոցում գործում է մշտական համացանցային կապ:

Դպրոցի գլխավոր մասնաշենքը հիմնանորոգվել է 2011-2012թթ-ին դպրոցի շրջանավարտ, բարերար Ռուբեն Վարդանյանի կողմից, իսկ աջակողմյանը՝ մյուս նվիրյալ շրջանավարտների կողմից: Կան նաև կահավորված դասասենյակներ շրջանավարտների անուններով: Մինչ այսօր կատարվել են մի քանի մասնակի վերանորոգումներ՝ հատկապես միջանցքներն ու զուգարանները:

Դպրոցն ունի լոկալ ջեռուցման անվտանգ համակարգ: Կաթսայատունն ապահովում է դպրոցի կենտրոնական ջեռուցումը: Դպրոցի բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին: Դպրոցի միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում նույնպես ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

Դպրոցի երկու մասնաշենքերի բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով:

**Դպրոցի առաքելության և զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները և նյութատեխնիկական պարագաներն առկա են**

Ջոն Կիրակոսյանի անունը կրող կաբինետը գտնվում է Կենտրոնական մասնաշենքի առաջին հարկում: Կողքին գտնվում է տնօրենի կաբինետը: Նույն հարկում է գտնվում դպրոցի նախակրթարանը՝ իր առանձին սանհանգույցով:

Դիտարկման ամսաթիվ 23.06.2023թ.

| Դասասենյակի համարը | Դասասենյակի մակերեսը (քմ) | Սեղան-նստարանների դասավորվածության ձևը(շարքերով,շրջանաձև,T-աձև, П-աձև,խառը) | Սեղան-նստարաններիթիվը | Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորություններ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դասասենյակ N1, 1[1] դասար. | 37,4<br>խաղասենյակ՝ 18,2քմ | Շարքերով | Սեղան 18<br>աթոռ 35 | 66սմ |
| Դասասենյակ N2, 1[2] դասար. | 38,5քմ<br>18 քմ խաղասենյակ | Շարքերով | Սեղան 16<br>աթոռ 32 | 65 սմ |
| Դասասենյակ N 3, 1[3] դասար. | 40,7քմ<br>խաղասենյակ 16.4քմ | Շարքերով | Սեղան 17<br>Աթոռ 34 | 70սմ |
| Դասասենյակ N4, 2[1] դասար. | 37.4քմ | Շարքերով | Սեղան 16<br>Աթոռ 32 | 70սմ |
| Դասասենյակ N5, 2[2] դասար. | 37.4քմ | Շարքերով | Սեղան14<br>Աթոռ 28 | 70սմ |
| Դասասենյակ N6, 2[3] դասար. | 37.4 քմ | Շարքերով | Սեղան15<br>Աթոռ 30 | 70սմ |
| Դասասենյակ N7, 3[1] դասար. | 35.7 քմ | Շարքերով | Սեղան15<br>Աթոռ 29 | 70սմ |
| Դասասենյակ N8, 3[2] դասար. | 38.5 քմ | Շարքերով | Սեղան 16<br>Աթոռ 32 | 70սմ |
| Դասասենյակ N9, 3[3] դասար. | 35.7 քմ | Շարքերով | Սեղան 17<br>Աթոռ 34 | 70սմ |
| Դասասենյակ N10, 4[1] դասար. | 35.7 քմ | Շարքերով | Սեղան 18<br>Աթոռ 35 | 70սմ |
| Դասասենյակ N11, 4[2] դասար. | 35.7 քմ | Շարքերով | Սեղան 16<br>Աթոռ 32 | 70սմ |
| Դասասենյակ N12, 4[3] դասար. | 35.7 քմ | Շարքերով | Սեղան 14<br>Աթոռ 28 | 70սմ |
| Դասասենյակ N13, 5[1] դասար. | 37.4 քմ | Շարքերով | Սեղան15<br>Աթոռ 29 | 70սմ |
| Դասասենյակ N14, 5[2] դասար. | 38.5 քմ | Շարքերով | Սեղան17<br>Աթոռ 33 | 70սմ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դասասենյակ N15, $5^3$ դասար. | 35.7 քմ | Շարքերով | Սեղան 34 Աթոռ 34 | 70սմ |
| Դասասենյակ N16, $6^1$ դասար. | 48.1 քմ | Շարքերով | Նստատեղով նստարան 15 | 70սմ |
| Դասասենյակ N17, $6^2$ դասար. | 38.5 քմ | Շարքերով | Սեղան 13 Աթոռ 26 | 70սմ |
| Դասասենյակ N18, $6^3$ դասար. | 37.5 քմ | Շարքերով | Սեղան 16 Աթոռ 31 | 70սմ |
| Դասասենյակ N19, $7^1$ դասար. | 47.7 քմ | Շարքերով | Սեղան 15 Աթոռ 30 | 70սմ |
| Դասասենյակ N20, $7^2$ դասար. | 50.6 քմ | Շարքերով | Նստատեղով նստարան 16 | 70սմ |
| Դասասենյակ N21, $7^3$ դասար. | 48.8 քմ | Շարքերով | Նստատեղով նստարան 15 | 70սմ |
| Դասասենյակ N22, $8^1$ դասար. | 49.5 քմ | Շարքերով | Սեղան 15 Աթոռ 30 | 70սմ |
| Դասասենյակ N23, $8^2$ դասար. | 49,2 քմ | Շարքերով | Սեղան 15 Աթոռ 30 | 70սմ |
| Դասասենյակ N24, $8^3$ դասար. | 48,6 քմ | Շարքերով | Սեղան 15 Աթոռ 30 | 70սմ |
| Դասասենյակ N25, $9^1$ դասար. | 44,0 քմ | Շարքերով | Սեղան13 Աթոռ 26 | 70սմ |
| Դասասենյակ N26, $9^2$ դասար. | 34.5քմ | Շարքերով | Սեղան 13 Աթոռ 25 | 70սմ |
| Դասասենյակ N27, $9^3$ դասար. | 50քմ | Շարքերով | Սեղան 12 Աթոռ 24 | 70սմ |

Դպրոցի օգտագործվող կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, բարվոք վիճակում է: Դպրոցում առկա զույքը աշակերտական սեղան – աթոռների դասավորության մեծ հնարավորություններ չի ստեղծում: Աշակերտական սեղանները նախատեսված են երկու աշակերտի համար: Երկու դասասենյակների, քիմիայի, ֆիզիկայի, կիսվող դասասենյակների նստարանները մեկական են, որոնք շատ հարմար են անհատական և խմբային աշխատանքի համար: Փոխներգործուն մեթոդներով աշխատելիս ուսուցիչն առանց դժվարության փոխում է դասավորությունը և ստանում իր դասի մտահղացմանը հարմար

աշխատատեղեր: Դպրոցը պարբերաբար ձեռք է բերում նոր նստարաններ՝ արդեն մեկ տեղանոց, որը հեշտացնում է ուսուցչի աշխատանքները խմբային կամ համագործակցային աշխատանքներ կատարելիս: Դպրոցի դասարաններում աշակերտական սեղան-նստարանները հիմնականում դասավորված են երեք շարքով:

Դպրոցի բոլոր դասասենյակները կահավորված են, պատուհաններին ժամանակակից շերտավարագույրներ են, բոլոր դասարաններում փակցված են ազգային դրոշն ու զերբը, միջին դպրոցի դասարաններից մեծամասնությունն ունի էլեկտրոնային գրատախտակ իրենց համակարգիչներով, իսկ տարրական դպրոցի դասարաններից մեծամասնությունում կան երաժշտական կենտրոններ:

Դպրոցի կաբինետները կահավորված են, հագեցած համակարգչով, ցրիչով, էլեկտրոնային գրատախտակով, լաբորատոր հնարավորին սարքավորումներով, հարուստ դիդակտիկ նյութերով:

Սպորտդահլիճները հագեցած են սպորտային գույքով: Ռեսուրս սենյակներն ունեն համապատասխան կահավորանք, դիդակտիկ նյութեր, սեղանի խաղեր, ավազաթերապիայի և արտթերապիայի /կավագործություն/ հատուկ սեղաններ, թրծող վառարան: Դպրոցի աջակողմյան խաղահրապարակը կարող է ծառայել և՛ ֆուտբոլի, և՛ բասկետբոլի, և՛ վոլեյբոլի համար, իսկ ձախակողմյանը՝ ռազմահայրենասիրական դաստիարակության համար նախատեսված ռազմական վարժությունների համար հատուկ դաշտ է:

**Դպրոցն ունի երկու ուսուցչանոց՝** կրտսեր դպրոց՝ 38.5 քմ, միջին՝ 52.9 քմ ուսուցիչների և 12.3 քմ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի համար:

**Դպրոցն ունի նկուղներ և կիսանկուղներ, որոնք ծառայում են որպես ապաստարաններ: Դպրոցի ապաստարաններից օգտվում է նաև համայնքը: Դպրոցը շրջապատված է մի քանի բարձրահարկ շենքերով, որոնք չունեն նկուղներ, արտակարգ իրավիճակների ժամանակ դպրոցի նկուղները նախատեսված են նաև այդ բնակիչների համար:**

| | **Նկուղներ / մ²** | **Կիսանկուղներ / մ²** |
|---|---|---|
| Կենտրոնական մասնաշենք | 170 քմ ազատ տարածք | 80 քմ |
| Աջակողմյան մասնաշենք | 100 քմ | 150 քմ |
| Ձախակողմյան մասնաշենք | | 80 քմ |

**Դպրոցի սանհանգույցները 12-ն են, բոլորը վերանորոգված են, սակայն հարմարեցված չեն ԿԱՊԿ ունեցող սովորողների համար: 4 զուգարաններում կան բռնակներ հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների համար:**

| Շենքի հարկը | Սանհան-գույցների թիվը | Աղջիկների | Տղաների | Հիգիենայի պարագաների առկայությունը | Հարմարեցվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին |
|---|---|---|---|---|---|
| I /կենտ/ | 2 | 1 | 1 | Առկա է | Առկա չէ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I/աջակ./ | 2 | 1 | 1 | Առկա է | Առկա է մասամբ |
| II /կենտ./ | 2 | 1 | 1 | Առկա է | Առկա է մասամբ |
| II/աջակ./ | 2 | 1 | 1 | Առկա է | Առկա է մասամբ |
| III/կենտ./ | 2 | 1 | 1 | Առկա է | Առկա չէ |
| Աջակողմյան կիսանկուղ | 2 | 1 | 1 | Առկա է | Առկա չէ |

**Դպրոցն ունի բուժսպասարկման կետ:** Առաջին բուժօգնության միջոցներն ու դեղերը առկա են: Դպրոցում կա **բուֆետի** համար նախատեսված տարածք՝ 87.7 քմ և 29.6 քմ, որը մասնակի վերանորոգման կարիք ունի, լուսավոր է, ունի սառը և տաք հոսող ջուր, սակայն այն արդեն 2 տարի է չի շահագործվում: Բուֆետի սեղան-աթոռները ապահովում է վարձակալը:

**Դպրոցի առաքելությունը** հաջողակ, որակյալ, ստեղծագործ, առողջության նկատմամբ գիտակից վերաբերմունք ունեցող մարդու ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է: Դպրոցը երեխաների մեջ կատարելագործվելու, ավելի լավը լինելու պահանջմունք է դաստիարակում, սովորեցնում լինել մարդկանց նկատմամբ ուշադիր, շփվող, հանդուրժող: Դպրոցի առաքելությունը նաև սովորողների կրթական պահանջմունքների բավարարումն է, կրթության և դաստիարակության միջոցով իր կենսական ընտրությունը կատարող, միջավայրի փոփոխվող պայմաններին հարմարվող, սոցիալական և մասնագիտական կյանքում իր ունակություններն ու հնարավորությունները սթափ գնահատող անհատի ձևավորումը:

**Դպրոցի նպատակը** պետք է լինի ինքնուրույն, լավ գիտելիքներ և սոցիալական հմտություններ ունեցող անհատի դաստիարակությունը: Դպրոցի աշակերտը պետք է կարողանա հարցեր առաջադրել և լուծումներ գտնել, փաստարկել իր դիրքորոշումը, ինքնակատարելագործվել, արդյունավետ աշխատել, գնահատել իր աշխատանքի արդյունքը: Դպրոցի աշակերտը պետք է շարունակի սովորել, պատրաստ լինի պատասխանատու որոշումների, կարողանա շփվել ու համագործակցել, քննադատաբար մտածել: Դպրոցի տնօրինությունը և մանկավարժական ողջ համակազմը պետք է ղեկավարվի հաջողության հասնելու գաղափարով:

**Զարգացման ծրագրի նպատակներն իրականացնելու համար կան հետևյալ նախապայմանները՝**

**Շենքային պայմանների ուժեղ կողմեր**

- Դպրոցը հիմնանորոգված է
- Դպրոցի կենտրոնական մասնաշենքը ճարտարապետական կառույց է
- Դպրոցի մասնաշենքերի տարածքները փողոցից առանձնացված են մետաղական

ցանկապատերով և անվտանգ են սովորողների ազատ տեղաշարժման համար:

- Առկա է դպրոցի մուտքերը, դիմացի բակը, մարզահրապարակները, ինչպես նաև միջանցքները տեսահսկման համակարգ:
- Հակահրդեհային անվտանգության լրակազմից կա երկու հատուկ վահանակ կենտրոնական մասնաշենքի առաջին և երրորդ հարկում և երեք մասնաշենքերի բոլոր հարկերում կան կրակմարիչներ՝ թվով 20, տանիքը պատված է հրակայուն նյութերով:
- Առաջին և երկրորդ հարկերի պատուհաններն մետաղյա ճաղավանդակներ ունեն
- Դպրոցում կա ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ԵՓ վարչության պետի և դպրոցի տնօրենի կողմից հաստատված քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույց
- Դպրոցն ունի միջազգային նորմերին համապատասխանող 2 մարզադահլիճ /4-րդ հարկում և 1 մարզադահլիճ 1-ին հարկում
- Դպրոցի նկուղները ազատ են, մաքուր և կարող են ծառայել որպես ապաստարաններ
- Դպրոցն ունի բարեկարգ պայմաններ, կահավորված դասասենյակներ, կաբինետներ, ժամանակակկից լաբորատորիա, բուֆետ, գրադարան, բուժկետ
- Գրադարանը ունի օդափոխության համակարգ

**Շենքային պայմանների թույլ կողմեր**

- Դպրոցի կենտրոնական մասնաշենքի հատակները բաղդատից են:
- Դպրոցի սեյսմակայունությունը գնահատված չէ:
- Մասնաշենքերի տեխնիկական վիճակը գնահատված է 2-րդ աստիճանով
- Նախորդ ուստարում տեղի է ունեցել աջակողմյան մասնաշենքի 4-րդ հարկի պատի արտաքին շերտի քարաթափություն
- Դպրոցում չկա հրշեջ-ծորակ, իսկ կրակմարիչներից մի քանիսը ժամկետն անց են
- Արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգ չկա
- Մետաղյա ճաղավանդակները շարժական չեն:
- Դպրոցի շենքային պայմանները ոչ լիարժեք են հարմարեցված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին՝ ներսում չկա թեքահարթակ:
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված սանհանգույցներ չկան, բայց կան բռնակներ:

- Մարզադահլիճների 4-րդ հարկում գտնվելը դժվարացնում է հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների մասնակցությունը ֆիզկուլտուրայի ժամերին:
- Մարզադահլիճները չունեն օդափոխության համակարգ
- Սանհանգույցներում ծորակների անընդմեջ փոխարինում
- Նկուղային հարկի հավաքովի ծածկի սալերը ենթակա են փոխարինման
- Հանդերձարանները չեն օդափոխվում

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
| --- | --- |
| **Շինության** ընդհանուր մակերեսը՝ 7514 քմ<br>**Միջանցքները**՝ 1610 քմ<br>27 **դասասենյակներ**՝ 1156.7 քմ<br>**Լաբորատորիաներ**՝<br>Կենսաքիմիա՝ 48.8 քմ<br>Քիմիա՝ 15.7 քմ<br>Կենսաբանություն՝ 16.3 քմ<br>Ֆիզիկա՝ 18 քմ<br>**Առարկայական կաբինետներ**՝<br>Քիմիա՝ 74 քմ<br>Ֆիզիկա՝ 75 քմ<br>Կենսաբանություն՝ 60 քմ | **Կենտրոնական** մասնաշենքի հատակները բաղդատից են:<br>**Դպրոցի** մուտքի դռները ներս են բացվում, իսկ պատուհանների ճաղավանդակները շարժական չեն:<br>**Դպրոցը** սեյսմիկ կայուն չէ<br>**Քարաթափության** վտանգ կա<br>**Հրշեջ** ծորակի բացակայություն<br>Արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգի բացակայություն |

| | |
|---|---|
| ՆԶՊ՝ 42 քմ<br>Հրաձգարան՝ 30 քմ<br>Երաժշտություն՝ 49.5 քմ<br>Տեխնոլոլոգիա /աղջիկներ/ ՝30 քմ<br>Տեխնոլոգիա /տղաներ/՝ 30 քմ<br>Պատմության՝ 49.3 քմ<br>Շախմատ՝ 37.5 քմ<br>**Կիսվող առարկաների համար նախատեսված սենյակներ՝**<br>Հայերեն՝ 48.6<br>Ռուսերեն՝ 50.4, 50.6<br>Անգլերեն՝ 38.5, 37.5<br>**Գրադարան՝**<br>Գեղարվեստ.գրքեր, դասագրքեր՝ 54.70 քմ<br>Ընթերցասրահ՝ 62.7 քմ<br>**Մարզադահլիճներ՝**<br>Կենտրոնական՝ 315 քմ<br>Աջակողմյան՝ 432 քմ<br>Ձախակողմյան՝ 522 քմ<br>**Հանդերձարաններ՝**<br>Կենտրոնական՝ 10.6 քմ<br>Աջակողմյան՝ 24.4 /աղջիկներ/, 24.4 /տղաներ/<br>Ձախակողմյան՝ 22.5 /աղջիկներ/, 16.5 / տղաներ/<br>**Ֆիզկուլտուրայի ուսուցիչների և գույքի համար** | **Բուֆետը** մասնակի վերանորոգման կարիք ունի, 2 տարի է չի շահագործվում: Բուֆետի սեղան-աթոռները ապահովում է վարձակալը:<br>**Ժամկետնանց** կրակմարիչների առկայություն<br>**ԿԱՊԿ ունեցող** սովորողների համար շենքային պայմանների անհարմարավետություն<br>**Հենաշարժողական** խնդիրներ ունեցող սովորողների համար զուգարանների բացակայություն<br>**Աղջիկների** զուգարաններում հայելիների բացակայություն<br>**Հանդերձարաններում** օդափոխիչների բացակայություն<br>**Հանդերձարանի** բացակայություն ազգային երգ ու պարի դահլիճում<br>**Հանդիսության** դահլիճում օդափոխիչների բացակայություն<br>**Խցանված** ջրատար խողովակներ<br>**Վերելակի** բացակայություն |

| | |
|---|---|
| **առանձնացված սենյակներ**՝ 50.6 քմ<br>**Սպորտային զույքի համար առանձին սենյակներ**՝ 37.6 քմ, 38.3 քմ<br>**Ազգային երգ ու պարի դահլիճ**՝ 170 քմ<br>**Երկարօրյայի սենյակ իր խաղասենյակով**՝ 37.4 քմ և 18 քմ<br>**Ռեսուրս սենյակներ**՝ 40 քմ, 36.7 քմ,34.8 քմ,18.3 քմ, 17.4 քմ<br>**Արտթերապիայի սենյակ**՝ 37.4 քմ<br>**Ձեռարվեստի խմբակի համար նախատեսված սենյակ**՝ 36 քմ<br>**Գեղագիտական** խմբակի համար տրամադրված սենյակներ՝դաշնամուր,սոլֆեջիո՝ 15.7 քմ և 19.5 քմ<br>**Ուսուցչանոցներ**՝ 103.7 քմ<br>Հանդիսության դահլիճ՝ 221.4 քմ<br>**Ջոն Կիրակոսյանի անունը կրող կաբինետ**՝32.6 քմ<br>**Տնօրենի կաբինետ**՝<br>Ընդունարան՝ 15.7 քմ<br>Նստատեղ՝ 45.7 քմ<br>Առանձնասենյակ ՝ 12.7 քմ<br>Արխիվ՝ 14.5 քմ<br>**Հաշվապահի և տնտեսական գծով տնօրենի տեղակալի** սենյակ՝ 10.5 քմ<br>**Նախակրթարան**՝ 47 քմ և 47.7 քմ | |

**Ռիսկեր՝**

- Երկրաշարժ
- Բնական կլիմայական աղետներ
- Շենքային պայմանների վատացում
- Նյութատեխնիկական բազայի մաշվածություն
- Հին ջրագծերի առկայություն
- Կոյուղագծերի և ջրագծերի ասֆալտի տակ տեղակայում
- Անձնակազմի և բարձր դասարանների աշակերտների չտիրապետելը կրակմարիչների օգտագործման կարգին
- Աշակերտ թվի աճի պակաս
- Վթարի ժամանակ պահուստային դռների չբացվելը

**Ռիսկերը մեղմացնող կամ վերացնող գործողություններ՝**

- Տարին երկու անգամ կազմակերպել ԱԻՆ-ի հետ ուսումնական տարհանման միջոցառումներ
- Կազմակերպել իրազեկման դասընթացներ դասղեկի ժամին բնական աղետների մասին
- Մշտադիտարկել, կատարել իրավիճակի վերլուծություն
- կազմակերպել միջոցառումներ նպաստելու վերացնել թերությունները
- անընդմեջ կապի մեջ լինել Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի հետ
- համագործակցել համակարգողի հետ ֆինանսական միջոցների շուրջ
- բարձրաձնել դպրոցի վարկանիշը
- համագործակցել հարևան մանկապարտեզների հետ աշակերտ թվի ավելացմանը 2023-2028թ.թ.-ի ընթացքում
- պարբերաբար ստուգել պահուստային դռների գործածելիությունը

**Իրականացնող գործողությունների պատասխանատու անձիք**՝ Համակարգող, զինղեկ

**Ենթակառուցվածքները**՝ տնօրեն, ԿԱԴԱ համակարգող , տեղակալներ, մ/մ նախագահներ, մանկավարժներ

**Ժամանակացույց** - 2023-2028թ.թ.

**Վերահսկող անձիք –** քաղաքապետարան, համակարգող, տնօրեն

**Գնահատում** – 1.Միջոցներ չեն ձեռնակրկվել – 0 միավոր

2.Ձեռնարկվել են միջոցներ մասամբ մինչև 25% – 1 միավոր

3.Ձեռնակրվել են միջոցներ /շենք -շին., ենթակառույց / մինչև 50%-2 միավոր

4. Ձեռնակրվել են միջոցներ /շենք -շին., ենթակառույց / մինչև 75%-3 միավոր

5. Ձեռնարկվել են միջոցներ /շենք-շին.,ենթակառույց/ մինչև 90% - 4 միավոր

6. Ձեռնարկվել են միջոցներ/շենք-շին.,ենթակառույց/ մինչև 100% - 5 միավոր

## Նյութատեխնիկական բազա

**Դպրոցը իր գործունեության ընթացքում պարբերաբար պետ բյուջեից ձեռք է բերել նյութատեխնիկական, ուսումնամեթոդական անհրաժեշտ պարագաներ, սարքեր, գործիքներ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքները իրականացնելու համար : Անհրաժեշտ նյութերը ձեռք են բերվել յուրաքանչյուր ոլորտներում կատարված գործողությունների արդյունքների վերլուծության հիման վրա՝ բաց դասերի, համադպրոցական միջոցառումերի , վիկտորինաների, ԿԱՊԿ ունեցող սովորողների աջակցության ծառայությունների, սովորողների խրախուսումների, գիտելիքների ստուգման, ավարտական քննությունների, սպորտլանդիաների նաև տարածքային, քաղաքային , առարկայական օլիմպիադաների:**

**Այս ամենի վերլուծության արդյունքում գերակա նպատակներից է դպրոցի կողմից խնայված ազատ մնացորդային գումարների հաշվին ձեռք բերել ժամանակակից սարքավորումներ , գերիզորացնել նյութատեխնիկական բազան :**

**Նոր կարգի համաձայն, նախատեսում եմ համագործակցել վարչատնտեսական համակարգողի հետ և համատեղ կայացնել խելամիտ որոշումներ դպրոցի ուսումնանյութական բազան համալրելու գործընթացում:**

**Նպատակ**

- ✓ Ուսման որակի բարձրացում, ուսուցիչների և սովորողների ոգեշնչում նյութատեխնիկական բազայի հարստացման միջոցով
- ✓ ուսումնական գույքի, ժամանակակից համակարգչային սարքավորումների շարունակական արդիականացում
- ✓ համացանցի որակյալ հասանելիության ապահովում
- ✓ մարզադահլիճների, թվային լաբորատորիաների և գրադարանների, նորարարական ոճով կահավորում
- ✓ անհատական և թիմային աշխատանքների համար տարածքների ստեղծում
- ✓ ԿԱՊԿ ունեցող սովորողներին աջակցություն ցուցաբերելու համար/ՏՄԱԿ-ի մասնագետ/ տարածքների ստեղծում

- ✓ ԿԱՊԿ ունեցող սովորողների աջակցության համար իրենց կարիքների խելամիտ հարմարեցումներ ապահովելու սարքերի ձեռք բերում
- ✓ Խրախուսել մանկավարժներին և սովորողներին

**Խնդիր**

- ➢ Համալրել լաբորատորիաները նյութերով և սարքերով, դասարանները՝ ուսումնական գույքով, դիդակտիկ նյութերով,քարտեզներով
- ➢ Ապահովել որակյալ ինտերնետ կապ բոլոր մասնաշենքերում
- ➢ կահավորել մարզադահլիճները և հարստացնել մարզական գույքը
- ➢ սովորողների միջոցով փորձել թվայնացնել գրադարանում առկա ժամանակակից գրականությունը
- ➢ Ապահովել և ստեղծել տարածքներ ԿԱՊԿ ունեցող սովորողներին աջակցություն ցուցաբերելու համար /ՏՄԱԿ-ի մասնագետ/
- ➢ Ներկայացնել համակարգողին ապահովելու համար ԿԱՊԿ ունեցող սովորողների աջակցության համար իրենց կարիքների խելամիտ հարմարեցումները

**Նախակրթարանի գույք**
**Նախակրթարանը բավարարված է անհրաժեշտ գույքով:**

| **Հ/հ** | **Գույք և սարքավորումներ** | **Քանակ** |
|---|---|---|
| 1 | Սեղաններ մանկական | 8 |
| 2 | Աթոռներ մանկական | 26 |
| 3. | Գրապահարան | 2 |
| 4. | Հագուստի պահարան 4 դռնանի | 5 |
| 5. | Մանկավարժի սեղան | 1 |
| 6. | Մանկավարժի աթոռ | 1 |
| 7. | Խաղալիքի պահարան | 2 |
| 8. | Մանկական բազմոց | 2 |
| 9. | Գրատախտակ | 1 |
| 10. | Շերտավարագույր | 10 |
| 11. | Գորգ | 2 |
| 12. | Հեռուստացույցի պատի կախիչ | 1 |
| 13. | Փոշեկուլ | 1 |
| **2** | **Ուսումնական և ուսուցողական նյութեր** | |
| 1 | Գրականություն / մանկական և մեթոդիկա/ | 1 |
| 2. | Գրենական պիտույքներ | 1 |
| 3. | Խաղալիքներ | 1 |
| 4. | Սպորտային պարարգաներ | |

Լաբորատորիաներ

Լաբորատորիաները բավարարված են բավարար գույքով:

| Հ/հ | Գույք և սարքավորումներ | Քանակ |
|---|---|---|
| 1. | Ֆիզիկայի,քիմիայի դպրոցական լաբորատոր պարագաներ | 1 կոմպլեկտ |
| 2. | Կենսաբանության դպրոցական լաբորատոր պարագաներ | 1 կոմպլեկտ |
| 3. | Ձագար | 20 |
| 4. | Կոն | 16 |
| 5. | Ապակե կոլբա | 10 |
| 6. | Սպիրայրոց | 10 |
| 7. | Թորման սարք | 1 |
| 8. | Կիպի ապարատ | 1 |
| 9. | Կշեռք | 5 |
| 10. | Հարթահարթակ կոլբաներ 50մլ | 25 |
| 11. | Հարթահարթակ կոլբաներ 100 մլ | 25 |
| 12. | Հարթահարթակ կոլբաներ 250 մլ | 25 |
| 13. | Բաժակներ 50 մլ | 25 |
| 14. | Բաժակներ 100 մլ | 25 |
| 15. | Բաժակներ 150 մլ | 25 |
| 16. | Ձագարներ 5 սմ | 25 |
| 17. | Ձագարներ 7.5 սմ | 25 |
| 18. | Ձագարներ 10 սմ | 25 |
| 19. | Չափակոլբաներ 50մլ | 25 |
| 20. | Չափակոլբաներ 100մլ | 25 |
| 21. | Չափակոլբաներ 150 մլ | 25 |

| | | |
|---|---|---|
| **22.** | **Ազոտական թթու** | **1** |
| **23.** | **Ֆենոֆտալեին** | **0.2** |
| **24.** | **Մեթիլ օրանժ** | **0.2** |
| **25.** | **Աղաթթու** | **1** |
| **26.** | **Ծծմբական թթու** | **1** |

**Սպորտային գույք**
**Սպորտդահլիճները ապահոված են բավարար գույքով:**

| | Անվանում | քանակ |
|---|---|---|
| | Մարմնամարզական զուգափայտեր | 3 |
| | Խանրաձող | 1 |
| | Ձեռքի գնադակի դարպաս | 2 |
| | Ձողեր | 8 |
| | Պահարան մասնաբաժիններով | 3 |
| | Ֆուտբոլի գնդակ N5 OFFS | 1 |
| | Ֆուտբոլի գնդակ N4 OFFS | 2 |
| | Ֆուտբոլի գնդակ N5 ARMA | 2 |
| | Ֆուտբոլի ուսումնամեթոդական ձեռնարկ | 12 |

**Բուժկետ**
**Դպրոցի բուժկետը վերանորոգված է և հագեցած անհրաժեշտ պարագաներով:**

| | | |
|---|---|---|
| 1. | Գրասեղան | 1 |
| 2. | Աթոռներ | 3 |
| 3. | Թախտ | 1 |
| 4. | Կանգնած վարագույր | 1 |
| 5. | Գրապահարան | 1 |
| 6. | Դեղերի պահարան | 1 |
| 7. | Բժշկական սեղան ապակյա կափարիչով | 1 |
| 8. | Լվացարանակոնք | 1 |
| 9. | Դույլ՝ ոտքով բացվող կափարիչով | 1 |
| 10. | Բժշկական կշեռք | 1 |
| 11. | Հասակաչափ | 1 |
| 12. | Տոնոմետր (Ճնշումաչափ) | 5 |
| 13. | Ֆոնենդոսկոպ | 2 |
| 14. | Փոքր բիքս | 1 |
| 15. | Մեծ բիքս | 1 |
| 16. | Ռետինե լարան (ժգուտ) | 1 |

| | | |
|---|---|---|
| 17. | Միանվագ ներարկիչ և ասեղ | 20 |
| 18. | Նրբունելի (պինցետ) | 1 |
| 19. | Բժշկական ջերմաչափ/սովորական և էլեկտրոնային/ | 10/4 |
| 20. | Մկրատ | 3 |
| 21. | Ռետինե ջեռոց (գրելկա) | 1 |
| 22. | Պլաստմասե սառցապարկ | 2 |
| 23. | Երիկամաձև տեփուր (լոտոկ) | 1 |
| 24. | Անշարժացման միջոցներ (շինաններ) Կրամերի, Դիտերիխսի, պլաստմասսայից | 4 |
| 25. | Բժշկական պատգարակ | 2 |
| 26. | Բժշկական պայուսակ իր բոլոր պարագաներով | 1 |

**Ռեսուրս սենյակները**

**Ռեսուրս սենյակները կահավորված են և ապահովված անհրաժեշտ ուսումնանյութական պարագաներով:**

| Հ. | Ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը |
|---|---|---|---|
| | | | |
| 1 | Գունովոր մատիտ | տուփ | 25 |
| 2 | Նեյրոգործիք/աշտարակ ուղղահայաց/ | հատ | 5 |
| 3 | Ուսուցողական խաղ՝4-րդն ավելորդ է | հատ | 3 |
| 4 | Լոգոպեդական հայելի | Հատ | 2 |
| 5 | ՄԱՄ ուսուցողական խաղ /1,2,3/ | Հատ | 5 |
| 6 | Ռիթմիկ նեյրոխաղ՝Ճանապարհ | Տուփ | 3 |
| 7 | Մկրատ | Հատ | 5 |
| 8 | Պլաստիլին | Հատ | 5 |
| 9 | Նեյրոխաղ՝Լաբիրինտ | հատ | 3 |
| 10 | Նեյրոխաղ՝Թվեր,երկրաչափական պատկերներ/ | հատ | 5 |
| 11 | Զարգացնող խաղ՝փայտե տառեր | հատ | 5 |
| 12 | Ուսուցողական խաղ՝Տնակ | հատ | 5 |
| 13 | Ուսուցողական քարտեր մասնագիտություններ | Հատ | 5 |
| 14 | Ուսուցողական քարտեր տրանսպորտային միջոցներ | Հատ | 5 |
| 15 | Ուսուցողական քարտեր ճանաչիր տառերը | Հատ | 5 |
| 16 | Ուսուցողական քարտեր ճանաչիր մրգերը | Հատ | 5 |
| 17 | Ուսուցողական քարտեր բանջարեղեն | Հատ | 5 |
| 18 | Ուսուցողական քարտեր  ընտանի կենդանիներ | Հատ | 5 |
| 19 | Ուսուցողական քարտեր ծովային կենդանիններ | Հատ | 5 |

| | | | |
|---|---|---|---|
| 20 | Ուսուցողական քարտեր ճանաչիր գույները | Հատ | 5 |
| 21 | Ուսուցողական քարտեր երթևեկության կանոնները | Հատ | 5 |
| 22 | Փայտե ուսուցողական խաղ գիտելիքների արկղ | Հատ | 5 |
| 23 | Փայտե ուսուցողական խաղ աբակուս | Հատ | 5 |
| 24 | Նեյրոխաղ՝3D տետր հորիզոնական | հատ | 2 |
| 25 | Նեյրոխաղ՝3D տետր ուղղահայաց | հատ | 2 |
| 26 | Փայտե դոմինո | Հատ | 2 |
| 27 | Փափուկ գորգ-փազլ | Հատ | 2 |
| 28 | Փափուկ գորգ-փազլ | Հատ | 2 |
| 29 | Խաղալիք սպասքի հավաքածու | Հատ | 1 |
| 30 | Խաղալիք սպասքի հավաքածու | Հատ | 1 |
| 31 | Փայտե ՀՀ քարտեզ | Հատ | 2 |
| 32 | Գնդակ մեծ | Հատ | 5 |
| 33 | Գնդակ փոքր | Հատ | 5 |
| 34 | Ռելիեֆային գորգ Կարամելկա | Հատ | 2 |
| 35 | Ապակե մոլբերտ | Հատ | 1 |
| 36 | Շարժական երկկողմանի գրատախտակ | Հատ | 2 |
| 37 | Փայտե ստենդեր մոտորիկայի զարգացման համար | հատ | 3 |
| 38 | Բազկաթոռ տոպրակ | հատ | 10 |
| 39 | Փայտե գունավոր հաշվիչներ | հատ | 5 |
| 40. | Լոտո զարգացնող խաղ | հատ | 5 |
| 41. | Ուսուցողական խաղ՝Փոքրատառ | հատ | 2 |
| 42. | Ջրաներկ վրձիններով | հատ | 10 |
| 43. | Մարիամ Մոնտեսորի զարգացնող խաղեր | հատ | 3 |
| 44. | Ստվերային թատրոնի պարագաներ | հատ | |
| 45. | Քաղաքավարության կանոնները, անվտանգ քաղաք, հագուստ, մարմնի մասերը, մագնիսական խաղեր | հատ | |
| 46. | Սենսորային ճանապարհ, գորգ | հատ | |
| 47. | Խելացի զանգակներ | հատ | |

**Գրադարան**

**Գրադարանին տրամադրված է 2 սենյակ՝ գեղարվեստական գրքերի և դասագրքերի համար և ընթերցասրահ: Գրադարանը հագեցած է ռուսերեն և հայերեն գեղարվեստական գրքերով:**

**Գրադարանային ֆոնդը և գրադարանի գործունեությունն ըստ դասագրքերի կառավարման ավտոմատացված համակարգի**

| Ուստարի | Դասագիրք | | Գեղարվեստական գրքեր |
|---|---|---|---|
| | Ստացված | Առկա | |

| | | | |
|---|---|---|---|
| 2018-2019թթ. | 4660 | 4660 | 27000 |
| 2019-2020թթ. | 1353 | 1353 | 27035 |
| 2020-2021թթ. | 2533 | 2533 | 27080 |
| 2021-2022թթ. | 3243 | 3243 | 27140, որից 40 կտոր նվիրաբերել է հանրային գրադարանը |
| 2022-2023թթ. | 3790 | 3852 | 27180, որից 27 կտոր դպրոցի գրադարանին նվիրաբերել է ԱԽ-ն |

**ՏՀՏ հագեցվածությունը**

**ՏՀՏ հագեցվածությունը համեմատած բավարար է, բայց այն ունի համալրման և ժամանակից պայմաններին համապատասխանեցնելու կարիք, քանի որ դրանց միջոցով կազմակերպվում են էլ ավելի որակյալ տեսանելի դասեր, որոնց կիրառումը ուսուցչին օգնում է ճանաչել և վերացնել ուսումնառության խոչընդոտները սովորողների մոտ: Այն հնարավորություն է տալիս նյութի ներկայացման ձևերի բազմազանություն, գործելու և գիտելիքները արտահայտելու բազմազան ձևեր և տարբեր ձևերով ներգրավելու բազմազանություն:**

| Հ/հ | Անվանում | հատ |
|---|---|---|
| 1. | Ինտերակտիվ էլեկտրոնային գրատախտակ | 5 |
| 2. | Համակարգիչ ամբողջը մեկում/All in one | 5 |
| 3. | Դյուրակիր համակարգիչ Dell | 2 |
| 4. | Դյուրակիր համակարգիրներ | 14 |
| 5. | Համակարգիչ HP ML 110 | 6 |
| 6. | Մոնիտոր HP L 1908 | 12 |
| 7. | Համակարգիչ Pentium 166 | 7 |
| 8. | Տպող սարք HP lazer Jet CL | 1 |
| 9. | Տպող սարք | 1 |
| 10. | Մոդեմ voice fax | 1 |
| 11. | Ցանցային HUBI | 1 |
| 12. | Պատճենահանող սարք՝ Canon iR-2016 | 1 |
| 13. | Համակարգիչ Pentium | 1 |
| 14. | Համակարգիչ Ակուստիկ | 1 |
| 15. | Մոնիտոր Samsung 550 | 1 |
| 16. | Պրինտեր HP DJ610C | 1 |
| 17. | Scanner HP ScanJet 3300 C | 1 |
| 18. | ինտերակտիվ հեղուկ բյուրեղյա դիսպլեյ | 3 |
| 19. | ցրիչ | 5 |

| | | |
|---|---|---|
| 20. | հեռուստացույց | 2 |

**Դպրոցն ունի փոխադրամիջոց /1 ավտոբուս/, որը նախատեսված է հատկապես ԿԱՊԿ ունեցող սովորողներին տեղափոխելու համար:**

| N | Դպրոցի համար | Պետ համարանիշ | Նույնականացման համար | գույն | Շահագործման տարեթիվ | Թողարկման տարեթիվ | Հաշվեկշիռ | Արժեքը (ներկայիս արժեքը ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Երևանի Զ. Կիրակոսյանի անվան հ. 20 հիմնական դպրոց »ՊՈԱԿ | 420LU01 | X96A64R42F0000861 | սպիտակ | 2018 | 2014 | 01.01. 2017 | 7266666,65 |

Ռիսկեր՝

-նյութատեխնիկական բազայի մաշվածություն

-կարիքների ոչ ճիշտ գնահատում

-անփույթ օգտագործում

-արտաբյուջետային ֆինանսների բացակայություն

**Ռիսկերը մեղմացնող կամ վերացնող գործողություններ՝**

- համագործակցել համակարգողի հետ համալրելու և նորարացնելու նյութատեխնիկական բազան
- համագործակցել մանկավարժների , աջակցություն ցույց տվող մասնագետների , ծնողների , սովորողների հետ՝ կարիքները ճիշտ գնահատելու գործընթացում
- կազմակերպել հետևողական վերահսկողություն , հաճախակի մշտադիտարկումներ
- աջակցել դպրոցի աշխատանքներին՝ նյութատեխնիկական բազան ճիշտ և արդյունավետ օգտագործելու նպատակով

**Գնահատում՝**

1. Միջոցներ չեն ձեռնակրկվել – 0 միավոր

2. Ձեռնարկվել են միջոցներ մասամբ մինչև 50% – 1 միավոր

3. Ձեռնարկվել են միջոցներ /շենք -շին., ենթակառույց. / մինչև 80%-3 միավոր

4. Ձեռնակրվել են միջոցներ /շենք -շին., ենթակառույց. / մինչև 100%-4 միավոր

## Կառավարման և խորհրդակցական մարմինները

**Դպրոցի կառավարման մարմիններն են՝**

1) հիմնադիրը.
2) նախարարությունը, Երևանի քաղաքապետը
3) կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը
4) դպրոցի տնօրենը

Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինը՝ **խորհուրդը** բաղկացած է 9 անդամներից, նախորդ 5 տարիների ընթացքում խորհրդի կազմը պարբերաբար փոխվել է օրենքով սահմանված կարգով: Ներկայացնում եմ քաղաքապետի կողմից հաստատված դպրոցի կառավարման խորհրդի վերջին կազմը:

**Նպատակ**

- ✓ **ա**պահովել կառավարման արդյունավետությունը և թափանցիկությունը
- ✓ նպաստել խորհրդի անդամների ակտիվությանը
- ✓ զարգացնել խորհրդի անդամների կառավարման կարողություններն ու հմտությունները

**Խնդիր**

- ➢ համագործակցել Կենտրոն վարչական շրջանի տարբեր բաժինների հետ և ակտիվացնել ՏԻՄ կողմից ընտրված խորհրդի անդամներին

- ընդլայնել համագործակցությունը խորհրդի անդամների հետ, ապահովել խորհրդի աշխատանքների տեղեկատվությունը, նպաստել արդյունավետ որոշումներ կայացնելուն
- մասնակցել խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
- օգտագործել Խորհրդի անդամ Երևանի քաղաքապետարանի, ԿԳՄՍՆ և ՏԻՄ ներկայացուցիչների ներուժը զարգացման ծրագրի իրականացման ժամանակահատվածում
- ձեռնարկել միջոցառումներ կառավարման մարմնի անդամների կարողությունները զարգացնելու
- համակողմանի լուծել խնդրահարույց հարցերը
- աջակցել խորհրդի անդամի նախաձեռնողականությունը
- ապահովել խորհրդի աշխատանքների թափանցիկությունը

**<<Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման կոլեգիալ մարմնի՝ խորհրդի գործող կազմի տվյալներ**

| Դպրոցի մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ | Դպրոցի ծնողական խորհրդի ներկայացուցիչ | Երևանի քաղաքապետի ներկայացուցիչ | | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարարի ներկայացուցիչ | |
|---|---|---|---|---|---|
| | | Ազգանուն, անուն հայրանուն | Պաշտոն | Ազգանուն, անուն հայրանուն | Պաշտոն |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. Սարգսյան Լյալյա Ռոլանդի<br>091 921 412<br>lyalya.sargsyan62@gmail.com<br><br>2. Ասատրյան Օֆելյա Ռուբենի<br>099 452 386<br>ofelya1976@mail.ru | 1. Խաչատրյան Օֆելյա Աշոտի<br>091 051<br>opheliakhachatrian@gmail.com<br><br>2. Խաչատրյան Նարինե Խաչատուրի<br>077 499 437<br>narkhac85@gmail.com | 1. Սերոբյան Սերգեյ Մամիկոնի<br>094 555 009<br>sergey.serobyan@yerevan.am<br><br>2. Մնացականյան Էդգար Վահագնի<br>077 149 296<br>edgar95-13@mail.ru<br><br>3. Բաբաջանյան Հովհաննես Բաբկենի<br>093 999 939<br>hovbab@gmail.com | 1. Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի օգնական<br><br>2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության տարածքային առաջին բաժնի 1-ին կարգի մասնագետ<br><br>3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության գլխավոր մասնագետ<br><br>4. Երևանի Կենտրոն վարչական շրջանի | 1. Գրիգորյան Վարսենիկ Ավետիքի<br>077 228 108<br>varsenikgrigoryan@mail.ru | 1. ՀՀ ԿԳՄՍ նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 4. Աբրահամյան Ռուզաննա Գագիկի 093 051 515 r.abrahamyan@mail.ru | ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարանային շենքերի կառավարման մարմինների աշխատանքների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ | | |

Խորհրդի հերթական նիստերը գումարվել են սահմանված պարբերականությամբ, ներկա են եղել առնվազն հինգ անդամ: Խորհրդի ոչ բոլոր անդամներն են իրականացրել իրենց լիազորությունները սահմանված կարգով, խորհրդի նիստերին, ելնելով աշխատանքի բնույթից, շատ են բացակայել քաղաքապետարանի կամ նախարարության ներկայացուցիչները, լուծումը եղել է ժողովներին հեռավար մասնակցությունը: Խորհրդի բոլոր նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել է դպրոցի տնօրենը:

2018-2019 ուստարում հրավիրվել է 3 խորհրդի նիստ
2019-2020 ուստարում՝ 3 խորհրդի նիստ
2020-2021 ուստարում՝ 3 խորհրդի նիստ
2021-2022 ուստարում՝ 5 խորհրդի նիստ
2022-2023 ուստարվա ընթացքում մինչ այսօր՝ 3 խորհրդի նիստ:

Օրակարգերում բարձրաձայնվել են բոլոր անհրաժեշտ հարցերը: Դրանք տեղադրված են նաև դպրոցի պաշտոնական կայք էջում:

- ❖ խորհուրդը հաստատել է իր աշխատակարգը, դպրոցի ներքին կարգապահական կանոնները, կազմակերպական կառուցվածքը
- ❖ քննարկել և հավանություն է տվել դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին տնօրենի ներկայացմամբ
- ❖ քննարկել է ՈՒԴԱՏՊ-ի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների հաշվետվությունները, ներքին գնահատման արդյունքները տնօրենի ներկայացմամբ
- ❖ իրականացրել է վերահսկողություն դպրոցի զարգացման ծրագրի կատարման և տնօրենի ընթացիկ գործունեության նկատմամբ
- ❖ տնօրենի առաջարկությամբ հավանություն է տրվել պետբյուջեից ձեռք բերելու դյուրակիր համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակներ, ցրիչներ, ինտերակտիվ հեղուկ բյուրեղյա դիսպլեյներ, ինչպես նաև պարբերաբար ձեռք բերված բոլոր տեսակի անհրաժեշտ գույք
- ❖ հավանություն է տրվել վճարովի երկարօրյա ուսուցմանը, հաստատել վարձավճարի չափը, կրթական ծառայություններ իրականացնողների վճարի չափը, միջոցների բաշխման համամասնությունները
- ❖ կառավարության սահմանած Կարգի համաձայն խորհուրդը ընտրել է դպրոցի տնօրեն
- ❖ քննարկել և հավանություն է տրվել հաշվապահի կողմից ներկայացված հաշվետվություններին

Կառավարման նոր կարգի համաձայն տնօրենը պետք է խորհրդին ներկայացնի դպրոցի զարգացման ծրագրի կատարողականության հաշվետվությունները, որոնց հիման վրա խորհուրդը տալու է դրական եզրակացություն: 2023 թվականի հունվարից խորհրդի լիազորությունները տնօրենի հետ համագործակցության շրջանակներում ապահովվում է հանրակրթության մասին նոր օրենքի գործածությամբ:

**Ուժեղ կողմերը**

- Համագործակցություն տնօրենության հետ
- Աջակցություն դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին,տարաբնույթ խնդիրներին
- Խորհրդի կողմից  բարձրաձայնված օրակարգային հարցերի քննարկում և ճիշտ հանգուցալուծում
- Ներքին գնահատման արդյունքների ճիշտ վերլուծություն
- Վերահսկողության ճիշտ մեխանիզմ
- Դպրոցի ներքին կարգապահական կանոնների ճիշտ վերլուծություն և հաստատում
- Վերապատրաստված խորհրդի անդամներ
- Խորհրդի հերթական նիստերը գումարվել են սահմանված պարբերականությամբ
- Խորհրդի անդամների հեռավար մասնակցություն
- Խորհրդի օրակարգերը տեղադրված են դպրոցի պաշտոնական կայք էջում
- Խորհրդի նիստերում բարձրաձայնվել են օրակարգային անհրաժեշտ հարցերը
- Խորհուրդը իրականացրել է վերահսկողություն դպրոցի զարգացման ծրագրի կատարման  և տնօրենի ընթացիկ գործունեության նկատմամբ:
- Հավանություն է տվել վճարովի երկարօրյա ուսուցմանը, հաստատել վարձավճարի չափը, կրթական ծառայություններ իրականացնողների վճարի չափը, միջոցների բաշխման համամասնությունները:

**Խորհրդի անդամները միշտ հրավիրվում են դպրոցի միջացառումներին:**

**Թույլ կողմերը**

- ԿԳՄՍՆ և քաղաքապետարանի կողմից ընտրված խորհրդի կազմի անդամների հաճախակի  բացակայություն նիստերին՝ զբաղվածության պատճառով
- ՏԻՄ-ի ներկայացուցիչ ոչ կոմպետենտ խորհրդի անդամներ
- Խորհրդի ոչ բոլոր անդամներն են իրականացրել իրենց լիազորությունները սահմանված կարգով
- Կառավարման մարմնի անդամների պատրաստակամությունը որակյալ կրթության ապահովման գործընթացին

**Ռիսկեր՝**

-պետական կառույցի աշխատակից , ով ծանրաբեռնվածության պատճառով  բացակայում է

-կառավարման խորհրդի անդամների կողմից նախաձեռնության պակաս

-որպես խորհրդի անդամ պարտականությունների ոչ լիարժեք տիրապետում

**Ռիսկերը մեղմացնող կամ  վերացնող գործողություններ՝**

- Քվորում ապահովելու համար ճկուն լուծումներ՝ նախնական պայմանավորվածություններ, հեռավար հանդիպումներ
- Մոտիվացնել կառավարման խորհրդի անդամներին
- Հորդորել մասնակցել ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին

**Գնահատում՝**

1. Չի իրականացվել խորհրդի գործառույթներից ոչ մեկը –  0 միավոր
2. Իրականացվել է խորհրդի գործառույթների մինչև 40%  – 2 միավոր
3. Իրականացվել է խորհրդի գործառույթների մինչև 60%  - 3 միավոր
4. Իրականացվել է խորհրդի գործառույթների  մինչև 90%  - 4 միավոր
5. Իրականացվել է խորհրդի գործառույթների մինչև 100% տնօրենի հետ համագործակցելով – 5 միավոր

## Խորհրդակցական մարմիններ

Դպրոցի կրթական գործունեությունը արդյունավետ կազմակերպելու  նպատակով ձևավորվել են խորհրդակցական մարմիններ՝ **մանկավարժական խորհուրդ, 4 առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ:** Դպրոցը չունի շրջանավարտների խորհուրդ, բայց սերտ կապերի մեջ է իր շրջանավարտների հետ, ովքեր պարբերաբար այցելում են հարազատ  դպրոց և հնարավորության սահմանում աջակցում դպրոցին: Օրակարգային կետերը հրատարակված են դպրոցի պաշտոնական կայք էջում:

## Մանկավարժական խորհուրդ

**Մանկավարժական խորհուրդ** – 2022-2023 ուստարվա  Մանկավարժական խորհրդի անդամների թիվը 64 է, որից 49-ը՝ուսուցիչ և  15 –ը հատուկ մանկավարժներ, հոգեբաններ, ուսուցչի օգնականներ, գրադարանավար,նախակրթարանի դաստիարակ,երկարօրյայի մանկավարժ,դաշնամուրի խմբակավար, ծնողական խորհրդի նախագահ՝ ի պաշտոնե: 2 աշխատակից գտվում է երեխայի խնամքի արձակուրդում, 2-ը՝ մայրության նպաստի:
Դպրոցում աշխատող ուսուցիչները հիմնականում կանայք են: 3 տղամարդ ուսուցիչ կա դպրոցում՝ պատմության, ֆիզիկայի և ՆԶՊ-ի:
Ուսուցչի մասնագիտությունը գրավիչ չէ իբրև երիտասարդների կողմից նախընտրելի կենսագիծ: Կա  սկսնակ կադրերի բավարար գործնական հմտությունների և տեսական գիտելիքների պակաս, նրանք չունեն բավարար մասնագիտական գիտելիքներ և հմտություններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:

Մանկավարժական համակազմի 30 %-ը նորամուծությունների իրացման պատրաստ առաջին խմբին են պատկանում՝ նորարար են և մշտապես ձգտում են նորի իրագործմանը:
Մանկավարժական համակազմի 25%-ը նորամուծությունների իրացման պատրաստ երկրորդ խմբին են պատկանում վաղ իրականացնողներն են,ովքեր անմիջապես զնում են նորարարների հետնից՝ ցածր ռիսկային աստիճանով,որպես խորհրդականներ
Մանկավարժական համակազմի 35%-ը նորամուծությունների իրացման պատրաստ երրորդ խմբին են պատկանում նորամուծությունները յուրացնողներն են վաղ իրականացնողների հետ, բայց պասիվ են առաջնորդի դերում
Մանկավարժական համակազմի 10%-ը նորամուծությունների իրացման պատրաստ չորրորդ և հինգերորդ խմբերին են պատկանում ոչ նախաձեռնող, պասիվ և տատանվող մանկավարժները:










Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվել են սահմանված ժամկետում, գումարվել են նաև արտահերթ նիստեր, անհրաժեշտության դեպքում նիստերին մասնակցել են ծնողներ կամ աշակերտներ:
2018-2019 ուստարում հրավիրվել է 8 մանկավարժական խորհրդի նիստ,որից 6-ը հերթական,2-ը՝ արտահերթ:
2019-2020 ուստարում հրավիրվել է 7 մանկավարժական խորհրդի նիստ,որից 5-ը՝ հերթական և 2-ը՝ արտահերթ:
2020-2021 ուստարում հրավիրվել է մանկավարժական խորհրդի 8 հերթական նիստ
2021-2022 ուստարում հրավիրվել է 10 մանկավարժական խորհրդի նիստ,որից 4-ը արտահերթ
2022-2023 ուստարում հրավիրվել է 7 մանկավարժական խորհրդի նիստ,որից 2-ը արտահերթ

Մանկավարժական խորհուրդը

- ❖ քննարկել է սովորողի ԿԱՊԿ գնահատման հարցը և ԱՈՒՊ-ը, ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների հարցերը,դպրոցի բյուջեի նախագիծը,տարբեր ընթացիկ հարցեր
- ❖ որոշում է ընդունել դպրոցի աշխատաքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու մասին, սովորողներին դասարանից դասարան փոխադրելու մասին, սովորողներին քննություններին թույլատրելու մասին, դպրոցի շրջանավարտներին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու մասին, դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին, տարրական դպրոցի սովորողներին անվճար դասագրքերով ապահովելու մասին,միջին դպրոցի սոցիալապես անապահով, ԿԱՊԿ ունեցող սովորողների դասագրքերի վճարի փոխհատուցման մասին

Մանկավարժական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ ընտրել է դպրոցի խորհրդի երկու անդամ՝ Օֆելյա Ասատրյան և Ալլա Սարգսյան:
Մանկավարժական խորհրդի նիստերը բոլորը արձանագրված են մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում, իսկ օրակարգերը տեղադրված են դպրոցի պաշտոնական կայք էջում:
Մանկավարժական խորհրդի ժամանակ դասվար-դասղեկների հաշվետվությունները զուգորդվում են սահիկաշարերով,տեսանյութերով:Վաղուց արդեն տնօրենի ուսումնական գծով տեղակալը իր առաջադիմության հաշվետվության տվյալները ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով,նույնը նաև ՄԿԱ գծով տեղակալը, մ/մ նախագահները: Ծնողական խորհրդի նախագահը պարտադիր իր հաշվետվությունը կարդում է մանկավարժական խորհրդում: Տրվել են կարծիքներ տարբեր ուսումնաօժանդակ նյութերի,փորձարկվող դասագրքերի վերաբերյալ:

**Մանկավարժական աշխատողների գործունեության վերլուծության արդյունքում նպատահարմար եմ գտնում նրանց որակարման մակարդակը և կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու համար իրականացնել հետևյալ մոտիվացիոն աշխատանքները՝ ուղղորդել էլեկտրոնային տարբեր հարթակներում մասնակցել վերապատրաստումների, հրապարակայնացնել լավագույն դասերը, ակտիվացնել ծնողների մասնակցությունը իրենց դասերին, անցկացնել դասընթացներ դպրոց հրավիրված մասնագետների օգնությամբ՝ ՏՄԱԿ, ՀՄԿ, ԵՊՀ, ԵՊՄՀ և այլն:**

**Նպատակ**

- ✓ բացահայտել և զարգացնել մանկավարժների ներուժն ու կարողությունները մասնագիտական բարձր որակները, ինքնազարգացումը, ՏՀՏ գիտելիքների զինվածությունը, նորարարությունների կիրառությունը
- ✓ նպաստել,աջակցել «Տարվա լավագույնները» մրցույթի ուսուցիչների կողմից մասնակցությանը
- ✓ ավելացնել որակավորման տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորման մասնակիցների թիվը
- ✓ խրախուսել «Լավագույն դասղեկ», «Լավագույն ուսուցիչ» մրցույթների մասնակիցներին

- ✓ իրազեկել ՄԽ-ին երեխայի իրավունքների մասին օրենքի , մարդասիրական սկզբունքների էության ամսին

**Խնդիր**

- ➢ կատարել ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացման աշխատանքներ
- ➢ խրախուսել գիտական հոդվածների հրատարակությունը ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված և արտերկրյա գիտական ամսագրերում
- ➢ խթանել ուսուցիչների վերապատրաստումը
- ➢ խրախուսել ուսուցիչների մասնակցությունները, որպես խոսնակ համահայկական գիտաժողովներին
- ➢ ակտիվացնել մասնակցությունը կրթական դրամաշնորհային ծրագրերին
- ➢ մոտիվացնել մասնակցությունը ՏՀՏ-ի կարողությունները զարգացնելու համար
- ➢ կազմակերպել համապատասխան մասնագիտական դասընթացներ ուսուցիչների գիտելիքների որակը բարձրացնելու նպատակով
- ➢ բարձրացնել ուսուցիչների տեղեկացվածության մակարդակը կրթական բարեփոխումների վերաբերյալ ՝ նոր ՀՊՉ ,Առարկայական չափորոշիչ և առարկայական ծրագիր
- ➢ դպրոցի ՏՀՏ-ը բազայի վրա ստեղծել խորհրդատվության մատուցման վիրտուալ ցանց , որպես «Էլեկտրոնային միջոցով ուսուցում» իրականացնող մենթոր դպրոց:
- ➢ աջակցել սկսնակ մանկավարժներին տիրապետելու մանկավարժական հմտություններին
- ➢ աջակցել «Տարվա լավագույնները » մրցույթում ծրագրեր գրելու գործընթացում
- ➢ ապահովել մանկավարժների մասնակցությունը տարբեր վերապատրաստումներին և ատեստավորմանը՝ հերթական և կամավոր, որակավորման տարրակագի շնորման մասնակցությունը
- ➢ շահագրգռել ուսուցիչներին կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ նրանց փորձարարական աշխատանքների կազմակերպման համար:
- ➢ իրազեկել ԾԽ-ին երեխայի իրավունքների մասին օրենքը , մարդասիրական զբունքների էությունը

**Մանկավարժական խորհուրդը սերտ համագործակցում է ծնողական և աշակերտական խորհուրդների հետ:**

**Ուժեղ կողմերը**

- Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվել են սահմանված ժամկետում
- Մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցել են ծնողներ կամ աշակերտներ
- որոշում է ընդունել դպրոցի աշխատաքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու մասին, սովորողներին դասարանից դասարան փոխադրելու մասին,սովորողներին քննություններին թույլատրելու մասին, դպրոցի շրջանավարտներին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է սովորողի ԿԱՊԿ գնահատման հարցը և ԱՈՒՊ-ը, ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների հարցերը,տարբեր ընթացիկ հարցեր
- որոշում է ընդունել դպրոցի աշխատաքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու մասին, սովորողներին դասարանից դասարան փոխադրելու մասին,սովորողներին քննություններին թույլատրելու մասին, դպրոցի շրջանավարտներին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու մասին,դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին, միջին դպրոցի սովորողներին անվճար դասագրքերով ապահովելու մասին
- Մանկավարժական խորհրդի նիստերը բոլորը արձանագրված են մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում, իսկ օրակարգերը տեղադրված են դպրոցի պաշտոնական կայք էջում:
- Մանկավարժական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ ընտրել է դպրոցի խորհրդի երկու անդամ
- Մանկավարժական խորհրդի նիստերը բոլորը արձանագրված են մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում, իսկ օրակարգերը տեղադրված են դպրոցի պաշտոնական կայք էջում:
- Մանկավարժական խորհրդի ժամանակ դասվար-դասղեկների հաշվետվությունները զուգորդվում են սահիկաշարերով,տեսանյութերով
- Տնօրենի ուսումնական գծով տեղակալը իր առաջադիմության հաշվետվության տվյալները
- ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով, նույնը նաև ՄԿԱ գծով տեղակալը, մ/մ նախագահները:
- Ծնողական խորհրդի նախագահը պարտադիր իր հաշվետվությունը կարդում է մանկավարժական խորհրդում
- Տրվել են կարծիքներ տարբեր ուսումնաօժանդակ նյութերի,փորձարկվող դասագրքերի վերաբերյալ:
- Նիստերին ներկայացվել են ԴԶԾ-ի կատարողականությունը

**Թույլ կողմեր**

- Մանկավարժական խորհրդի արձանագրությունների էլեկտրոնային մատյանի բացակայություն
- Դպրոց նոր ընդունված սկսնակ մանկավարժների առկայություն

**Ռիսկեր՝**

-Մանկավարժի մասնագիտական կարողությունների շահագրգռվածության պակաս

-Կամավոր ատեստացիայի մասնակցության անձնական ուժերի  ինքնավստահության պակաս

Մանկավարժի ցածր վարկանիշ

-ինքնակրթության մոտիվացիայի պակաս

-մանկավարժի սոցիալական կարգավիճակը

-խուճապ հանրակրթության ոլորտում անընդմեջ փոփոխություններից

- օրենքի իմացության պակաս

- ֆորսմաժորային իրավիճակ

**Ռիսկերը մեղմացնող կամ  վերացնող գործողություններ՝**

- Հերթական պարտադիր ատեստավորումերից բացի , դպրոցի նախաձեռնությամբ սեմինարների , քննարկումների , վերապատրաստումների իրականացում
- ստեղծել միջավայր ինքնակրթվելու և ինքնազարգացման համար
- խրախուսել ուսուցիչներին պարզևատրումներով՝ համագործակցելով համակարգողի հետ
- պարբերաբար ներկա գտնվել մ/մ նիստերին
- իրազեկել օրենսդրության նոր փոփոխությունները
- դպրոցի համապատասխան մասնագետների միջոցով կազմակերպել վերապատրաստումներ, դասընթացներ, սեմինարներ սկսնակ ուսուցիչների համար
- խրախուսել մանկավարժների  բազմակարծությունը , հարգել նրանց դիքորոշումները
- Ֆորսմաժորային իրավիճակներում /համաճարակ, աղետներ/ աջակցել ուցուցիչներին

**Գնահատում՝**

1. Սահմանված նպատակների և ոչ մի կետ չի իրականացվել –0 միավոր
2. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 50%  – 1 միավոր
3. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 80%  - 3 միավոր
4. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 100%   -4 միավոր

## Աշխատողների արժևորում, խրախուսում  և ինքնակրթություն

Կարևորում եմ դպրոցում ընդհանուր գործունեությունը, աշխատողների փոխհարաբերությունները: Իսկ բարելավման ամենակարևոր պայմանը, յուրաքանչյուրին արժևորելն է , խրախուսելն է ,  գնահատելն է, հարգելն է, իրավունքների պահպանումն է:

Այսօր մարդկային ամենանշանավոր արժեքներից կարելի է նշել հետևյալը՝ ազնվություն, պատասխանատվություն, հարգանք, հանդուրժողականություն, անկողմնակալություն ,երախտագիտություն, սեր, համերաշխություն, ազատություն: Այս հատկանիշները ձևավորում են յուրաքանչյուրի վարքը և փոխազդեցությունը շրջապատի մարդկանց  հետ:

Նմանապես, բարոյական արժեքները համապատասխանում են էթիկական արժեքներին և սոցիալական արժեքներին, որոնք միասին կազմում են հասարակության մեջ առողջ գոյակցություն հաստատելու համար սահմանված բարեվարքության վարքականոնները:

Մարդն իր բնույթով արժևորման, գնահատման կարիք ունի, որն էլ մտավոր և հոգևոր տարբեր ընկալումներ ու դրսևորումներ է ի հայտ բերում՝ մասնավորապես <<հաստատակամություն>>, <<աշխատասիրություն>>, <<համբերատարություն>> և այլն: Այս ամենի համար նպատակահարմար եմ գտնում ձևավորել և զարգացնել աշխատակիցների արժեքային համակարգ,որը անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում՝ սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում: Առաջնային եմ համարում նաև ինքնակրթությունը և ինքնազարգացումը որպես արժեհամակարգի բաղադրիչ: իսկ դրան  կաջակցի դպրոցը իր ռեսուրսներին համապատասխան:Աշխատողների արժևորման մյուս կարևոր բաղադրիչը խրախուսումն է:

Աշխատողներին պարգևատրման և խրախուսման կարգն ու պայմանները  նպատակ ունի գնահատելու բարեխիղճ աշխատանքը, բարձրացնելու աշխատանքի որակը, կոլեկտիվում ձևավորելու առողջ մթնոլորտ, ինչու չէ նաև մրցակցություն, ինչպես նաև մեծացնելու աշխատակազմի ներքին մոտիվացիան:

Աշխատողների խրախուսումը կախված է աշխատողների արդյունավետ և բարեխիղճ աշխատանքից, մանկավարժների նկատմամբ ձևավորված ուսումնամեթոդական միավորումների

, նախագահների , տնօրենի տեղակալների և առանձին դեպքերում նաև ծնողների կարծիքից, ինչպես նաև դպրոցի բյուջեում այդ նպատակով գոյացած միջոցներից: Խրախուսման հիմնական սկզբունքներն են `

ա) արդարությունը. բ) հասցեականությունը. գ) պատճառաբանված լինելը. դ) խտրականության ցանկացած դրսևորման անթույլատրելիությունը.:

Առանձին դեպքերում, երբ անհրաժեշտ է արժևորել աշխատողի բացառիկ գործունեությունը (հանձնարարությունը կատարված է ժամկետից շուտ, գերազանց որակով):

Աշխատողի նկատմամբ կարող է կիրառվել մեկից ավելի խրախուսման միջոցներ,օրինակ՝ շնորհակալության հայտնում,միանվագ դրամական պարգևատրում և այլն:

Ըստ Աշխատանքային օրենսգրքի, աշխատողի նկատմամբ կարող են կիրառվել Խրախուսման հետևյալ տեսակները. ա) շնորհակալության հայտարարում. բ) միանվագ դրամական պարգևատրում. գ) հուշանվերով պարգևատրում. դ) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում. ե) կարգապահական տույժի հանում: Աշխատողների Խրախուսման համար հիմք է հանդիսանում ` ա) աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունների գերազանց կատարումը. բ) անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար տրված լրացուցիչ հանձնարարությունը ժամանակին և պատշաճ որակով կատարումը. գ) Դպրոցում երկարամյա բարեխիղճ աշխատանքը. դ) կոլեկտիվ և միջանձնային հարաբերություններում օրինակելի վարքագիծ դրսևորելը. ե) աշխատանքային կարգապահությունը և այլն:

## Մեթոդ միավորումներ

Դպրոցում գործում է 4 մեթոդ միավորում, ըստ սահմանված կարգի՝ **տարրական, հումանիտար, օտար լեզուներ, ԲՏՃՄ:**



Յուրաքանչյուր մասնախումբ ունի իր արձանագրությունների և փոխդասալսումների մատյանները:Մ/մ փաստաթղթերի ճիշտ վարման համար համեմատական է արվում բոլոր 4 մասնախմբերի միջև՝բերելով ընդհանուր դաշտ: Որպես ներդպրոցական վերահսկողություն կիսամյակը մեկ անգամ բոլոր մ/մ նախագահները տնօրենին ներկայացնում են իրենց վարած փաստաթղթերի վիճակը:

Դպրոցի մանկավարժներն աշխատում են այն գիտակցությամբ, որ ուսուցիչն անընդհատ պիտի զբաղվի ինքնակրթությամբ ու ինքնակատարելագործմամբ, աշխատի իր մասնագիտական մակարդակը բարձրացնել և ստեղծագործական ունակությունները զարգացնել: Բոլոր ուսուցիչները մասնակցում են առարկայական մեթոդմիավորման աշխատանքին, ներկայացնում զեկուցումներ, հաշվետվություններ,հետազոտական աշխատանքներ,նախագծեր:

Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, փոխներգործուն մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը օրեցօր մեծանում է (94%): Ուսուցչական կազմի 95%-ը ուսումնական գործընթացում կիրառում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ: Ժամանակի հրամայականով առաջնորդվելով՝ ուսուցիչներն աշխատանքները զետեղում են նաև համացանցում՝ իրենց անձնական էջերում, համապատասխան կայքերում, նաև դպրոցի Կրթական տիրույթում: Տեսադասերից օգտվում են ոչ միայն ուսուցիչները,այլ նաև սովորողներն ու նրանց ծնողները: Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները պարտադիր օգտագործվում են դասերի ժամանակ:

Ազգային դպրոցի գործունեության շարունակականությունը ապահովելու համար առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ուսուցչին և աշակերտին:

Ուսուցիչը պետք է նվիրված լինի իր աշխատանքին, բարձր պահի մանկավարժի մասնագիտության վարկանիշը և մեծ պատասխանատվությամբ վերաբերվի իր մասնագիտական պարտականությունների կատարմանը: Յուրաքանչյուր ուսուցիչ ինքը պետք է դառնա հետազոտող, նույնը սովորեցնելով իր աշակերտներին:Ուսուցիչը պետք է ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացներին, զբաղվի ինքնակրթությամբ, աշխատի իր որոկավորման բարձրացման ուղղությամբ: Ուսուցիչը պետք է պահանջկոտ լինի սեփական անձի նկատմամբ և շարունակ ձգտի ինքնակատարելագործման: Ուսուցիչը պետք է ամրապնդի սեփական ուժերի նկատմամբ սովորողների հավատը,արդյունավետ ծրագրի ուսումնական գործընթացը,ստեղծի ուսումնական նյութեր,տարբեր նախագծեր,ներդնի ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ,ստեղծի

ուսուցման բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր:
Դպրոցի ուսուցիչները 5 տարին մեկ ատեստավորվում են տնօրենի կողմից կազմված և հաստատված ժամանակացույցով: Վերապատրաստող կազմակերպությունները ընտրում են ուսուցիչները:

**Դպրոցն համագործակցում է հետևյալ վերապատրաստող կազմակերպությունների հետ՝**

Էդիտ Պրինտ
Կրթություն առանց սահմանների
Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի
Երիտասարդ պատմագետների ասոցացիա
Ֆիզկուլտուրայի ինստիտուտ

**Նպատակ**

- ✓ նպաստել ուսուցիչների դասավանդման որակի բարձրացմանը
- ✓ մոտիվացնել և աջակցել կամավոր ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհմանը
- ✓ հասնել այն մակարդակին , որ բոլորը լիարժեք օգտվեն ՏՀՏ-ի սարքավորումներից և ինովացիոն գործիքներից , ծրագրերից
- ✓ աջակցել և նպաստել նորարարությունների կիրառումը դասընթացներին
- ✓ ապահովել մասնակցային որոշումների կայացմանը և բազմակարծությանը
- ✓ նպաստել սկսնակ ուսուցիչների մասնագիտական որակների և կարողությունների զարգացմանը
- ✓ նպաստել դպրոցական միջոցառումներին , առարկայական մրցույթներին և օլիմպիադաներին
- ✓ աջակցել ուսուցիչների մասնակցությանը փորձարկվող դասագրքերի փարձաքննությանը
- ✓ համագործակցել այլ դպրոցների մ/մ հետ

**Խնդիր**

- ➢ կազմակերպել դասընթացներ , սեմինարներ , մանկավարժական-մեթոդական ընթերցումներ և դարձնել հաղորդակից նորագույն նվաճումներին և արդի պահանջներին
- ➢ ապահովել էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի աջակցությունը ուսուցիչներին
- ➢ ՏՀՏ սարքավորումներին և ծրագրերին լիարժեք տիրապետող ուսուցիչների աջակցությունը դժվարությամբ կիրառող մանկավարժներին
- ➢ Աջակցել առարկայական ուսուցիչներին և աշակերտներին
- ➢ Սահմանված կարգով ապահովել ուսուցիչների մասնակցությունը փորձարկվող դասագրքերի փարձաքննությանը
- ➢ Ստեղծել էլեկտրոնային հարթակ այլ դպրոցների համագործակցության համար

**Ուժեղ կողմեր**

- Մասնախմբերը կազմված են սահմանված կարգով
- Յուրաքանչյուր մասնախումբ ունի իր արձանագրությունների և փոխդասալսումների մատյանները:

- Բոլոր ուսուցիչները մասնակցում են առարկայական մեթոդմիավորման աշխատանքին, ներկայացնում զեկույցներ, հաշվետվություններ, հետազոտական աշխատանքներ, նախագծեր
- Բոլոր մանկավարժները հետևողականորեն իրականացնում են իրենց կողմից մշակված և պաշարների շտեմարանում տեղադրված աշխատանքային պլանները
- Առաջատար փորձի տարածում
  Ուսուցչական կազմի 75 %-ը ուսումնական գործընթացում կիրառում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ:
- Ուսուցիչները ստեղծում են ուսումնական նյութեր, մշակում տարբեր նախագծեր,ներդնում ուսուցման ժամանակակից մեթոդներև հնարներ:
- Ուսուցիչները իրենց ստեղծած տեսանյութերը տեղադրում են դպրոցի Կրթական տիրույթում, որոնցից օգտվում են նաև ծնողները:
- Ուսուցիչները հերթապահում են 3 մասնաշենքերում
- Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները պարտադիր օգտագործվում են դասերի ժամանակ:

- Մ/մ նախագահների կողմից անհրաժեշտ դասալսումներ և վերլուծություններ
- Սկսնակ ուսուցիչներին աջակցություն
- Կամավոր ատեստավորման խրախուսում
- Աջակցություն ուսուցիչներին որակավորման տարրակագ ձեռք բերելու  գործընթացում
- Դրամական պարգևատրում մանկավարժներին՝ մասնակցային ակտիվ աշխատանքներ իրականացնելու համար

## Թույլ կողմեր

- Հայերենի, մաթեմատիկայի և ռուսերենի մասնախմբերը կարելի է առանձնացնել և մասնախմբերի թիվը դարձնել 7-ը
- Կան  ուսուցիչներ, ովքեր դիմում են երիտասարդ ուսուցիչներին կամ հենց աշակերտներին դասի ընթացքում իրենց աջակցելու ՏՀՏ օգտագործելու գործում:
- Առարկայական օլիմպիադաների մասնակցություն և միջին ցուցանիշների առկայություն
- Տնօրենության կողմից չեն սահմանվել  <<Լավագույն ուսուցիչ, լավագույն դասղեկ>> անվանակոչումները
- Լավագույն միջոցառումների,նորարար ստեղծագործական մոտեցումների,ՏՀՏ կիրառումների համար խրախուսումները քիչ են

## Ռիսկեր

-նախաձեռնությանը չհամաձայնվող ուսուցիչներ

-աշակերտների կողմից անտարբերություն դասերի նկատմամբ

-անտարբերություն արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին

-ծնողների կողմից ուսման նկատմամբ ոչ հետևողական վերաբերմունք

-ինքնավստահության պակաս

**Ռիսկերը մեղմացնող կամ  վերացնող գործողություններ՝**

- խրախուսել ուսուցիչներին դասերից հետո հավելյալ պարապմունքներ անցկացնել օլիմպիադայի մասնակիցների  հետ
- բարձրացնել ուսուցիչների ներուժը , որպեսզի ավելի հետաքրքիր դարձնեն դասերը
- ավելացնել համագործակցային հանդիպումները առարկայական ուսուցիչների և դասախոսների հետ
- աջակցել ուսուցիչների ֆորմալ և ոչ ֆորմալ  ծրագրերի  վերապատրաստումներին
- բացատրել արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների դերը սովորողների մտահորիզոնի զարգացման (գեղագիտական, հոգևոր,ֆիզիկական  և այլն ) գործում
- համագործակցել ԲՈւՀ-երի ուսանողների հետ կամավոր սկզբունքով դասընթացներ անցկացնել օժտված սովորողների հետ

**Գնահատում ՝**

1. Սահմանված նպատակների և ոչ մի կետ չի իրականացվել –0 միավոր
2. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 30%  – 1 միավոր
3. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 50%  - 2 միավոր
4. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 70%  - 3 միավոր
5. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 90%   - 4 միավոր
6. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 100%  - 5 միավոր






## Ծնողական խորհուրդ

Դպրոցի **ծնողական խորհուրդը** սերտ համագործակցում է մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ, նպաստում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Ծնողական խորհրդի նախագահը պարբերաբար արժանանում է տնօրենության խրախուսմանը՝շնորհակալագրեր:Դպրոցի ծնողական խորհրդի նիստերին տնօրենը մասնակցել է խորհրդակցական ձայնի իրավունքով:

Դասարանների ծնողական խորհուրդները՝ նախագահ և երկուսից չորս անդամ, ընտրվել են դասարանի ծնողների սեպտեմբերյան ընդհանուր ժողովների ժամանակ: Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվել է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից՝27 անդամ: Ծնողական ՛խորհրդի նախագահը ընտրվել է փակ քվեարկությամբ՝ **Օֆելյա Խաչատրյան,ունի բարձրագույն կրթություն:** Ծնողական խորհուրդը, փակ քվեարկությամբ, իր կազմից ընտրել է կառավարման խորհրդի երկու անդամ: Ակտիվ է, հանդես է գալիս տարբեր առաջարկություններով, բոլոր հարցերում համագործակցում է դպրոցի հետ՝արտահայտելով թե շնորհակալությունը,և թե դժգոհությունը: Դասարանական ժողովները հրավիրվել են ըստ կարգի, բարձրաձայնված հարցերը արձանագրվել են:

ԾԽ-ի նիստերը և համադպրոցական ժողովները հրավիրվել են ըստ կարգի, վերջին հինգ տարվա տվյալներն են՝

**Համադպրոցական ժողովներ**

| | |
|---|---|
| 2018-2019 ուստարի | 6.09.2018թ. |
| 2019-2020 ուստարի | 6.09.2019թ. |
| 2020-2021 ուստարի | 4.09.2020թ. /հեռավար/ |
| 2021-2022 ուստարի | 3.09.2021թ. |
| 2022-2023 ուստարի | 6.09.2022թ., 31.01.2023թ.՝ արտահերթ |

**Ծնողխորհուրդների նիստերը՝**

| | |
|---|---|
| 2018-2019 ուստարի | 4 անգամ |
| 2019-2020 ուստարի | 4 անգամ |
| 2020-2021 ուստարի | 5 անգամ,մեկը՝հեռավար |
| 2021-2022 ուստարի | 6 անգամ |
| 2022-2023 ուստարի | 4 անգամ |

Բարձրաձայնվել են հետևյալ հարցերը՝

- Դպրոցի ՈՒԴԱՏՊ-ի քննարկում
- Դպրոցի բյուջեի նախագծի քննարկում
- ՀՀ Կրթության տեսչական մարմնի կարգադրությունների քննարկում
- Ներքին կարգապահական կանոնների քննարկում
- Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն
- Որակյալ կրթությանը նպաստող միջոցառումների կազմակերպում
- Անվճար դասագրքերի տրամադրում
- Սոցիալապես անապահով երեխաներին օգնության տրամադրում
- Վճարովի ծառայությունների տրամադրում
- Աղբի տեսակավորման մշակույթի ձևավորում
- Ծնողների դասերին ներկայություն

Դպրոցի և ծնողների կապը պահպանվում է նաև համացանցի միջոցով: Բոլոր դասղեկները Viber կամ Facebook խմբերով կապ ունեն իրենց դասարանների ծնողների հետ, կան առանձին դասարանական և աշակերտական խմբեր:

Դրական և արդյունավետ ուսումնադաստիարակչական միջավայր ստեղծելու գործում մեծ նշանակություն ունի ծնող դպրոց համագործակցությունը: Դպրոցի ծնողները պարբերաբար մասնակից են լինում սովորողների ուսուցման գործընթացին: Սա այն գործընթացն է, որը կնպաստի ոչ միայն երեխային ուսման մեջ հաջողությունների հասնելու, այլև կբարձրացնի դպրոցի հեղինակությունը համայնքում և հասարակության մեջ:
Ծնողական խորհրդի նիստերը բոլորը արձանագրված են ծնողական խորհրդի արձանագրությունների մատյանում, իսկ օրակարգերը տեղադրված են դպրոցի պաշտոնական կայք էջում:

Ծնողական խորհուրդը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում դպրոցական կյանքում, համագործակցում տնօրինության և աշակերտական խորհրդի հետ, նպաստում դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին և ներկայացնում առաջարկություններ, ծնողական խորհրդի նախագահը ապահովում է ծնողներին տեղեկատվությամբ, աջակցում արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին, մասնակցում աշակերների հանգստի և ժամանցի կազմակերպմանը, ապահովում երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում:

**Նպատակ**

- ✓ ապահովել վստահելի և գործնական հարաբերություններ
- ✓ ձևավորել ծնող-դասղեկ-ուսուցիչ միասնական մթնոլորտ
- ✓ նպաստել ծնողների ներգրավվածությունը սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում
- ✓ ապահովել մասնակցային որոշումների կայացմանը և բազմակարծությանը
- ✓ ապահովել ԿԱՊԿ ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական ծառայություններին ԾԽ-ի մասնակցությունը
- ✓ ապահովել երեխայի իրավունքի , ԾԽ-ի մարդասիրական սկզբունքների իրականացմանը
- ✓ նպաստել ԾԽ-ի մեդիագրագիտությանը

**Խնդիր**

- ➢ **ապահովել գործունեության թափանցիկությոնը**
- ➢ հրավիրել միացյալ ժողովներ,կազմակերպել հանդիպման օրեր
- ➢ ամրապնդել դպրոց -ընտանիք կապը
- ➢ սերտ համագործակցել դպրոցի տնօրենության դասղեկների , առարկայական ուսուցիչների հետ կրթության արդյունավետության համար
- ➢ ապահովել փոխադարձ վստահություն
- ➢ բարձրացնել սովորողների ծնողների ներգրավվածության մոտիվացիան արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում
- ➢ կայացնել համատեղ որոշումներ սովորողների ուսուցման և դաստիարակության գործընթացների արդյունավետությանը նպաստող
- ➢ համատեղ կազմակերպել ուսումնաճանաչողական միջոցառումներ
- ➢ խրախուսել ակտիվ ծնողներին
- ➢ աջակցել ԿԱՊԿ ունեցող սովորողներին,նրանց ծնողներին մանկավարժահոգեբանական ծառայությունների կազմակերպման , ԱՈՒՊ-ի մշակման և աջակցությունների տրամադրման գործընթացում
- ➢ իրազեկել ԾԽ-ին <<Երեխայի իրավունքների մասին>> օրենքը , մարդասիրական սկզբունքների էությունը
- ➢ կազմակերպել հանդիպումներ ԷԿԴԱՄ-ի և ինֆորմատիկայի ուսուցչի հետ

**ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ**

2022-2023 ուստարի

**ԾՆՈՂԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ**

| Դասարան | Անուն, ազգանուն | Հեռախոսահամար |
|---|---|---|
| $1^1$ | Պողոսյան Նելլի | 099334407 |
| $1^2$ | Կարապետյան Սուսաննա | 044998875 |
| $1^3$ | Նիկոյան Տաթև | 091186967 |
| $2^1$ | Էդիտա Շուշանյան | 091468100 |
| $2^2$ | Մարգարիտա Գևորգյան | 093979247 |
| $2^3$ | Ռուզաննա Դավթյան | 094880835 |
| $3^1$ | Ալբինա Մկրտչյան | 077574828 |
| $3^2$ | Քրիստինե Սերոբյան | 055890995 |
| $3^3$ | Նարինե Խաչատրյան | 099499437 |
| $4^1$ | Անահիտ Հակոբյան | 099178707 |
| $4^2$ | Կարինե Մկրտչյան | 094072502 |
| $4^3$ | Անի Հակոբյան | 095588844 |
| $5^1$ | Շողիկ Շահնազարյան | 077363627 |
| $5^2$ | Անի Ալանյան | 043151117 |
| $5^3$ | Արմինե Դարբինյան | 099586871 |
| $6^1$ | Հասմիկ Տեր-Հարությունյան | 098 013007 |
| $6^2$ | Մարինե Դանիելյան | 096 572196 |
| $6^3$ | Անուշ Մրյան | 098 943000 |
| $7^1$ | Լիանա Մանուկյան | 093 200 107 |
| $7^2$ | Օֆելյա Խաչատրյան | 077 202994 |
| $7^3$ | Ավդալյան Մարիաննա | 094 373705 |
| $8^1$ | Արևիկ Գևորգյան | 099 030131 |
| $8^2$ | Անահիտ Գրիգոյան | 099 861510 |
| $8^3$ | Ջուլիա Միրզոյան | 093 173229 |
| $9^1$ | Գոհար Գրիգորյան | 091 785837 |
| $9^2$ | Ինեսա Չիլինգարյան | 096 800026 |
| $9^3$ | Լուսինե Հովհաննիսյան | 091 705704 |

**Ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է մանկավարժական, աշակերտական խորհուրդների հետ, ինչպես նաև կոլեգիալ կառավարման խորհրդի հետ:**

**Ուժեղ կողմերը**

- ԾԽ-ի ժողովները հրավիրվել են ըստ կարգի
- Դպրոցի ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է տնօրինության, մանկավարժների և աշակերտական խորհրդի հետ, նպաստում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին:
- ԾԽ-ն հանդես է գալիս տարբեր առաջարկություններով, բոլոր հարցերում համագործակցում դպրոցի հետ՝արտահայտելով ,թե՛ շնորհակալությունը, և թե՛ դժգոհությունը:
- Դպրոցի և ծնողների կապը պահպանվում է նաև համացանցի միջոցով: Բոլոր դասղեկները Viber կամ Facebook խմբերով կապ ունեն իրենց դասարանների ծնողների հետ

- Ծնողական խորհրդի նիստերը բոլորը արձանագրված են ծնողական խորհրդի արձանագրությունների մատյանում, իսկ օրակարգերը տեղադրված են դպրոցի պաշտոնական կայք էջում:
- ծնողական խորհրդի նախագահը ապահովում է ծնողներին նախագահներին տեղեկատվությամբ
- ԾԽ-ն ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում:
- Ծնողական ժողովներին ԿԱՊԿ ունեցող սովորողների կարիքների մասին իրազեկում
- Ծնողական համայնքի ներգրավումը դասղեկի ժամերին՝ մասնագիտական կողմնորոշում
- Ծնողների ներգրավվածությունը դպրոցական միջոցառումներին՝դասղեկի ժամ, սպորտլանդիաներ և այլն:
- Տնօրենի դպրոցի ծնողական խորհրդի նիստերի մասնակցում է խորհրդակցական իրավունքով
- Դասղեկը մասնակցում է դասարանական ծնողական խորհրդի նիստերին

**Թույլ կողմ**

- Ծնողական ժողովներին նույն ծնողների հաճախակի բացակայություն
- աջակցում արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին, մասնակցում աշակերտների հանգստի և ժամանցի կազմակերպմանը
- Ծնողների պարտականությունների իրազեկվածության բացակայություն
- Ծնողների ՏՀՏ-ի ոչ լիարժեք գրագիտություն և էլեկտրոնային օրագրերի պասիվ օգտագործում
- Ծնողների կողմից նախաձեռնության պասիվ
- Ծնողների հանդուրժողականության պակաս
- Մասնակցային որոշումների կայացում

**Ռիսկեր՝**

-Անտարբեր վերաբերմունք ցուցաբերող ծնողներ

-Ծնողական խորհրդի կառավարման և խորհրդակցական մարմնի նախաձեռնության պակաս

-աշխատանքը կրթությունից առավել դասող ծնողներ

-ընտանիքի անդամների ոչ ճիշտ փոխհարաբերության ազդեցությունը սովորողի ուսումնառության և դաստիարակության վրա

-որոշ ծնողների անպատասխանատվություն

-ծնողների կարծրատիպեր

**Ռիսկերը մեղմացնող կամ  վերացնող գործողություններ՝**

- համագործակցել և ընդունել  բազմակարծությունը , ստեղծել հանդուրժող միջավայր
- իրականացնել դպրոցի նկատմամբ անտարբեր ծնողների հետ անընդմեջ աշխատանքներ
- կազմակերպել  ծնողավարության վերապատրաստումներ
- ապահովել և ամրապնդել ժողովրդավար հիմունքների վրա դպրոց -համայնք կապը  որպես ամբողջական հասարակություն
- ներկայացնել տվյալ ժամանակահատվածի առաջնահերթ խնդիրները արդյունավետ համագործակցության համար
- կազմակերպել աշխատանքները  հեռավար անհնարինության դեպքում
- իրականացնել հոգեբանական վիճակի կայունացմանը և բարելավմանը ուղղված աշխատանքներ ծնողների , առավել ևս ԿԱՊԿ սովորող ունեցող ծնողների հետ
- իրազեկել ծնողներին իրենց պարտականությունների մասին
- կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ  դպրոցի հոգեբանների հետ

**Գնահատում՝** 1. Սահմանված նպատակների և ոչ մի կետ չի իրականացվել –0 միավոր

2. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 30% է իրականացվել  – 1 միավոր

3. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 50% է իրականացվել - 3 միավոր

4. Սահմանված նպատակների  կետերի  մինչև 80% է իրականացվել   -4 միավոր

5. Սահմանված նպատակների կետերի մինչև 100% է իրականացվել – 5 միավոր

## Աշակերտական խորհուրդ

Դպրոցի մթնոլորտը նպաստում է սովորողների և տնօրինության համագործակցու-թյանը: Տնօրինությունը խրախուսում է սովորողների ակտիվ մասնակցությունը հաստատության գործունեությանը, խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում է դրանց իրագործմանը:

Դպրոցում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները և նախասիրությունները:Դպրոցում ստեղծված է սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմաններ:Նրանց իրավունքներն և ազատությունները պաշտպանվում են թե մանկավարժների, թե՝ծնողների կողմից: Աշակերտական խորհուրդը առաջարկություններ է ներկայացրել դպրոցի տնօրինությանը՝ հաստատության ներքին կարգապահական կանոնների, սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման, դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման

վերաբերյալն իրենց նախասիրություններին համապատասխան արտադասարանական խմբակների ձևավորում ,ինչպես նաև աջակցություն հանձնախմբերի աշխատանքների կազմակերպման և իրականացման ։ Աշակերտական խորհուրդը ակտիվ է, կազմակերպում է բազմաբնույթ միջոցառումներ իր նախաձեռնությամբ: ԱԽ-ն աշխատանքներ է տանում սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ:

Դպրոցում գործում է նաև Բանավեճի ակումբ, որի բոլոր անդամները աշակերտական խորհրդի անդամներ են:Նրանք բանավեճել են Զենքի ազատ վաճառքը արդարացված է, Մահապատիժը արդարացված է, Հեռավար կրթությունը արդյունավետ է, Շախմատը չպետք է լինի պարտադիր թեմաների շուրջ և արտահայտել իրենց սեփական կարծիքները:

Դպրոցի աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, աշակերտների, ծնողների,մանկավարժների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք:

Աշակերտական խորհուրդը կազմված է 36 անդամից: Աշակերտական խորհրդի նախագահը՝ Եվա Անդրյանը, 7-րդ դասարանի աշակերտուհի է, ով ընտրվել է սահմանված կարգով՝հավանության է արժանացել նրա կազմած ծրագիրը: Նա կարողացել է իրականացնել իր ծրագրում առաջարկած կետերի մեծ մասը:

Աշակերտական ընդհանուր ժողովները հրավիրվել են սեպտեմբեր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում:Ժողովը հրավիրվել է տնօրենի կողմից և ներկայացրել է իր զեկույցը ԴԶԾ-ի, , ներքին կարգապահական կանոնների և ըստ աշխատանքային պլանի համապատասխան աշխատանքների կազմակերպման և իրականացման մասին:

Աշակերտական խորհրդի նիստերը գումարվել են առնվազն ամիսը մեկ անգամ:

**Աշակերտական խորհրդի ժողովները հրավիրվել են՝**

2018-2019 ուստարի՝ թվով 8 ԱԽ նիստ, 2019-2020ուստարի՝ թվով 9 ԱԽ նիստ, 2020-2021ուստարի՝ թվով 6 ԱԽ նիստ, 2021-2022 ուստարի՝ թվով 7 ԱԽ նիստ,2022-2023 ուստարի՝ թվով 8 ԱԽ նիստ:

**Աշակերտների կողմից առաջարկվել են հետևյալ կետերը՝**

- Թումանյանին նվիրված տեսանյութերի պատրաստում և կրտսեր դպրոցի սովորողներին ցուցադրում
- «Մեր մեծերը » խորագրով ֆիլմերի դիտում
- Քայլերթով այցելություն Ծիծեռնակաբերդ
- «Ամսվա լավագույն աշակերտ» անվանակարգի ներդրում՝ ինչը կխթանի նրանց ուսման , վարքային , մշակութային դրսևորումներին
- դասամիջոցներին հերթապահության ավելի պատշաճ կազմակերպում
- վերելակի կառուցում
- առաջարկների արկղիկի տեղադրում տեսանելի վայրում
- նորությունների տախտակի առկայություն ՝ վերջին իրադարձությունների մասին
- դիմակահանդեսի կազմակերպում
- սահմանամերձ գոտու երեխաներին օգնության ցուցաբերում
- էթիկայի նորմերին վերաբերող միջոցառումներ

- ❖ անցկացնել հայրենասիական շաբաթ
- ❖ ստեղծել տեսադասեր,շնորհանդեսներ,իսկ դպրոցում սովորած զոհված ազատամարտիկների մասին սովորողների կողմից պատրաստված տեսահոլովակները տեղադրել դպրոցի պաշտոնական կայք էջում
- ❖ անցկացնել մեդիագրագիտության իրազեկման շաբաթ, պատրաստել տեսանյութեր և ներկայացնել 5-9-րդ դասարաններում
- ❖ կազմակերպել էքսկուրսիաներ պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ , շինություններ և այլ կառույցներ այցելելու նպատակով
- ❖ զեկույցների,պատի թերթերի,տեսանյութերի դիտման միջոցով կազմակերպել ցուցահանդեսներ, քննարկումներ վնասակար սովորությունների մասին, հալածանքի,բռնության կանխարգելման, երեխաների իրավունքների պահպանման մասին
- ❖ Ջոն Կիրակոսյանի տարեդարձին նվիրված փոքրիկ տեսանյութ ներկայացնել դպրոցի մյուս աշակերտներին
- ❖ կազմակերպել ամենամսյա շաբաթօրյակներ
- ❖ կազմակերպել «Մշակութային օր » միջոցառում էթնիկ փոքրամասնությունների մշակույթին անդրադառնալով
- ❖ <<Դպրոցի տաղանդները>> միջոցառման անցկացում

**Աշակերտական խորհրդի կողմից ընտրվում է <<Տարվա լավագույն սովորողը>>, ով պարգևատրվում է Դավիթ Սարապյանի անվան թոշակով:**

**Նպատակ**

- ✓ Զարգացնել կարողունակություններ ԱԽ-ի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով
- ✓ ապահովել մասնակցային, ժողովրդավար, ինքնավար պայմաններ աշակերտական խորհրդի գործունեության համար
- ✓ ապահովել բարենպաստ պայմաններ սովորողների ազատություններն, իրավունքները պաշտպանելու նպատակով
- ✓ նպաստել ստեղծված հանձնախմբերի արդյունավետ աշխատանքներին
- ✓ աջակցել նոր հանձնախմբերի ստեղծմանը ըստ աշակերտների հետաքրքրությունների և նախասիրությունների
- ✓ ապահովել մասնակցային որոշումների կայացմանը և բազմակարծությանը

**Խնդիր**

- ➢ մշակել ԱԽ-ի գործունեության ինքնակառավարմանը նպաստող գործողություններ
- ➢ խթանել սովորողների նախաձեռնությունները և օժանդակել դրանց իրագործումը
- ➢ կազմակերպել սովորողների նախասիրություններին համապատասխան միջոցառումներ
- ➢ ձևավորել խմբակներ՝ըստ սովորողների նախասիրությունների
- ➢ աջակցել ԱԽ-ի հանձնախմբերի աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը
- ➢ նպաստել սովորողների մոտ առաջնահերթությունների կարգավորմանը
- ➢ կազմակերպել սովորողների հանդիպումներ իրավապաշտման մասնագետների հետ
- ➢ կազմակերպել կլոր սեղաններ, հանդիպումներ սովորողների, մանկավարժների, համայնքի անդամների և ՀԿ-ների մասնակցությամբ՝ մարդու իրավունքներ և քաղաքացիական

հասարակություն թեմաներով
- կազմակերպել մեդիագրագիտության շաբաթ սովորողների շրջանում մեդիագրագիտության բարձրացման նպատակով
- ստեղծել նոր հանձնախմբեր ըստ աշակերտների հետաքրքրությունների և նախասիրությունների
- նպաստել ոչ միայն ԱԽ անդամների, այլ նաև յուրաքանչյուր սովորողների մասնակցային որոշումների կայացմանը

**Աշակերտական խորհրդում գործում են** Մշակութային, Ռազմամարզական, ԷԿՈ և Լրատվական հանձնախմբեր:
**Աշակերտական խորհուրդը պաշտպանել է դպրոցի սովորողների իրավունքները:**

ԱԽ-ի արձանագրությունների մատյանի օրակարգային կետերից են՝
- Աշակերտական խորհրդի կանոնադրության հաստատում
- Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություն
- Սովորողների ինքնավարության մարմնի՝ աշակերտական խորհրդի անդամների կազմը հաստատելու մասին
- ԱԽ-ի ժողովների ժամանակացույցի հաստատման մասին
- Տարեկան ծրագրի քննարկում
- ԱԽ-ի անդամների լիազորությունների բաշխում
- Նախագահի ծրագրի հետ ծանոթացում
- Ներքին կարգապահական կանոններին ծանոթացում, կարգապահական կանոնների մշակում
- Ներքին կարգապահական կանոնները խախտած սովորողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին
- ԱԽ-ի արկղի ստեղծում և դրա բովանդակության պարբերաբար քննարկում
- Խմբերի ձևավորում և աշխատանքի բաշխում
- Հերթապահության կազմակերպում
- Մրցույթների կազմակերպում և արդյունքների ամփոփում
- Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում և հաջորդ ամսվա աշխատանքների պլանավորում
- Միջոցառումների, սպորտային ամիսների կազմակերպում
- Հեռավար կրթության արդյունքների քննարկում, ՏՀՏ-ների կիրառության մարտահրավերների դրական և բացասական կողմերի մասին
- Պատմամշակութային արժեքների պահպանման մասին
- Սահմանամերձ երեխաների համար օգնության կազմակերպում
- Արցախից ժամանած երեխաներին աջակցություն
- Կարգապահական հարցեր
- Տարհանման աշխատանքների ճիշտ կազմակերպում

**Դպրոցի նպատակը յուրաքանչյուր սովորողի ինքնուրույն, լավ գիտելիքներ և սոցիալական հմտություններ ունեցող անհատի դաստիարակությունն է: Դպրոցի աշակերտը**

պետք է կարողանա հարցեր առաջադրել և լուծումներ գտնել, փաստարկել իր դիրքորոշումը, ինքնակատարելագործվել, արդյունավետ աշխատել, գնահատել իր աշխատանքի արդյունքը: Նա պետք է շարունակի սովորել, պատրաստ լինի պատասխանատու որոշումների, կարողանա շփվել ու համագործակցել, քննադատաբար մտածել: Ջոն Կիրակոսյանի հ.20 հիմնական դպրոցում այդ հնարավորությունը տրվել է իր սովորողներին: Աշակերտը պետք է պատասխանատվություն ունենա իր անձի, շրջապատող մարդկանց և շրջակա միջավայրի նկատմամբ, գիտակցի իր ազգային պատկանելիության,տվյալ հասարակության լիարժեք անդամ լինելու մասին,իմանա իր`որպես հասարակության անդամ և քաղաքացի լինելու պարտականություններն ու իրավունքները,հարգանք դրսևորի համամարդկային,ազգային և հոգևոր արժեքների նկատմամբ:Սովորողը պետք է գործի,մտածի և որոշումներ կայացնի ինքնուրույն:

Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցի աշակերտական խորհուրդի կազմը
/2022-2023 ուստարի/

| Հ/հ | Դասարան | Անուն-ազգանուն | Հեռախոս | Հանձնախումբ |
|---|---|---|---|---|
| 1. | 6-1 | Ռուզաննա Աղազարյան | 043 577484 | Մշակութային,Էկո |
| 2. | | Հովհաննես Թադևոսյան | 099 574768 | Ռազմամարզական |
| 3. | | Գուրգեն Գևորգյան | 043 438834 | Ռազմամարզական,ԷԿՈ |
| 4. | 6-2 | Լիլիթ Մանուկյան | 055 576762 | ԷԿՈ |
| 5. | | Արամ Բալայան | 095 444294 | Ռազմամարզական |
| 6. | 6-3 | Հայկ Համբարձումյան | 033 281211 | Լրատվական |
| 7. | | Միլենա Դանիելյան | 096 705112 | Էկո |
| 8. | 7-1 | Նորայր Քոսյան | 077886254 | Ռազմամարզական |
| 9. | | Անահիտ Այվազյան | 093 576501 | Էկո |
| 10. | 7-2 | Տիգրան Մովսեսյան | 093552967 | Ռազմամարզական |
| 11. | | Թինա Մարտիրոսյան | 093 634199 | Մշակույթային |
| 12. | | Գասպարյան Տիգրան | 095534448 | Ռազմամարզական |
| 13. | | Կիրակոսյան Իրինա | 043 452003 | Մշակութային |
| 14. | 7-3 | Արամ Բեղրոսյանց | 043 55 4216 | Լրատվական |
| 15. | | Տիգրան Մեսրոպյան | 095 920080 | Ռազմամարզական |
| 16. | | Եվա Սարգսյան | 093123467 | Մշակութային |
| 17. | | Էլեն Խաչերյան | 094 289192 | Մշակութային |
| 18. | 8-1 | Մարիա Հակոբյան | 041808828 | Մշակութային,Էկո |
| 19. | | Մոնիկա Մխիթարյան | 099 909081 | Մշակութային,Էկո |
| 20. | | Տարոն Գրիգորյան | 077 135507 | Ռազմամարզական |
| 21. | 8-2 | Մարի Պողոսյան | 091117141 | Էկո |
| 22. | | Սոնա Մարտիրոսյան | 098206121 | Լրատվական |
| 23. | | Լանա Մարգարյան | 043 401661 | Լրատվական |
| 24. | 8-3 | Խաչատուր Վարդանյան | 094078240 | Լրատվական |
| 25. | | Մանե Պողոսյան | 096720951 | Լրատվական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 26. | | Յանա Շարբաթյան | 096 325747 | Լրատվական |
| 27. | | Սոնա Չախոյան | 041 316699 | Մշակութային |
| 28. | | Լալա Հովհաննիսյան | 091483895 | Մշակութային |
| 29. | 9-1 | Քալաշյան Ազատե | 099012227 | Լրատվական |
| 30. | | Հովհաննիսյան Վեներա | 043785837 | Էկո |
| 31. | | Միրզոյան Սոֆի | 077028060 | Լրատվական |
| 32. | 9-2 | Ռոզի Առաքելյան | 093875551 | Էկո |
| 33. | | Վիկտորյա Պետրոսյան | 043926983 | Էկո |
| 34. | | Գագիկ Սիմոնյան | 093102716 | Ռազմամարզական |
| 35. | 9-3 | Հակոբյան Ստեփան | 091308640 | Ռազմամարզական |
| 36. | | Նարեկ Թումանյան | 091908174 | Ռազմավարական |

:

**Ուժեղ կողմեր**

- Դպրոցի մթնոլորտը նպաստում է սովորողների,մանկավարժների և տնօրինության համագործակցությանը:
- Դպրոցում ստեղծված է սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմաններ
- Սովորողների իրավունքներն և ազատությունները պաշտպանվում են թե մանկավարժների, թե՝ծնողների կողմից:
- Դպրոցը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում է դրանց իրագործմանը:

- Դպրոցում կարևորվում է սովորողների կարծիքը, լսվում են առաջարկությունները:
- Աշակերտական խորհրդի նախագահը ընտրվել է սահմանված կարգով:
- Դպրոցում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները, նախասիրությունները:
- Աշակերտական խորհուրդը ակտիվ է,կազմակերպում է բազմաբնույթ միջոցառումներ իր նախաձեռնությամբ:
- Դպրոցում գործող Բանավեճի ակումբի բոլոր մասնակիցները ԱԽ-ի անդամներ են:
- Աշակերտական խորհրդում գործում են Մշակութային, Ռազմամարզական, ԷԿՈ և Լրատվական հանձնախմբեր:
- Աշակերտական խորհրդի նիստերը գումարվել են առնվազն ամիսը մեկ անգամ: Աշակերտական ընդհանուր ժողովները հրավիրվել են սեպտեմբեր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում:
- ԱԽ-ն աշխատանքներ է տանում սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ:
- Աշակերտական խորհուրդը առաջարկություններ է ներկայացրել դպրոցի

տնօրինությանը՝ հաստատության ներքին կարգապահական կանոնների, սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման, դասավանդման բովանդակության, իրենց նախասիրություններին համապատասխան արտադասարանական խմբակների ձևավորման:

- սովորողների գիտելիքների յուրացման որակի ապահովման
- ԱԽ-ն պաշտպանում է դպրոցի սովորողների իրավունքները:

**Թույլ կողմեր**

- Որոշ սովորողների մոտ նկատվում է անտարբերություն կրթության նկատմամբ
- չի գործում աշակերտական հերթապահություն
- կա ինքնուրույն նախաձեռնության պասիվություն
- առկա է աշակերտական պարտականությունների կատարման թերացում
- կրթական կայքերից քիչ օգտվելը
- ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողների բացակայություն

**Ռիսկեր՝**

-անպատասխանատվության զգացում սովորողի կողմից

-արժեհամակարգի ցածր մակարդակը

-ՏՀՏ-ի ոչ ճիշտ կիրառումը

-բազմակարծիքության պակասությունը

-անինքնավստահություն սեփական ուժերին

- ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողների դիրքորոշման թերացում և կոմպլեքսավորում

**Ռիսկերը մեղմացնող կամ վերացնող գործողություններ՝**

- խրախուսել սովորողներին լինել ակտիվ, սրտացավ
- ուղղություններ մշակել աշակերտների արժեհամակարգը բարձրացնելու նպատակով
- կազմակերպել քննարկումներ և խրախուսել բազմակարծիքությունը
- ստեղծել բարեղրացիական մթնոլորտ և միջավայր աշակերների ինքնավստահությունը սեփական ուժերին բարձրացնելու համար
- ստեղծել միջավայր ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողների դիրքորոշման թերացումը և կոմպլեքսավորումը վերացնելու
- տանել աշխատանքներ ինքնավստահության, սեփական ուժերին հավատալուն միտված
- խթանել ազգային փոքրամասնության մշակույթը

**Գնահատում `**

1. ԱԽ-ն իրեն վերապահված գործառույթներից չի իրականացվել ոչ մեկը –0 միավոր
2. ԱԽ-ն իրեն վերապահված գործառույթները 30% է իրականացրել – 2 միավոր
3. ԱԽ-ն իրեն վերապահված գործառույթներից 50% է իրականացրել - 3 միավոր
4. ԱԽ -ն իրեն վարապահված գործառույթներից մինչև 80% է իրականացրել - 4 միավոր
5. ԱԽ-ն իրեն վերապահված գործառույթներից մինչև 100% է իրականացրել – 5 միավոր

## Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

**Նպատակ-**

- ✓ Ընդլայնել դպրոցի ճանաչելիությունը, համագործակցության շրջանակը
- ✓ Նպաստել սովորողների սահուն ինտեգրմանը հասարակության մեջ
- ✓ Համայնքի հետ միասին իրականացնել համայնքի կարիքներից բխող կրթություն և դաստիարակություն
- ✓ Երևանի քաղաքապետարանի , ԿԳՄՍՆ-ի հետ միասին ապահովել կրթական քաղաքականության իրականացումը
- ✓ Շահառու կազմակերպությունների հետ իրանացնել արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ

**Խնդիր**

- ➢ Կնքել պայմանգրեր ինչպես Երևանի, այնպես էլ մյուս մարզերի ԲՈՒՀ-երի, կրթական և առողջապահական ոլորտի ՀԿ-ների հետ և սերտ համագործակցել նրանց հետ իրականացնելով համատեղ ծրագրեր
- ➢ Իրականացնել «Երեխաները երեխաներին » համագործակցային ծրագիրը ԼԽՈՒԵ -ի հատուկ դպրոց ռեսուրս կենտրոնի սովորողների հետ

Ջոն Կիրակոսյանի անվան հ. 20 հիմնական դպրոցը <<Այգեստան>> թաղամասի տարածքում գտնվող միակ հանրակրթական դպրոցն է,այն դարձել է թաղամասի այցեքարտը:Դպրոցը ոչ միայն կրթօջախ է, այլ նաև կրթամշակութային, մարզաառողջարարական համալիր, որը բազմաթիվ միջոցառումներով, թատերական, գեղագիտական, ձեռարվեստի, սպորտային խմբակներով /կարատե, բասկետբոլ, գեղարվեստական գիմնաստիկա/ համախմբել է համայնքը, դարձել նրա կերտրոնը: Դպրոցը սերտ կապի մեջ է համայնքի հետ, որտեղ տիրում է համագործակցության և փոխօգնության մթնոլորտ: Այն համայնքի հոգեհարազատ մասնիկն է:

<<Այգեստան>> համայնքը դպրոցի առօրյային քաջատեղյակ և խնդիրներին աջակցող համայնք է: Դպրոցի սովորողները մեծամասնությամբ <<Այգեստան>> համայնքից են: Նրանք տեղյակ են համայնքային հիմնախնդիրներին և հասկանում են շրջակա միջավայրի նկատմամբ խնամատար վերաբերմունքը, ակտիվորեն մասնակցում շաբաթօրյակներին և համայնքի կազմակերպած տարբեր միջոցառումներին, յուրաքանչյուր նախաձեռնությանը, տոնակատարություններին:

1. Դպրոցը սերտ համագործակցում է Երևանի քաղաքապետարան/տարբեր միջոցառումներին մասնակցություն, անվճար աբոնեմենտներ կրթամշակութային վայրեր այցելելու համար,հանդիպումներ տարբեր նշանավոր արվեստի գործիչների հետ,մրցույթներ/,**ԿԳՄՍՆ-ի / <<**Գիտնականը դպրոցում>> ծրագիրը/, **ԿՏԱԿ-ի՝** <<Գյուղական համայնքներում բացակա ուսուցիչների խնդրի լուծումը էլեկտրոնային դասավանդման միջոցով >>, **ԿԶՆԱԿ**-ի <<Հայ երգը դպրոցում>> հանրապետական, Global Generation, **<<**Միջմշակութային հաղորդակցում, տարբեր մշակույթների և ժառանգությունների արժևորում>>, **<<**Ընթերցանությունը տարրական դպրոցում>> ծրագրերին մասնակցություն/, , **ՀՄԿ-ի** /տարբեր վերապատրաստումներ, թե ուսուցիչների համար, թե՝ աջակցող թիմի մասնագետների համար,ԿԱՊԿ ունեցող սովորողների մասնակցություն տարբեր միջոցառումներին,ելույթներ աշխատաժողովներում/, **ԵՊՀ-ի**/ ուսանողական պրակտիկա, մասնագիտական կողմնորոշում, <<Գիտելիքը ուժ է>>ծրագիր, տարբեր էքսպոների մասնակցություն/, **ԵՊՄՀ-ի** / հատկապես Հատուկ և ներառական կրթության և Սկզբնական կրթության ֆակուլտետների հետ/ , **ԵՊԼՀ-ի** /ուսանողական պրակտիկա,ուսուցիչների վերապատրաստումներ,տարբեր դասընթացների մասնակցություն/ , **Ֆիզկուլտուրայի ինստիտուտ** / վերապատրաստումներ, Հատուկ օլիմպիադաներին ԿԱՊԿ ունեցող սովորողների մասնակցություն, **ՖԻՖԱ-ի հետ** / ֆուտբոլի մրցաշարեր/ **Ամերիկյան** /կլոր սեղաններ,հատկապես ներառականությանը վերաբերող/, **Հյուսիսային** /տարբեր աշխատաժողովների մասնակցություն/, **Մեսրոպ Մաշտոց /** ուսանողական պրակտիկա **/, Ուրարտու** / ուսանողական պրակտիկա / համալսարանների հետ, **Իմ դպրոց** կայքի/տարբեր մրցույթների մասնակցություն/, **E-school Armenia** և **<<Վիզուալ Հայաստան>>** զարգացման հիմնադրամի հետ, Սյունիքի մարզի **Աշոտավանի միջնակարգ դպրոցի** հետ /Ասմունքի մրցույթներ,Մայրենիի տոն, Պոեզիայի միջազգային տոն/, **Էջմիածնի Էօրնեկյան դպրոցի** հետ /օլիմպիադաների մասնակցություն,ճամբար/, **Այբ դպրոցի** հետ / մասնակցություն Կենգուրու,Մեղու,Ռուսական արջուկ մրցույթներին/, ԼԽՈՒԵ հատուկ

դպրոցի հետ / փոխայցելություններ,համատեղ միջոցառումներ, սեմինարներ ուսուցիչների համար/, **Խարբերդի** մանկատան հետ / Պերկինսի վերապատրաստումներ ուսուցիչների համար/, **Ա.Իսահակյանի և Խնկո Ապոր անվան գրադարանների** հետ / տարբեր մրցույթներ, գրքի քննարկումներ/, **ԼՈՒՍԷ**, **h.8 , h.15 մանկապարտեզների** հետ/ Սահուն անցում ծրագիր/, **Էդիտ Պրինտ, Զանգակ** հրատարակչություններ/ տարբեր մրցույթների մասնակցություն,այցելություններ,գրքերի շնորհանդեսներ/, **QSI** միջազգային դպրոց/պլաստիկ շշերի հավաքում,3 տարի անընդմեջ դպրոցը գրավել է 1-ին պատվավոր տեղը/, **Էպիկենտրոն** ՀԿ-ի հետ / վճարովի և անվճար վերապատրաստումներ դպրոցի ուսուցիչների կողմից Արցախում,առկա և հեռավար ձևաչափով/, <<**Բարի մամա**>> ՀԿ-ի հետ

*Դպրոցի գործընկեր հայկական և միջազգային կազմակերպություններն են՝*

2. ՅՈՒՆԵՍԿՕ
3. ՅՈՒՆԻՍԵՖ
4. Հույսի կամուրջ
5. Առաքելություն Արևելք
6. Հայկական Կարմիր խաչ
7. Հայկական Կարիտաս
8. Մենք կարող ենք
9. Կրթություն առանց սահմանների
10. Բրիտանական խորհուրդ
11. Հայ մայրեր
12. ECO-դպրոց երիտասարդական կազմակերպություն
13. Աջակցենք սահմանամերձ բնակավայրերին
14. Ձեզ համար
15. Մասնագիտական կողմնորոշման մեթոբանական կենտրոն
16. Ջինիշյան հիմնադրամ
17. ԴԾԽԱԱ
18. ԼՈՒՍԷ
19. «Պերկինս»-միջազգային կազմակերպություն
20. «Վորլդ վիժն » միջազգային կազմակերպություն

21. QCI միջազգային դպրոց

22. Էդիտ Պրինտ,Զանգակ հրատարակչությունները

23. «Բարի մամա» -ՀԿ

24. «Էպիկենտրոն»-ՀԿ Արցախ

**Ուժեղ կողմեր**

- Դպրոցը սերտ կապի մեջ է համայնքի հետ, որտեղ տիրում է համագործակցության և փոխօգնության մթնոլորտ:
- Համայնքը իր ներդրումն է ունեցել Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված ԾԻԳ-ի ծրագրով անցած նախակրթարանի բացման աշխատանքներում:
- Դպրոցի սովորողները մեծամասնությամբ <<Այգեստան>> համայնքից են: Նրանք տեղյակ են համայնքային հիմնախնդիրներին:
- Դպրոցի սովորողները ակտիվորեն մասնակցում են շաբաթօրյակներին և համայնքի կազմակերպած տարբեր միջոցառումներին, համայնքի յուրաքանչյուր նախաձեռնությանը, տոնակատարություններին:
- Դպրոցը սերտ համագործակցում է Երևանի քաղաքապետարանի,ԿԳՄՍՆ-ի, ԿՏԱԿ-ի,ԿԶՆԱԿ-ի , ՀՄԿ-ի, ԵՊՀ-ի, ԵՊՄՀ-ի , ԵՊԼՀ-ի , Ֆիզկուլտուրայի ինստիտուտ / վերապատրաստումներ, Հատուկ օլիմպիադաներ, ՖԻՖԱ-ի հետ / ֆուտբոլի մրցաշարեր/ Ամերիկյան, Հյուսիսային, Մեսրոպ Մաշտոց, Ուրարտու համալսարանների հետ, Իմ դպրոց կայքի, E-school Armenia և Աշխարհացույց հարթակների հետ, Սյունիքի մարզի Աշոտավանի միջնակարգ դպրոցի հետ, Էջմիածնի Էօրնեկյան, Այբ դպրոցների հետ, ԼԽՈՒԵ հատուկ դպրոցի, Խարբերդի մանկատան հետ, Ա.Իսահակյանի,Խնկո Ապոր անվան գրադարանների հետ, հ.8 , հ.15 մանկապարտեզների հետ, Էդիտ Պրինտ, Զանգակ հրատարակչությունների հետ:Համատեղ իրականացվել են տարբեր ծրագրեր,միջոցառումներ,նախագծեր:
- Համագործակցության արդյունքում սովորողները զրավել են պատվավոր տեղեր,դարձել են ինքնավստահ,նախաձեռնող:
- Դպրոցը նաև համագործակցում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, Բրիտանական

Խորհուրդի, <<Հույսի կամուրջ>> ՀԿ-ի, <<Առաքելություն Արևելք>> միջազգային ՀԿ-ի, Հայկական Կարմիր խաչի, <<Հայկական Կարիտաս >> բարեգործական ՀԿ-ի, <<Մենք կարող ենք>>, <<Հայ Մայրեր>>, <<Ձեզ համար>, <<Բարի մամա>>,<<Էպիկենտրոն>> ՀԿ-ների, <<Կրթություն առանց սահմանների>> ՀԿ-ի , Աջակցենք սահմանամերձ բնակավայրերին քաղաքացիական նախաձեռնության հետ, Մասնագիտական կողմնորոշման մեթոբանական կենտրոնի, Ջինիշյան հիմնադրամի, ԴԾԽԱԱ ՀԿ-ի, ԼՈՒՍԷ  հիմնադրամի հետ:

**Թույլ կողմեր**

- Համայնքում դեռ կան  ընտանիքներ, որոնք իրենց երեխաների կրթություն ստանալը տեսնում են ուրիշ դպրոցներում՝խուսափելով ԿԱՊԿ ունեցող սովորողներից
- Թույլ է համագործակցությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ

**Ռիսկեր ՝**

- Համայնքում ձևավորված կարծրատիպ ԿԱՊԿ ունեցող սովորողների մասին
- Տարբեր ՀԿ-ների գործունեության դադարեցումը
- Իրականացվող ծրագրերի ժամկետների ավարտը
- Դպրոց այցելող գիտնականների զբաղվածությունը

**Ռիսկերը մեղմացնող կամ  վերացնող գործողություններ՝**

- Փնտրել համագործակցության այլ եզրույթներ
- Նախաձեռնել , փնտրել և մասնակցել այլ կրթական ծրագրերին
- Անցկացնել միջոցառումներ համայնքում համընդհանուր ներառման մասին իրազեկվածության աստիճանը բարձրացնելու նպատակով

**Գնահատում ՝**

1. Համագործակցության ոչ մի աշխատանք չի իրականացվել – 0 միավոր
2. Համագործակցությունը իրականացվել է միայն համայնքի հետ- 1 միավոր
3. Համագործակցություն իրականացվել է համայնքի և ԲՈՒՀ-երի հետ  –  2 միավոր

4. Համագործակցությունը իրականացվել է համայնքի, ԲՈՒՀ-երի, տեղական ՀԿ-ների հետ - 3 միավոր

5. Համագործակցությունը իրականացվել է համայնքի,ԲՈՒՀ-երի, տեղական, միջազգային կառույցների, ՀԿ-ների հետ - 4 միավոր

6. Համագործակցությունը իրականացվել է համայնքի,ԲՈՒՀ-երի,տեղական միջազգային կառույցների, ԿԶՆԱԿ-ի հետ – 5 միավոր

**Դպրոցում կառավարման նոր համակարգի կիրառման ժամանակ կձևավորվի համագործակցություն վարչատնտեսական համակարգողի հետ՝ ի շահ սովորողի, հասարակության և պետության քաղաքականության իրականացմանը:**

## Կրթական միջավայրը

## Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակ

**Նպատակն է**

- ✓ ապահովել ժամանակակից պահանջներին համապատասխան կրթություն
- ✓ ապահովել սովորողների կողմից Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշչի և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը
- ✓ նպաստել անհատի բազմակողմանի զարգացմանը, նրա առողջության պահպանմանը, ինքնակրթության պայմանների ստեղծման ապահովմանը
- ✓ կազմակերպել սովորողների կարիքներին և նախասիրություններին համապատասխան կրթությունը
- ✓ բարելավել բնագիտական ուղղությամբ կրթության որակը
- ✓ աջակցել բազմալեզու մոտեցումների օգտագործմանը
- ✓ աջակցել ԲՏՃՄ ոլորտներում սովորողների պատրաստվածությանը, օտար լեզուների տիրապետմանը
- ✓ ձևավորել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կարողունակությունները
- ✓ զարգացնել սովորողների քննադատական, վերլուծական, նորարարական, ինքնուրույն և ստեղծագործական մտածողությունը
- ✓ զարգացնել մշտադիտարկման համակարգը
- ✓ արժևորել մասնագիտական կողմնորոշմանը նպաստող աշխատանքները
- ✓ նպաստել սովորողների ակտիվ մասնակցությանը առարկայական օլիմպիադաներին
- ✓ արժևորել սովորողների մասնակցայնությունը
- ✓ խթանել 21-րդ դարի բնորոշ հմտությունները
- ✓ ձևավորել ՀՊՉ-ով սահմանված 8 կարողունակությունները
- ✓ ձևավորել իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու ,

վերլուծելու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ սովորողների մոտ

- ✓ ձևավորել վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ
- ✓ ձևավորել արժեքային համակրգի ընդհանուր մշակույթ
- ✓ խթանել համընդհանուր ներառման քաղաքանությանը
- ✓ մշակել համակարգված աշխատանքային պլան՝ համընդհանուր ներառման իրականացման նպատակներին հասնելու համար
- ✓ ապահովել առանց բռնության միջավայր դպրոցում
- ✓ զարգացնել սովորողների մոտ որոշումներ կայացնելու կարողությունը
- ✓ ձևավորել միջմշակութային հաղորդակցական հմտություններ և կարողություններ
- ✓ զարգացնել բնապահպանական կրթությունը

**Խնդիր**

- ➢ գտնել լուծումներ կրթության մատչելիության, որակի և արդյունավետության հետ կապված բազմապիսի խնդիրների
- ➢ խթանել ուսուցիչների մոտիվացիան
- ➢ ապահովել սովորողների մասնակցությունը տարբեր նախագծային ուսումնական ծրագրերին
- ➢ խթանել սովորողների մոտիվացիան թիմային աշխատանքի,բիզնես մտածելակերպի,աշխատանքի պլանավորման և բաշխման միջոցով
- ➢ զարգացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքի գնահատման, նրանց համար հարմարեցված և անհատականացված ուսումնամեթոդական նյութերի և ծառայությունների, մշտադիտարկման համակարգի շարունակականությունը
- ➢ համագործակցել ավագ դպրոցների , բարձրագույն կրթական ուսումնական հաստատությունների հետ մասնագիտական կողմնորոշման համար
- ➢ աջակցել չափորոշչահեն կրթական միջավայրի ձևավորմանը
- ➢ ապահովել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կիրառումը դասերին
- ➢ ստեղծել ԲՏՃՄ-խմբակներ սովորողների պատրաստվածությանը աջակցելու համար ,
- ➢ ստեղծել օտար լեզուների խմբակ , ըստ աշակերտների նախասիրությունների , շարունակել համագործակցությունը ԵՊՀ-ի, ՀՄՊՀ-ի ,ԵրՊԼՀ-ի, Բրիտական Խորհրդի հետ:
- ➢ համագործակցել հիմնական դպրոցների հետ փորձի փոխանակման միջոցով
  - ➢ խթանել « Բանավեճի ակումբ»-ի աշխատանքները սովորողների քննադատական, վերլուծական, նորարարական, ինքնուրույն և ստեղծագործական մտածողությունը ձևովորելու համար:
  - ➢ ստեղծել խմբակ օլիմպիադաներին մասնակցող աշակերտների գիտելիքները հզորացնելու համար
  - ➢ ապահովել մասնակցային կրթական միջավայր
  - ➢ աջակցել սովորողների 21 -րդ դարի հմտությունները տիրապետելուն ,ինչպես դասերի ընթացքում , այնպես էլ արտադասարանական , արտադպրոցական միջոցառումերի ժամանակ
  - ➢ ստեղծել բարոյահոգեբանական փոխվստահության մթնոլորտ աշակերտների ինքնաճանաչողական և սոցիալակն կարողությունները ձևավորելու համար
  - ➢ պարբերաբար թարմացնել դպրոցի էլեկտրոնային կրթական տիրույթը

- համապատասխանացնել կրթությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար , սովորել կիրառելու համար ,սովորել լինելու համար , սովորել միասին ապրելու համար
- կանխարգելել ուսուցիչների և երեխաների հանդեպ բռնությունը ,
- կազմակերպել գրքերի քննարկումներ , իրավիճակների վերլուծություններ , որը կնպաստի որոշումեր կայացնելու համար
- ակտիվացնել Ի-թվինինգ հարթակում մասնակցայնությունը
- կազմակերպել ամառային դպրոց ետ մնացող սովորողներին օգնելու նպատակով
- նպաստել ձևավորմանը չինարեն լեզվի իմացության կարողությունները կիրառական մակարդակով
- գործնական աշխատանքների,նախագծերի միջոցով աջակցել զարգացնելու սովորողների բնապահպանական կարողությունները
- կազմակերպել շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ /պլաստիկ շշերի,թղթերի հավաքում/
- կազմակերպել կրթության որակի բարելավմանը միտված շարունակական միջոցառումներ՝ֆորումներ,աշխատաժողովներ,վեբինարներ,կլոր սեղաններ

Դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, առաջնային պլանի վրա է դրված աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները, որոնք հիմնված են երկուստեք փոխադարձ հարգանքի , վստահության, իրար օգնելու, համագործակցելու վրա: Այստեղ խրախուսվում են աշակերտների ինքնավար գործողությունները և ստեղծագործական մտածելակերպը:Սովորողների իրավունքները պաշտպանված են:

Դպրոցն ապահովում է բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարներ և, իհարկե, անհատական մոտեցում: Բոլոր երեխաները հարգալից վերաբերմունքի են արժանանում և ստանում հավասար հնարավորություններ՝ համատեղ սովորելու համար:

Դպրոցը գիտակցում է , որ ուսումնական գործընթացում մեծ է ուսուցչի դերն ու ազդեցությունը, ինչպես նաև իր պատասխանատվությունը յուրաքանչյուր սովորողի ֆիզիկական, հոգևոր և սոցիալական առողջության համար: Աշակերտներին ֆիզիկական վիճակին հետևում են դպրոցի տարբեր օղակներ՝ դասղեկը, ուսուցիչները, մանկավարժները, բուժքույրը :Պահպանված են Առողջապահության նախարարի կողմից սահմանված նորմերի մեծ մասը:

Դպրոցն ունի լաբորատորիաներ, որտեղ կան բոլոր անհրաժեշտ պայմանները. ֆիզիկայի,քիմիայի, կենսաբանության ժամանակակից պահանջները բավարարող փորձեր,դասեր անցկացնելու համար: Հաճախ հրավիրվում են Կենտրոն վարչական շրջանի մյուս դպրոցների ուսուցիչներ և սովորողներ:

Դասի ընթացքում դպրոցի ուսուցիչները մշտապես օգտագործում են ՏՀՏ, ուսումնադիտողական պարագաներ (քարտեզներ, տեղեկատու պաստառներ, տեսալսողական նյութեր): Հաճախ կազմակերպվում են թեմատիկ նյութերի դիտումներ: Դպրոցն ունի ուսումնադիտողական պարագաների մեծ պաշար:

Դպրոցի գրադարանը լուսավոր է, հագեցած տարատեսակ գրականությունով, ունի ընթերցասրահ: Գրադարանից օգտվում են թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները: Այստեղ հաճախ կազմակերպվում են միջոցառումներ, բաց դասեր, մրցույթներ՝ հատկապես

ընթերցանության:<<Ընթերցանությունը տարրական դպրոցում>> ծրագրի շրջանակներում կազմակերպվում են ընթերցանության ստուգումներ 2-րդ և 3-րդ դասարանի աշակերտների հետ: Գրքասերները այստեղ հանդիպում են քննարկելու իրենց կողմից առաջարկված գրքերի մասին: Գրադարանը սովորողների համար ոչ միայն գիրք վերցնելու, այլ նաև ընթերցելու և ընկերների հետ քննարկելու միջավայր է: Դպրոցը սերտ կապի մեջ է Խնկո Ապոր և Իսահակյանի անվան գրադարանների հետ,դպրոցի սովորողները հաճախ մասնակցում են այնտեղ կազմակերպվող միջոցառումներին,գրական ցերեկույթներին:Գրադարանը պարբերաբար համալրվում է նոր գրքերով,ավանդույթ է դարձել գիրք նվիրելու օրը սովորողները գիրք են նվիրում նաև գրադարանին:

Գրադարանի դասագրքերը ժամանակին հաշվառվում,վերադասավորվում են ըստ դասարանների: Դասագրքերը բաշխվում են մինչև սեպտեմբերի 1-ը՝ ըստ գրաֆիկի:Միջին դպրոցի դասագրքերի ներդրումային գումարների չափի մասին ԿԳՄՍ նախարարի հրամանը փակցված է լինում հայտարարությունների պատին՝ ի տես աշակերտներին, ծնողներին, ուսուցիչներին:Վարձավճարով տրված դասագրքերի գումարը ժամանակին մուծվում են բանկ:Մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստերում հաստատված է պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար դասագրքերի տրամադրումը սոցիալապես անապահով ընտանիքներին,միակողմանի և երկկողմ ծնողազուրկ և ԿԱՊԿ ունեցող երեխաներին: Պարբերաբար ստուգվում են դասագրքերի պահպանման վիճակը:Դպրոցում գործում է դասագրքերը վերանորոգելու հանձնաժողով:

Սպորտդահլիճները հագեցած են սպորտային գույքով, կազմակերպվում են տարբեր մրցաշարեր ֆուտբոլից, բասկետբոլից, վոլեյբոլից, սպորտլանդիաներ՝ թե ներդպրոցական, և թե՝ ուրիշ դպրոցների հետ:

Դպրոցում, ըստ սովորողների նախասիրության, գործում են անվճար խմբակներ՝ Պատանի ֆիզիկոսի, գեղագիտական/դաշնամուր/, Ձեռարվեստ, Թատերական, Տուրիզմի:Երեք խմբակների ծրագրերը երաշխավորված են ԿԳՄՍՆ-ի կողմից:Թատերական խմբակին աջակցվում է Կենտրոն վարչական շրջանի Արվեստի դպրոցը:

Նախակրթարանը միանշանակ նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավոտությանը: Երեխաները մեծ ոգնորությամբ և ուրախությամբ են հաճախում , քանի որ իրենց համար ստեղծված է հրաշալի հարմարավետ պայմաններ: Կատարվում է սահուն անցում տարրական դպրոց:Նախակրթարանի դաստիարակը վերապատրաստված է Համաշխարհային բանկի կողմից:

Դպրոցը լիարժեք ապահովում է բոլոր սովորողների հավասար մասնակցությունը ուսումնառության գործընթացին : Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 դպրոցը շուրջ 16 տարի իրականացնում է ներառական կրթություն: Դպրոցն իրականացնում է երեխաների հավասար իրավունքների, հանդուրժողականությանը նվիրված զրույցներ թե բոլոր առարկայական դասերին, թե՝ դասղեկի ժամերի շրջանակներում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները հավասարապես մասնակցում են դպրոցի և դասի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի / մրցույթներ, հանդեսներ, էքսկուրսիաներ/: Ներառական կրթության զարգացմանը աջակցում են ոչ միայն դպրոցի աշխատակիցները, այլև ծնողները, համայնքը, ընդհանրապես այն բոլոր մարդիկ, որոնց միջամտությունը այս կամ այլ կերպ կարող է օգտակար լինել: Ֆոտոնկարիչ Նարեկ Արշակյանի

"Աշխարհը՝ աշխարհի մեջ" խորագրով ֆոտոցուցահանդեսին ակտիվ մասնակցություն ունեցան դպրոցի ԿԱՊԿ ունեցող սովորողները: Դպրոցի 6 ԿԱՊԿ ունեցող սովորող <<Հույսի կամուրջ>>ՀԿ-ի թատերական խմբակի անդամներ են:

Իհարկե հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողները մի փոքր տեղաշարժման խնդիրներ ունեն թեքահարթակների բացակայության պատճառով, բայց դպրոցը գտնում է խելամիտ հարմարեցումներ ուսումնական միջավայրը բարելավելու համար:Դասարաններ են իջեցվում առաջին հարկ, տեղադրվում են շարժական թեքահարթակներ: ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսուցումը բարելավելու նպատակով դպրոցում գործում են ռեսուրս սենյակներ, որտեղ տվյալ սովորողներին աջակցություն են մատուցում դպրոցի համապատասխան մասնագետները: Արդեն մի քանի տարի է դպրոցը ուզում է վերելակի հարց լուծել, բայց դեռ չի ստացվում: Տվյալ սովորողների համար զուգարաններում տեղադրվել են հարմարեցված բռնակներ:

Դպրոցում ապահոված է յուրաքանչյուր երեխայի որակյալ կրթություն ստանալու իրավունքը, մշակված է ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների այնպիսի կիրառում, որը կնպաստի ապահովել ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայր, ուսումնական գործընթացը կազմակերպվում է այնպես, որ նպաստի սովորողների առողջության պահպանմանն ու ամրապնդմանը:Դպրոցում ստեղծված է համագործակցության միջավայր, օգտագործվում է համատեղ դասավանդման մոդելը,սովորողները հնարավորություն են ունենում տարբեր ձևերով իրենց իմացածը/գիտելիքը ցուցադրելու,հաշվի է առնվում յուրաքանչյուր սովորողի առանձնահատկություններն ու կարիքները,ստեղծված են հավասար հնարավորություններ՝անկախ սովորողների կարողություններից:

Դպրոցի 2 աշակերտների համար իրականացվում է տնային ուսուցում՝մեկը շարժողական ֆունկցիաների խորը խանգարում կարիքով,մյուսը՝Շարժողական ֆունկցիաների ծանր,ինտելեկտուալ/մտավոր/ֆունկցիաների միջին,ձայնի և խոսքի ֆունկցիաների միջին խանգարումներ կարիքով:

Դպրոցը պատասխանատվություն է կրում ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել,ինքնադրսևորվել և ստեղծագործել: Դպրոցի միջավայրը միտված է զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները, նպաստում է սովորողների մեջ ձևավորել այն 8 կարողունակությունները, որոնք սամանված են ՀՊՉ-ով:

Դպրոցում չեն գրանցվել ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքեր. այդուհանդերձ իրականացվում են ծրագրեր դրանց օգտագուրծումը կանխարգելելու ուղղությամբ:Դպրոցում չեն գրացվել մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր:

Դպրոցում գործում են սովորողների նկատմամբ վերահսկողություն և կանխարգելման աշխատանքներ իրականացնելու մեխանիզմներ՝ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման իրականացման դեմ:

Դպրոցն իրականացնում է նաև երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկմանն ուղղված

միջոցառումներ,համագործակցելով համապատասխան մարմինների հետ:

Դպրոցում դասղեկի ժամերին զրույցների միջոցով (դասղեկական պլանների համաձայն) և ուսումնական առարկաների ընձեռած հնարավորությունների սահմաններում աշխատանք է տանում՝ ուղղված ընդդեմ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման:

Ուսուցիչները կարևորում են աշակերտների հոգևոր և բարոյական որակների ձևավորումը՝ օգտագործելով իրենց դասավանդած առարկաների դաստիարակչական հնարավորությունները: Դպրոցում ցանկացած գործունեություն նպատակաուղղված է ձևավորելու հարգալից վերաբերմունք լեզվի,ազգային և համամարդկային մշակույթի, ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը և փոխանցողը:

Ուսուցիչները պարբերաբար մասնակցում են տարբեր դասընթացների: Ցանկացած վերապատրաստումից հետո վերապատրաստված ուսուցիչը մանկավարժական խորհրդում ներկայացնում է իր ստացած գիտելիքները այդ վերապատրաստումից, նաև կազմակերպվում են հեռավար վերապատրաստումներ դպրոցի մենթոր ուսուցիչների կողմից,հատկապես՝ձևավորող գնահատում,համատեղ դասավանդման, շրջված դասարանի մոդելները, 5 քայլով դասի պլանավորումները, ՏՀՏ նորագույն տեխնոլոգիաների դասապրոցեսին օգտագործման թեմաներով:
Դպրոցի անձնակազմն իր աշխատանքում որդեգրել է երեք առավելապես կարևոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝

- մասնակցություն
- համագործակցություն
- հավասարություն

Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: **Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է:**

Ուժեղ կողմեր՝

- Առարկայական ծրագրերի,թեմատիկ պլանների,սկնակների համար նաև օրվա պլանների հետևողական կատարում
- Դպրոցն ապահովում է բոլոր երեխաների մասնակցությունը
- Դպրոցն ունի լաբորատորիաներ, որտեղ կան բոլոր անհրաժեշտ պայմանները. ֆիզիկայի,քիմիայի, կենսաբանության ժամանակակից պահանջները բավարարող փորձեր,դասեր անցկացնելու համար
- Դասի ընթացքում դպրոցի ուսուցիչները մշտապես օգտագործում են ՏՀՏ, ուսումնադիտողական պարագաներ (քարտեզներ, տեղեկատու պաստառներ, տեսալսողական նյութեր)

- Դպրոցի գրադարանում հաճախ կազմակերպվում են միջոցառումներ, բաց դասեր, մրցույթներ՝ հատկապես ընթերցանության
- Մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստերում հաստատված է պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար դասագրքերի տրամադրումը սոցիալապես անապահով ընտանիքներին,միակողմանի և երկկողմ ծնողազուրկ և ԿԱՊԿ ունեցող երեխաներին:
- Սպորտդահլիճները հագեցած են սպորտային գույքով
- Դպրոցում, ըստ սովորողների նախասիրության, գործում են անվճար խմբակներ՝ Պատանի ֆիզիկոսի, գեղագիտական/դաշնամուր/, Ձեռարվեստ, Թատերական, Տուրիզմի
- Դպրոցում գործում է նախակրթարան
- Դպրոցը լիարժեք ապահովում է բոլոր սովորողների հավասար մասնակցությունը ուսումնառության գործընթացին
- Դպրոցը գտնում է խելամիտ հարմարեցումներ ուսումնական միջավայրը բարելավելու համար:
- ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսուցումը բարելավելու նպատակով դպրոցում գործում են ռեսուրս սենյակներ
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները հավասարապես մասնակցում են դպրոցի և դասի բոլոր գործընթացներին` ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի
- Դպրոցը գտնում է խելամիտ հարմարեցումներ ուսումնական միջավայրը բարելավելու համար:
- Դպրոցում չեն գրանցվել ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքեր.
- Դպրոցում չեն գրացվել մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր:
- Դպրոցում ձևավորված է անվտանգ միջավայր երեխայի զարգացման համար
- Դպրոցի միջավայրը միտված է զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները, նպաստում է սովորողների մեջ ձևավորել այն 8 կարողունակությունները, որոնք սամանված են ՀՊՉ-ով:
- Դպրոցում ցանկացած գործունեություն նպատակաուղղված է ձևավորելու հարգալից վերաբերմունք լեզվի,ազգային և համամարդկային մշակույթի, ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը և փոխանցողը:

Թույլ կողմեր՝

- Հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողները մի փոքր տեղաշարժման խնդիրներ ունեն թեքահարթակների բացակայության պատճառով
- Արդեն մի քանի տարի է դպրոցը ուզում է վերելակի հարց լուծել, բայց դեռ չի ստացվում:

! Ռիսկեր՝

- որակյալ մասնագետների պակաս
- Ուսուցիչների մոտիվացիայի պակաս
- Սովորողների մոտիվացիայի պակաս
- Ցածր կարգավիճակ ունենալը , թույլ լինելը
- Ուսուցիչ -աշակերտ ՏՀՏ-ի զինվածության սակավությունը
- Հարափոփոխ աշխարհում շփման կարողությունների և հմտությունների պակասը
- չինարենի որակավորում ունեցող անվճար մասնագետի պակասը
- ֆիզիկական սահմանափակումները և խոչընդոտները ԿԱՊԿ ունեցող սովորողների համար

**Ռիսկերը մեղմացնող կամ վերացնող գործողություններ՝**

- Խրախուսել ուսուցիչներին շնորհակալագրերով , դրամական պարգևատրումներով
- Խրախուսել սովորողներին շնորհակալագրերով , պատվոգրերով, «Դավիթ Սարապյանի անվան » կրթաթոշակի արժանանալով
- Կանխարգելել բուլինգը դպրոցում , իրականացնել « Մարդասիրություն» ծրագիրը
- դասերից հետո տրամադրել դպրոցի նյութատեխնիկական բազան սովորողներին և ուսուցիչներին օգտագործելու օգուտ դպրոցավարությանը
- Սովորեցնել վարվեցողության և պահելաձևերի կանոնները
- Համագործակցել Չինաստանի դեսպանատան հետ , դիմել ԵԼՊՀ-ի բարձր կուրսերի ուսանողներին աջակցության համար:

**Գնահատում՝** 1. Սահմանված նպատակների և ոչ մի կետ չի իրականացվել –0 միավոր

2. Սահմանված նպատակների կետերը իրականացվել են մինչև 40% – 1 միավոր

3. Սահմանված նպատակների կետերը իրականացվել են մինչև 60% - 3 միավոր

4. Սահմանված նպատակների կետերը իրականացվել են մինչև 80% -4 միավոր

5.Սահմանված նպատակների կետերը իրականացվել են ամբողջությամբ-5 միավոր

## Ուսումնական գործընթաց

Ուսման որակի բարձրացման ուղղությամբ նպատակահարմար եմ գտնում

- ✓ ընդլայնել կրթության կազմակերպման սովորողակենտրոն մեխանիզմները:
- ✓ ձևավորել և ապահովել մասնագիտական կողմնորոշման աշխատանքները արտադասարանական խմբակների միջոցով
- ✓ խթանել նախագծային և հետազոտական աշխատանքների կազմակերպումը

- ✓ Մոտիվացնել առարկայական օլիմպիադաների մասնակցությունը:
- ✓ Խթանել սովորողների կողմից 21-րդ դարի կարողությունների ձևավորմանը՝ մեդիագրագիտություն,տեղեկատվական գրագիտություն, ստեղծագործական քննադատական մտածողություն, ժամանակի կառավարում, սոցիալականացում:

### Դաստիարակչական գործընթաց

**Սովորողների դաստիարակության գերնպատակն է ուսումնառության ընթացքում ձևավորել 21-րդ դարի հմտությունները՝ սովորելու,գրագիտության,կյանքի:**

Կարևորում եմ նաև սովորողների դաստիարակչական գործընթացը, որի հիմնախնդիրն է յուրաքանչյուրի վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ, ազգային և համամարդկային մշակույթների պահպանման, մարդկային փոխհարաբերության, հայրենասիրության,հասարակության լիարժեք անդամ լինելու նկատմամբ՝ առանձնակի ուշադրություն դարձնելով սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, հայրենաճանաչողության ու ազգային արժեհամակարգի ձևավորմանը:Տարբեր իրավիճակներում կարողանալ ընտրություն կատարել , հմտություն ձեռք բերել , մարդկանց հետ համագործակցել խոչընդոտները հաղթահարել:Իրականացնել «Մարդասիրական դաստիարակություն ,անձնակողմնորոշիչ ուսուցում » ծրագիրը սովորողների մոտ բարու , գեղեցիկի , համերաշխության , ներողամտության , հանդուրժողականության , նվիրվածության , անկեղծության , պատասխանատվության , քաղաքավարության , բարեկրթության հայրենասիրության հատկանիշները զարգացնելու նպատակով:Ծրագիրը սովորողի անձի լիարժեք զարգացման անձնակողմնորոշիչ գործընթաց է:

**Ուժեղ կողմեր**

- Դպրոցի տնօրինությունը և մանկավարժական ողջ կոլեկտիվը ղեկավարվում է հաջողության գաղափարով:
- Դպրոցը նպատակ ունի երեխայի համար դառնալու այն տեղը, որտեղ նա իրեն լավ է զգում, կան հարմարավետ պայմաններ կենսագործունեության համար, որտեղ հետաքրքիր է բոլորին:
- Դպրոցը դարձել է ներառական փոքրիկ հասարակություն
- Ներառական կրթություն իրականացնելու ճանապարհին անցումը հույզերից արհեստավարժության
- Ներդպրոցական վերահսկողություն
- Համատեղ ուսուցման մոդելի կիրառումը
- Ծնողների համագործակցությունը ուսունական գործընթացին
- Ուսուցիչների կողմից ծրագրային տեսանյութերի ստեղծում և դասերին օգտագործում
- Ուսուցիչ-սովորող արդյունավետ փոխհամագործակցություն
- Դասերի անցկացումը լաբորատորիաներում
- ՏՀՏ կիրառությունը դասապրոցում

- Տարբեր հարթակների օգտագործումը դասապրոցեսում՝ Աշխարհացույց,Իմ դպրոց
- Ներառող դասավարդման հմտությունների բարձր մակարդակ
- Որոշ ծնողների անտարբերությունը

**Թույլ կողմեր**

- Սովորողների որոշ մասի անտարբերություն սովորելու նկատմամբ
- ՏՀՏ որոշ տեսակի սարքավորումների ծրագրային անհամապատասխանությունը

- ներառականության հետ կապված հարմարեցված ֆիզիկական և ուսումնական անբավարար միջավայր/թեքահարթակների,դասասենյակների համապատասխան լուսավորության,հարմարեցված սանհանգույցների առկայության,կարիքին համպատասխան կահույքի բացակայություն/
- տեխմիկական սարքավորումների բացակայություն /Էխո-համակարգեր,ՖՄ ապարատներ,սովորողի կարիքներին հարմարեցված համակարգիչներ/
- Սովորողների կրթական կարիքներին համապատասխան պարագաների բացակայություն/մեծ տառաչափերով գրքեր,տետրեր,համապատասխան գրքեր,ձեռնարկներ/

**Ռիսկեր**

- Դպրոցում աշխատել չցանկացող ԲՏՃՄ մասնագետներ
- ներառականության նկատմամբ կարծրատիպեր հատկապես նոր ընդունված սովորողների ծնողների կողմից
- աղետների ռիսկերի կառավարում
- հատուկ մանկավարժների բացակայությունը դպրոցից
- ՏՄԱԿ-ներում մասնագետների պակաս ռեսուրսները՝աջակցություն ցուցաբերելու ԿԱՊԿ ունեցող սովորողներին

**Ռիսկերը մեղմացնող կամ վերացնող գործողություններ՝**

- Իրազեկել ԲՏՃՄ մասնագետներին օրենքի մեջ փոփոխությունների մասին / հավելյալ վճար/
- Կազմակերպել հանդիպումներ , ժողովներ փոքր խմբերով հանրդհանուր ներառման սկզմունքները ներկայացնլու , կարծրատիպերը վերացնելու համար
- Կազմակերպել դասղեկի ժամերին աղետների ռիսկերի մասին քննարկումներ
- Համագործակցել ՏՄԱԿ -ի հետ

**Գնահատում՝**

1. Սահմանված նպատակների և ոչ մի կետ չի իրականացվել –0 միավոր

2. Սահմանված նպատակների կետերի մինչև 30% է իրականացվել – 1 միավոր

3. Սահմանված նպատակների կետերի մինչև 50% է իրականացվել - 3 միավոր

4. Սահմանված նպատակների կետերի մինչև 80% է իրականացվել -4 միավոր

5. Սահմանված նպատակների կետերի մինչև 100% է իրականացվել – 5 միավոր

## Դպրոցում օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների վերլուծություն

**Նպատակ՝**

- ✓ Զարգացնել սովորողների տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների վերաբերյալ գրագիտությունը
- ✓ Ընդլայնել ՏՀՏ կիրառումները դպրոցի ընդհանուր գործունեության մեջ
- ✓ Զարգացնել մեզիագրագիտության և թվային գիտելիքների կարողունակությունը
- ✓ Ձևավորել ԶԼՄ-ների հետ շփումների հմտություններ
- ✓ Ապահովել էլ.մատյանննների գրագետ լրացումենրը

**Խնդիր՝**

- ➢ Իրազեկել ուսուցիչներին և սովորողներին տեղեկատվական սպառնալիքների մասին
- ➢ Ինֆորմատիկայի ուսուցիչների պակաս
- ➢ ՏՀՏ սարքավորումների պակաս
- ➢ ՏՀՏ-ների կիրառման կարողունակությունների պակաս
- ➢ Իրազեկել մանկավարժներին և սովորողներին առցանց անձնական տվյալների պաշտպանության կանոնների մասին
- ➢ ծանոթացնել սովորողներին կիբերանվտանգության կանոնների մասին
- ➢ ուղղորդել նպաատակային օգտագործել ՏՀՏ-ը միփոցները և համացանցը ուսուցիչներին և սովորողներին ճիշտ օգտագործել համացանցը
- ➢ այցելել ԶԼՄ կենտրոններ

Թվային տեխնոլոգիաների շարունակական արդիականացումը ժամանակի հրամայական է դարձնում ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառման ընդլայնումը, հանրակրթական դպրոցների համալրումը արդիական համակարգչային միջոցներով և որակյալ ինտերնետային կապով, կրթական ծրագրերում ՏՀՏ բաղադրիչի ավելացումը, եղած գործիքներն օգտագործելու և նորերը ստեղծելու կարողությունների զարգացումը: ՏՀՏ կիրառումը ուսումնական գործընթացում կարևորվում է դպրոցում, նորագույն տեխնիկայով հագեցած դասասենյակները և տեխնիկայի կիրառումը դասերին նպաստում են կրթության որակի բարձրացմանը:Դպրոցի ուսուցիչների մեծամասնությունը տիրապետում է ՏՀՏ գործիքներին,հմուտ է:Դա է պատճառը,որ համաճարակի ժամանակ դպրոցը սահուն անցում է կատարել հեռավար ուսուցման:

Դպրոցում գործում է <<Վիրտուալ դպրոց>> կենտրոնը: Կենտրոնական մասնաշենքի 3-րդ հարկի 6 առարկայական կաբինետները կահավորված են նորագույն էլեկտրոնային գրատախտակներով: ինտերակտիվ հեղուկ բյուրեղյա դիսպլեյներով: Միջին դպրոցի սովորողների համար

դասարաններում տեղադրված են էլեկտրոնային գրատախտակներ, ցրիչներ,բոլորը մեկում համակարգիչներ, դյուրակիր համակարգիչներ: Ուսուցչական կազմի 75%-ը ուսումնական գործընթացում կիրառում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ: Ժամանակի հրամայականով առաջնորդվելով՝ ուսուցիչներն աշխատանքները զետեղում են նաև համացանցում՝ իրենց անձնական էջերում, համապատասխան կայքերում, նաև դպրոցի Կրթական տիրույթում: Տեսադասերից օգտվում են ոչ միայն ուսուցիչները,այլ նաև սովորողներն ու նրանց ծնողները: Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները պարտադիր օգտագործվում են դասերի ժամանակ:Ակտիվ մասնակիցներ են և ուսուցիչները,և սովորողներըէիրենց պատրաստած տեսանյութերով:
Ուսուցիչները ազատ օգտվում են էլեկտրոնային մատյանից, տեղադրում դասի թեմաները, անցկացնում թվանշանները: Ուսուցիչները հանգիստ օգտագործում են Zoom,Viber,Messenger, Microsoft Teams ,Google Drive տիրույթները:
Դպրոցը ունի բոլոր ուսուցիչների համար հասանելի տեղեկատվության դաշտ Google Drive ամպային պահեստում, որտեղ պահպանվում են դպրոցում հաստատված դասարանային դասացուցակները, ԱՈւՊ-ները, դասավանդող ուսուցիչների և դասղեկների ու դասվարների հաշվետվությունները, աշխատանքային թեմատիկ պլանավորումները և այլն: Հարթակում աշխատելու հասանելիություն է տրված դրանցում ընդգրկված աշխատակազմին՝ այդ թվում բազմամասնագիտական թիմին: Մանկավարժները կարողանում են տանից աշխատել և մշակել ԱՈՒՊ-ները իրենց ազատ ժամերին:Նրանք իրենց հաշվետվությունները ուղարկում են էլեկտրոնային տարբերակով: Տվյալ տիրույթը նաև օգնում է տնօրինությանը ներդպրոցական վերահասկողության հարցում:
ԿԱՊԿ ունեցող սովորողների տվյալները պահվում են տնօրենի անձնական համակարգչի հատուկ պանակներում և ուսուցչի օգնականի մոտ:

Մանկավարժական համակազմի **30 %-ը** նորամուծությունների իրացման պատրաստ առաջին խմբին են պատկանում՝ նորարար են և մշտապես ձգտում են նորի իրագործմանը:
Մանկավարժական համակազմի **25%-ը** նորամուծությունների իրացման պատրաստ երկրորդ խմբին են պատկանում վաղ իրականացնողներն են,ովքեր անմիջապես զնում են նորարարների հետևից՝ ցածր ռիսկային աստիճանով,որպես խորհրդականներ
Մանկավարժական համակազմի **35%-ը** նորամուծությունների իրացման պատրաստ երրորդ խմբին են պատկանում նորամուծությունները յուրացնողներն են վաղ իրականացնողների հետ, բայց պասիվ են առաջնորդի դերում
Մանկավարժական համակազմի 10**%-ը** նորամուծությունների իրացման պատրաստ չորրորդ և հինգերորդ խմբերին են պատկանում ոչ նախաձեռնող, պասիվ և տատանվող մանկավարժները:

Դպրոցի խորհրդի,մանկավարժական,ծնողական,աշակերտական խորհուրդների ժողովները անց են կացվել հիբրիդային:Ժողովին առկա ձևով մասնակցությունը փոխարինվել է հեռավարի:
Ներդպրոցական վերահսկողության շատ բաժիններ իրականացվում է ՏՀՏ-ի օգնությամբ՝ **ՌԻԴԱՏՊ**/տեղադրված է շտեմարանների պաշարում/,**ՆԳ**/տեղադրված է դպրոցի պաշտոնական կայք էջում/ և այլն:

Դպրոցում առկա են պարտադիր գործածության էլեկտրոնային փաստաթղթեր: Լիազոր մարմնի կարգադրությունները, ցուցումները, շրջաբերականները տնօրենը ստանում է Mulberry

հարթակով:
Դպրոցն ունի պաշտոնական էջ՝ www.school20.safe.am
Ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/groups/dzerjinka
Դպրոցի անձնական տիրույթ՝ https://www.4teachme.com/

Մանկավարժական խորհրդի համար ստեղծված է մեսենջերյան ուսուցչական հատուկ խումբ,ուր դրվում է դպրոցի ցանկացած հայտարարություն:

## Ուժեղ կողմեր՝

- ՏՀՏ ճկուն գործիքակազմ
- Ժամանակի արագ կառավարում
- Փաստաթղթերի հասանելիություն
- Անմիջական կապ վերադասի հետ

## Թույլ կողմեր՝

- էլեկտրոնային մատյանների լրացման ուշացումներ
- մանկավարժների, սովորողների ոչ բավարար անհրաժեշտ հմտությունները
- համագործակցության պակաս մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ
- ծնողների անտարբերություն էլեկտրոնային օրագրեր բաժնում

## Ռիսկեր՝

- մեղիագրագիտության ցածր մակարդակ
- հեռահաղորդակցման տեխնիկական միջոցների պակաս

-ինտերնետային կապի վատ որակ
-էլեկտրոնային մատյանում գնահատականների պահպանման խնդիրներ
-էլեկտրոնային օրագրի չօգտագործում

**Ռիսկերը մեղմացնող կամ վերացնող գործողություններ՝**

- մասնակցել ԿԶՆԱԿ-ի վերապատրաստումների մեդիագրագիտության վերաբերյալ , պլանավորել դաս Ապահով համացանց թեմայով, ուղղորդել օգտվել Media.am կայքից
- գտնել ինտերնետ մատուցող այլ կազմակերպություն
- պարբերապար հաղորդակցվել և խնդիրները արձագանքել ԿՏԱԿ-ին
- աջակցել ծնողներին էլեկտրոնային օրագրից ճիշտ օգտվել

**Գնահատում** ՝1.Միջոցներ չեն ձեռնակրկվել –0 միավոր

2.Ձեռնարկվել են միջոցներ մասամբ մինչև 50% – 1 միավոր

3.Ձեռնակրվել են միջոցներ /շենք -շին., ենթառուցց. / մինչև 80%-3 միավոր

4. Ձեռնակրվել են միջոցներ /շենք -շին., ենթառուցց. / մինչև 100%-4 միավոր

## Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ուսումնական առարկաների չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների և արժեքների ձևավորմամբ :Այն իրականացվում է քանակական և ձևավորող ձևերով դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով :

**Նպատակ** –

- ✓ նպաստել արձանագրված ուսումնառության արդյունքների բարձրացմանը

**Խնդիր –**

- ➢ կազմակերպել երկարօրյա ուսուցում ետ մնացող և ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսման որակը բարձրացնելու նպատակով

Կրթության որակը ապահովելու համար և ՀՊՉ-ի վերջնարդյունքներին հասնելու համար տարվում են հետևյալ աշխատանքները՝

- Ուսումնական տարվա սկզբին տրվում են մնացորդային գիտելիքների ստուգման գրավոր տարաբնույթ աշխատանքներ
- Անց են կացվում գիտելիքների միջանկյալ բանավոր ստուգում Հայ գրականություն և Հայոց պատմություն առարկաներից 7-9-րդ դասարաններում 1-ին և 2-րդ կիսամյակների ավարտին, 9-րդ դասարանում հայոց լեզվից գրավոր աշխատանքներ՝ ամեն ամիս:
- Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին գերազանց սովորող աշակերտները գրում են մաթեմատիկա առարկայից գրավոր աշխատանք անցած թեմաներից՝պատահականության սկզբունքով
- Էլեկտրոնային մատյանը պարբերաբար ստուգվում է ուսումնական գծով տնօրենի տեղակալի կողմից
- Ազգային երգ և պար առարկայից 5-7-ևդ դասարանի սովորողները դպրոցի դաշտում հանձնում են տարեվերջյան ստուգարք
- Անց են կացվում թեմատիկ աշխատանքներ,որոնք պարբերաբար ենթարկվում են փոխստուգումների,ստուգող ուսուցիչը արձանագրում է թերությունները,որին հետագայում մ/մ նիստի ժամանակ անդրադառնում է մ/մ նախագահը
- Թեմատիկ աշխատանքների արդյունքների վերլուծությունը պարտադիր կատարվում է մ/մ նիստում ուսմասվարի ներկայությամբ այն դեպքում,երբ ընդհանուր պատկերը ցածր է լինում

• Անդրադարձ է կատարվում բուն թեմատիկ աշխատանքների կազմմանը և բարդության աստիճանին: ԳԹԿ-ից հրավիրվում են մասնագետներ բացատրելու թեստ կազմելու մեթոդաբանությունը և բարդության համամասնությունը:Վատ արդյունք ցույց տված թեստերը վեր են լուծվում և բարելավվում:
• Ծրագրերի և թեմատիկ լաբորատոր գործնական աշխատանքների նախատեսված նվազագույն պահանջների կատարումը նույնպես ստուգվում է մ/մ նիստում
• Աջակցող թիմի մասնագետները շաբաթը մեկ ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ,իրենց համագործակցությունը դասվա-դասղեկների,ուսուցչի օգնականների,ծնողների հետ
• Ուսուցչի օգնականները պարբերաբար ստուգում են ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՈՒՊ-ների վարումը և քննարկում մ/մ նիստերին

• Պարբերաբար կատարվում են դասալսումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ,դրանք վեր են լուծվում մ/մ նիստերում և զեկուցվում մանկավարժական խորհուրդում
• Յուրաքանչյուր մանկավարժ ամեն կիսամյակի ավարտին ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների մասին,որտեղ առանձնացված են ետ մնացող սովորողների հետ կատարված աշխատանքները
• Տարրական դպրոցից միջին դպրոց սահուն անցման նպատակով ուսումնական տարվա ավարտին 4-րդ դասարանի դասվարները մանրակրկիտ ներկայացնում են իրենց դասարանների ուժեղ և թույլ կողմերը
• Յուրաքանչյուր ուսումնական տարվա նոյեմբեր ամսին հրավիրվում է կլոր սեղան 5-րդ դասարանում դասավանդող ուսուցիչների, այդ դասարանները հանձնած դասվարների,ուսմասվարների ներկայությամբ և քննարկվում դասվարի կատարած աշխատանքների արդյունքները

**Ընդհանուր տվյալներ սովորողների և կրթության որակի վերաբերյալ նախորդ 5 տարիների ընթացքում**

| Ցուցանիշը | 2018-2019 ուստարի | 2019-2020 ուստարի | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը | 748 | 766 | 783 | 801 | 809 |
| ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը | 81 | 80 | 79 | 83 | 81 |
| Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը | 139 | 143 | 147 | 138 | 141 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9-րդ դասարանը կարմիր վկայական ստացած սովորողների թիվը | 1 | 6 | 3 | 4 | 4 |
| Հարվածային սովորողների թիվը | 212 | 209 | 225 | 254 | 250 |
| Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը | - | - | - | - | 1 |
| Պարտադիր կրթությունից դուրս մնացած սովորողներ | - | - | - | - | - |
| Երկտարեցիների թիվը | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Որակը | 46.9 % | 45.9 % | 47.5 % | 48.9 % | 48.3 % |
| Առաջադիմությունը | 100 % | 100 % | 100 % | 100 % | 99 % |








2022-2023
2021-2022
2020-2021
2019-2020
2018-2019
99%
48.3%
100%
48.9%
[]%
47.5%
100%
45.9%
100%
46.9%
0
20
40
60
80
100
120
Առաջադիմություն
Որակ




9- ՐԴԴԱՍ. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2022-2023 ՈՒՍՏԱՐԻ
Բնագ.
Հ՚այոց լ.
Մաթեմ.
Օտար լ.
Պատմ.
գրակ.
Ֆիզկ.
48%
57%
30%
57%
50%
48%
92%




4- ՐԴԴԱՍ. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2022-2023 ՈՒՍՏԱՐԻ
Մաթեմատկա
Մայրենի
79%
93%




Դպրոցն անընդհատ աշխատում է բարձրացնել ուսման որակը: Այդ նպատակով նախաձեռնվում են բազմաթիվ միջոցառումներ: Պարբերաբար ուսումնասիրվում է տարբեր առարկաների դրվածքը. մեթոդմիավորումների նախագահները մանկխորհրդին հաշվետվություն են ներկայացնում ստուգման արդյունքների վերաբերյալ: Դպրոցը կարևորում է առարկայական օլիմպիադաների դերը և դրանց մասնակցությունը: Դպրոցի սովորողները ակտիվ մասնակցում են <<Կենգուրու, Մեղու, Ռուսական արջուկ>> մրցույթներին:

2022-2023 ուստարում Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցում սովորել են 809 աշակերտ, որից տարրական դպրոցում ՝ 378 աշակերտ, միջին դպրոցում ՝431 աշակերտ: Տարրական դպրոցի 378 աշակերտից 95-ը գերազանց առաջադիմություն են ցուցաբերել, 132-ը՝ հարվածային: Միջին դպրոցի 431 աշակերտից 46-ն են ցուցաբերել գերազանց առաջադիմություն, 118-ը՝ հարվածային: Եվ մնացող սովորող 1 աշակերտը 8-րդ դասարանցի է: Դպրոցի 81 ԿԱՊԿ ունեցող սովորողներից 27-ը սովորում են տարրական դպրոցում, 54-ը՝միջին: Բոլոր 81 ԿԱՊԿ ունեցող սովորողների համար լրացված են ԱՈՒՊ-ներ:

Յուրաքանչյուր ուստարվա նոյեմբեր ամսին հրավիրվում է կլոր սեղան 1-ին դասարանի դասվարների և 5-րդ դասարանում դասավանդող ուսուցիչների մասնակցությամբ սովորողների ստացած գիտելիքների վերլուծությն նպատակով:

Դպրոցում ուսումնական տարվա սկզբին ստուգվում են **4-րդ և 9-րդ** դասարանի սովորողների մնացորդային գիտելիքները, իսկ կիսամյակների ավարտին տվյալ դասարաններում տրվում են տնօրինության կողմից նախաքննական գիտելիքների ստուգման ամփոփիչ ստուգողական աշխատանքներ, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին անց են կացվում գիտելիքների ստուգումներ <<Հայ գրականություն>> և <<Հայոց պատմություն>> առարկաներից **7-րդ, 8-րդ, 9-րդ**

դասարաններում : **2-րդ դասարանցիները** ուսումնական տարվա ավարտին մասնակցում են ընթերցանության մրցույթին:Ամփոփիչ գրավորները ուսուցման որակի ներդպրոցական մոնիթորինգ կատարելու գործիք են: Գրավորների պատասխանատուները ուսումնական գծով տնօրենի տեղակալներն են:

Ուսումնական տարվա ընթացքում անց են կացվում բազմաթիվ բաց դասեր,համակցված դասեր,առարկայական վիկտորինաներ:

Տնային աշխատանքի ծավալի խնդրին ուսուցիչները գրագետ են մոտենում,որն էլ օգնում է պահպանելու աշակերտի առողջությունը,սովորելու ցանկությունը,որն էլ դրական ազդեցություն է ունենում ճանաչողական հետաքրքրությունների զարգացման վրա,նպաստում է երեխայի ինքնուրույնության, կազմակերպվածության,ինքնազարգացման, ազատ ժամանակի ճիշտ օգտագործման և դրա գնահատման կարողության ձևավորմանը:

Գերազանց ուսումնական միջավայր,որը նպաստում է կրթության որակի բարձրացմանը:Դրանց վերլուծության արդյունքում կարևորում եմ նաև բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողների համար կազմակերպել լրացուցիչ աշխատանքներ,ձևավորել առարկայական արտադասարանական խմբակներ,սովորողներին մոտիվացնելու մասնակցել առարկայական օլիմպիադաներին:

**Դպրոցում հանրնդանուր կրթությունը իրականացվում է բարձր մակարդակով :ԿԱՊԿու սովորողների մասնակցությունը դպրոցի ընդհանուր գործնեությանը առավել ևս ուսմանը ԿԱՊԿու կազմում է 80% , որը հաստատվել ՝ տեսչական մարմնիկողմից կատարված ստուգումների ժամանակ :**

Հավելված 2 ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի՝
2023թ. մարտի 6-ի N 17-Ա հրամանի
Ձևաթուղթ N 1
Հանրակրթական ուսումնական հաստատության (դպրոցի) ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթուղթ
*Ուսումնական միջավայր*

| | |
|---|---|
| Դպրոցի անվանումը | <<Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ |
| ԿԱՊԿՈՒ սովորողների թիվն՝ ըստ կարիքի (օր.՝ ինտելեկտուալ համախտանիշ ունեցող՝ 1) | ընդհանուր՝ 82 (ինտելեկտուալ ֆ. ծանր -21, միջին - 27, թեթև -8, ձայնի և խոսքի ֆ. խորը- 1, ծանր - 12, միջին -6, թեթև -2, շարժողական ֆ. խանգարում խորը-1, ծանր-1, միջին-2, թեթև-1 |

| N | Կանոնների* պահանջը | 3 - այո<br>2 - մասամբ<br>1 - չ/պ<br>0 - ոչ | Նշումներ | Սովորողների թիվն ըստ «B» սյունակի բնութագրիչների |
|---|---|---|---|---|
| 1 | Կրթության ցանկացած փուլում սովորողին՝ ուսումնառության գործընթացում իր կարողությունների չափով մասնակցություն ունենալուն խանգարող կայուն դժվարություններ նկատվելու դեպքում ուսուցիչը, համաձայնեցնելով սովորողի ծնողի հետ, գրավոր դիմել է դպրոցի տնօրենին՝ իրականացնելու երեխայի դպրոցական մակարդակի գնահատում | 3 | | 82 |
| 2 | Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվել են միջոցներ | 3 | | 82 |
| 3 | Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների համար ապահովվել են ուսումնառության լրացուցիչ պայմաններ (լրացուցիչ ուսումնական նյութեր, լրացուցիչ պարապմունքներ) | 3 | | 82 |
| 4 | Սահմանված կարգով գնահատված և որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) ճանաչված (վկայագիր ունեցող) սովորողներին տրամադրվել են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ | 3 | դպրոցի մասնագիտական թիմի կողմից | 82 |
| 5 | Դպրոցական մակարդակում ուսումնառության գործընթացում իր կարողությունների չափով մասնակցություն ունենալուն խանգարող դժվարություններ ունեցող (այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ) սովորողին ըստ անհրաժեշտության տրամադրվել են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ, առկա են դրանց մասին վկայող փաստաթղթեր (կանխարգելիչ միջամտությունների պլան՝ ԿՄՊ) | 3 | դպրոցի մասնագիտական թիմի կողմից | 82 |
| 6 | Դպրոցի աջակցության խմբի կազմում ընդգրկվել են դպրոցի ուսուցչի օգնական(ներ)ը, հատուկ մանկավարժ(ներ)ը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը և բուժքույրը | 3 | | |

| N | Կանոնների* պահանջը | 3 - այո<br>2 - մասամբ<br>1 - չ/պ<br>0 - ոչ | Նշումներ | Սովորողների թիվն ըստ «B» սյունակի բնութագրիչների |
|---|---|---|---|---|
| 10 | Տնօրենը հաստատել է ուսումնառության գործընթացում իր կարողությունների չափով մասնակցություն ունենալուն խանգարող դժվարություններ ունեցող յուրաքանչյուր սովորողին (այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ) տրամադրվող աջակցող ծառայությունների, լրացուցիչ պարապմունքների գրաֆիկը և ժամանակացույցը | 3 | | |
| 11 | Աջակցող ծառայությունները սովորողին տրամադրվել են դասերից հետո՝ ըստ գրաֆիկի և ժամանակացույցի | 3 | | 45 |
| 12 | Ժամանակացույցը կազմելիս նախատեսվել է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետների այցելություն դպրոց՝ առնվազն շաբաթը մեկ անգամ | 3 | Տիֆլոմանկավարժ | |
| 13 | Դպրոցի տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալն առնվազն ամիսը մեկ անգամ հրավիրել է տվյալ սովորողի ուսուցիչների և աջակցության խմբի (կամ հրավիրված մասնագետների) անդամների ժողով՝ ամփոփելու տվյալ ամսվա ընթացքում սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված աշխատանքների, այդ թվում՝ աջակցող ծառայությունների արդյունքները | 3 | | |
| 14 | Սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված արդյունքների ամփոփումն իրականացվել է կիսամյակի ավարտին՝ նկարագրական տեսքով | 3 | | 82 |
| 15 | Դպրոցը սեփական նախաձեռնությամբ իրականացրել է լրացուցիչ գործառույթներ | 1 | | |
| | ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ՝<br>36-ից բարձր՝ «Գերազանց», 35-28՝ «Շատ լավ», 29-22՝ «Լավ», 21-14՝ «Բավարար», մինչև 13՝ «Անբավարար» | 45 | Գերազանց | |

ՀՀ կրթության տեսչական մարմնի ծառայող՝ Արամ Խաչատրյան ______ Աիդա Բարսեղյան ______
ազգանուն, անուն ստորագրություն

Դպրոցի տնօրեն՝ Կ.Տ. Անահիտ Խոսրովյան ______
ազգանուն, անուն ստորագրություն

* - Կանոնները կազմվել են «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017 թ. N 370-Ն հրամանի հիման վրա

| N 2<br>Հանրակրթական ուսումնական հաստատության (դպրոցի) ներառական կրթական միջավայրի գնահատման ձնաթուղթ<br>*Ֆիզիկական միջավայր* | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դպրոցի անվանումը | | <<Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ | | | |
| N | Բնութագրիչ | Չափանիշներ | Միավոր | Ընտրված միավոր | Նշումներ |
| 1 | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) սովորողների համար առկա են օժանդակող տեխնոլոգիաներ և սարքավորումներ (սայլակ, քայլակ, լսողական սարք, հարմարեցված գրենական պիտույքներ, հարմարեցված համակարգիչ և այլն) (ըստ անհրաժեշտության) | Առկա են | 3 | 3 | |
| | | Առկա են մասամբ | 2 | | |
| | | Առկա չեն | 0 | | |
| | | Չ/պ | 1 | | |
| 2 | Դիդակտիկ նյութերը, գրատախտակի գրառումները, էկրանին ցուցադրվող նյութերը տեսանելի են բոլոր սովորողներին | Տեսանելի են | 3 | 3 | |
| | | Մասամբ են տեսանելի | 2 | | |
| | | Տեսանելի չեն | 0 | | |
| 3 | Դպրոցի ներքին ֆիզիկական միջավայրն ապահովում է սովորողի անխոչընդոտ տեղաշարժը (տեսողության խանգարումներ ունեցող սովորողների համար՝ դեղին գծեր, ուղենշող սալիկներ, տարածական կողմնորոշման ձայնային ազդանշաններ, սայլակով տեղաշարժվող սովորողների համար՝ դասասենյակների և սանհանգույցների դռների լայնություն (82-91 սմ), դասասենյակում նստարանի շարքերի միջև հեռավորությունը (82-91 սմ), սեղանների բարձրության համապատասխանություն սայլակի չափերին) | Ապահովում է | 3 | 2 | |
| | | Ապահովում է մասամբ | 2 | | |
| | | Չի ապահովում | 0 | | |
| | | Չ/պ | 1 | | |
| 4 | Դպրոցի բակում, խաղահրապարակում և մուտքի մոտ ապահովված է սովորողի անխոչընդոտ տեղաշարժը (սայլակով տեղաշարժվող սովորողների անխոչընդոտ տեղաշարժն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի թեքահարթակը լինի անմիջապես մուտքի աստիճանների կողքից: Մակերեսը պետք է լինի չսայթաքող, դիմացկուն: Թեքահարթակի վերին և ներքևի մասերում պետք է տեղադրված լինեն գունավոր ցուցիչներ՝ որպես զգուշացում թեքահարթակի գտնվելու վայրի մասին) | Ապահովված է | 3 | 3 | թեքահարթակ մուտքերի մոտ |
| | | Ապահովված է մասամբ | 2 | | |
| | | Ապահովված չէ | 0 | | |
| 5 | Հարկից հարկ տեղափոխվելու համար առկա է վերելակ և (կամ) մատչելիությունն ապահովող այլ սարքավորումներ և հարմարանքներ | Առկա են | 3 | 2 | |
| | | Առկա են մասամբ | 2 | | |
| | | Առկա չեն | 0 | | |
| | | Չ/պ | 1 | | |
| 6 | Դպրոցում առկա են մատչելի ուսումնական նյութեր՝ էլեկտրոնային, խոսող, բրայլյան տառատեսակներով, պարզեցված և հեշտ ընկալելի տեքստերով, ռելիեֆային նկարազարդումներով գրքեր, թեստեր, նկարազարդ նյութեր, ժեստերի լեզվով թարգմանությամբ ապահովված ուսումնական տեսաֆիլմեր և այլն | Առկա են | 3 | 2 | խոսող գրքեր, նկարազարդ գրքեր, թեստեր |
| | | Առկա են մասամբ | 2 | | |
| | | Առկա չեն | 0 | | |
| | | Չ/պ | 1 | | |
| 7 | Սովորողներին հասանելի են դպրոցում առկա մատչելի ուսումնական նյութերը | Հասանելի են | 3 | 3 | |
| | | Հասանելի են մասամբ | 2 | | |
| | | Հասանելի չեն | 0 | | |
| 8 | Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համար առկա է առանձնացված կահավորված տարածք | Առկա է | 3 | 3 | |
| | | Առկա է, բայց կահավորված չէ կամ մասամբ է կահավորված | 2 | | |
| | | Առկա չէ | 0 | | |
| ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ՝<br>22-ից բարձր՝ «Գերազանց», 21-18՝ «Շատ լավ», 17-13՝ «Լավ», 12-7՝ «Բավարար», մինչև 6՝ «Անբավարար» | | | | 21 | Շատ լավ |

ՀՀ կրթության տեսչական մարմնի ծառայող՝ Արամ Խաչատրյան, ______ Ահդա Բարսեղյան ______

ազգանուն, անուն          ստորագրություն

Դպրոցի տնօրեն՝ Կ.Տ. Անահիտ Խոսրովյան ______

ազգանուն, անուն          ստորագրություն

**2022-2023 ուստարվա սովորողների առաջադիմության հաշվետվություն ըստ դասարանների**

| Դասարան | Աշակերտների թիվը ուստարվա սկզբին | Տղա | Աղջիկ | Աշակերտների թիվը ուստարվա վերջին | Տղա | Աղջիկ | Գերազանց առաջ. | Տղա | Աղջիկ | Հարվածային առաջ. | Տղա | Աղջիկ | Բացականների թիվ | Տղա | Աղջիկ | [illegible] | Տղա | Աղջիկ | Փոխադրված աշ | Տղա | Աղջիկ | Չփոխադրված աշ | Տղա | Աղջիկ | [illegible] | Տղա | Աղջիկ | [illegible] | Տղա | Աղջիկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1-1 | 34 | 19 | 15 | 34 | 18 | 16 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 156 | 117 | 39 | 3 | 2 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 1-2 | 32 | 20 | 12 | 32 | 19 | 13 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 84 | 52 | 32 | 4 | 3 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 1-3 | 35 | 19 | 16 | 33 | 18 | 15 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 62 | 58 | 4 | 2 | 2 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2-1 | 30 | 17 | 13 | 32 | 18 | 14 | 7 | 3 | 4 | 20 | 11 | 9 | 303 | 230 | 73 | 3 | 2 | 1 | 30 | 17 | 13 | 0 | 0 | 0 | 2 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| 2-2 | 28 | 18 | 10 | 28 | 18 | 10 | 9 | 2 | 7 | 16 | 6 | 10 | 284 | 101 | 183 | 2 | 2 | 0 | 29 | 17 | 12 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 2-3 | 29 | 13 | 16 | 30 | 18 | 12 | 9 | 2 | 7 | 16 | 6 | 10 | 284 | 101 | 183 | 2 | 2 | 0 | 29 | 17 | 12 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 3-1 | 30 | 15 | 15 | 29 | 14 | 15 | 11 | 5 | 6 | 15 | 7 | 8 | 329 | 159 | 170 | 1 | 1 | 0 | 29 | 14 | 15 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3-2 | 32 | 16 | 16 | 32 | 17 | 15 | 12 | 4 | 8 | 13 | 8 | 5 | 279 | 143 | 136 | 3 | 2 | 1 | 29 | 14 | 15 | 0 | 0 | 0 | 3 | 2 | 1 | 0 | 0 | 0 |
| 3-3 | 34 | 16 | 18 | 33 | 15 | 18 | 12 | 6 | 6 | 15 | 7 | 8 | 548 | 269 | 279 | 2 | 1 | 1 | 32 | 15 | 17 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| 4-1 | 34 | 17 | 17 | 35 | 17 | 18 | 13 | 5 | 8 | 13 | 5 | 8 | 356 | 130 | 226 | 2 | 2 | 0 | 34 | 16 | 18 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 4-2 | 33 | 17 | 16 | 32 | 17 | 15 | 13 | 7 | 6 | 14 | 8 | 6 | 447 | 261 | 186 | 1 | 0 | 1 | 30 | 16 | 14 | 0 | 0 | 0 | 2 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| 4-3 | 28 | 11 | 17 | 28 | 11 | 17 | 9 | 3 | 6 | 10 | 4 | 6 | 337 | 101 | 236 | 1 | 1 | 0 | 28 | 11 | 17 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տարրական | 379 | 198 | 181 | 378 | 200 | 178 | 95 | 37 | 58 | 132 | 62 | 70 | 3469 | 1722 | 1747 | 27 | 20 | 6 | 270 | 137 | 133 | 0 | 0 | 0 | 11 | 7 | 4 | 0 | 0 | 0 |
| 5-1 | 30 | 17 | 13 | 29 | 17 | 12 | 6 | 1 | 5 | 11 | 7 | 4 | 713 | 496 | 217 | 4 | 3 | 1 | 26 | 15 | 11 | 0 | 0 | 0 | 4 | 3 | 1 | 0 | 0 | 0 |
| 5-2 | 35 | 18 | 17 | 33 | 17 | 16 | 9 | 4 | 5 | 14 | 7 | 7 | 379 | 220 | 159 | 4 | 4 | 0 | 29 | 13 | 16 | 0 | 0 | 0 | 3 | 4 | 0 | 0 | 0 | 0 |
| 5-3 | 33 | 19 | 14 | 34 | 20 | 14 | 10 | 2 | 8 | 11 | 6 | 5 | 518 | 366 | 152 | 4 | 3 | 1 | 31 | 17 | 14 | 0 | 0 | 0 | 3 | 3 | 0 | 0 | 0 | 0 |
| 6-1 | 26 | 16 | 10 | 26 | 16 | 10 | 7 | 4 | 3 | 12 | 5 | 7 | 275 | 156 | 119 | 1 | 1 | 0 | 25 | 15 | 10 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 6-2 | 25 | 17 | 8 | 26 | 18 | 8 | 1 | 1 | 0 | 9 | 5 | 4 | 468 | 352 | 116 | 3 | 2 | 1 | 25 | 17 | 8 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 2 | 2 | 0 |
| 6-3 | 30 | 18 | 12 | 31 | 19 | 12 | 3 | 2 | 1 | 6 | 2 | 4 | 224 | 140 | 84 | 4 | 4 | 0 | 27 | 15 | 12 | 0 | 0 | 0 | 4 | 4 | 0 | 0 | 0 | 0 |
| 7-1 | 29 | 19 | 10 | 31 | 20 | 11 | 0 | 0 | 0 | 5 | 3 | 2 | 802 | 586 | 216 | 2 | 1 | 1 | 31 | 20 | 11 | 0 | 0 | 0 | 2 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| 7-2 | 32 | 17 | 15 | 30 | 16 | 14 | 3 | 1 | 2 | 7 | 2 | 5 | 715 | 374 | 341 | 3 | 3 | 0 | 30 | 16 | 14 | 0 | 0 | 0 | 3 | 3 | 0 | 0 | 0 | 0 |
| 7-3 | 30 | 15 | 15 | 29 | 15 | 14 | 1 | 0 | 1 | 6 | 4 | 2 | 609 | 386 | 223 | 2 | 1 | 1 | 28 | 15 | 13 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| 8-1 | 30 | 16 | 14 | 28 | 14 | 14 | 0 | 0 | 0 | 9 | 1 | 8 | 421 | 262 | 159 | 3 | 2 | 1 | 27 | 13 | 14 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 8-2 | 30 | 18 | 12 | 29 | 18 | 11 | 1 | 0 | 1 | 2 | 1 | 1 | 400 | 268 | 132 | 1 | 1 | 0 | 29 | 18 | 11 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 2 | 2 | 0 |
| 8-3 | 30 | 17 | 13 | 30 | 17 | 13 | 0 | 0 | 0 | 10 | 2 | 8 | 687 | 482 | 205 | 5 | 5 | 0 | 28 | 15 | 13 | 0 | 0 | 0 | 2 | 2 | 0 | 2 | 1 | 1 |
| 9-1 | 26 | 16 | 10 | 26 | 16 | 10 | 2 | 1 | 1 | 6 | 5 | 1 | 589 | 480 | 109 | 2 | 2 | 0 | 25 | 15 | 10 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 9-2 | 25 | 16 | 9 | 25 | 16 | 9 | 2 | 0 | 2 | 6 | 5 | 1 | 850 | 646 | 204 | 3 | 3 | 0 | 24 | 15 | 9 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 9-3 | 25 | 16 | 9 | 24 | 16 | 8 | 1 | 1 | 0 | 4 | 3 | 1 | 362 | 290 | 72 | 7 | 6 | 1 | 19 | 12 | 7 | 0 | 0 | 0 | 5 | 4 | 1 | 0 | 0 | 0 |
| Միջին | 436 | 255 | 181 | 431 | 255 | 176 | 46 | 17 | 29 | 118 | 58 | 60 | 8012 | 5504 | 2508 | 54 | 41 | 7 | 404 | 231 | 173 | 1 | 1 | 0 | 32 | 29 | 4 | 6 | 5 | 1 |
| Ընդամենը | 815 | 453 | 362 | 809 | 455 | 354 | 141 | 54 | 87 | 250 | 120 | 130 | ###### | 7226 | 4255 | 81 | 61 | 13 | 674 | 368 | 306 | 1 | 1 | 0 | 43 | 36 | 8 | 6 | 5 | 1 |

Ներդպրոցական վերահսկողությունը ունի առանձնահատուկ դեր ու նշանակություն ուսումնադաստիարակչական աշխատանքի կարգավորման և կատարելագործման գործում:Այն նպատակ ունի օգնել ուսուցիչներին առավել արդյունավետ կատարել իրենց պխարտականությունները և խթանելու աշակերտի առաջադիմությունը,տարվող աշախատանքները ուղղված են դասավանդման որակի և ուսուցիչների մասնագիտական աճի բարձրացմանը:

Այս ամենին զուգահեռ ԴԶԾ-ի ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսման որակի բարձրացման հիմքում դրել եմ նաև ուսուցման աշխատանքների պլանավորման ժողովրդավարության և ակտիվ քաղաքացիության կոմպետեցիան,քանի որ այն ենթադրում է

- ✓ ՈՒսուցման տարբեր ակտիվ ձևերի և հնարավորությունների կիրառում
- ✓ ՈՒսուցման հստակ նպատակների ձևավորում և փոխանակում
- ✓ ՈՒսուցման աշխատանքների առանցքային թեմայի սահմանում,թեմանների ընտրություն և դասաժամի կառավարում
- ✓ Թեմայի հասանելիության հարմարեցումը աշակերտին, բայց միևնույն ժամանակ խթանող աշխատանքների ընտրություն
- ✓ Ակտիվ մասնակցությանը օժանդակող արդյունավետ ռեսուրսների սահմանում
- ✓ Դասավանդման և ուսուցման գործընթացների մասին աշակերտների կողմից

արդյունավետ հետադարձ կապի հնարավորության ստեղծում

- ✓ Համայնքային խնդիրների վրա հիմնված Նախագծային ուսումնառություն՝սովորել անելով սկզբունքի հիման վրա

### Ուժեղ կողմեր

- Ուսուցիչների պատրաստվածությունը
- Լրացուցիչ պարապմունքներ բացարձակ ընդունակություններ ունեցող սովորողների հետ
- Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների հետ լրացուցիչ պարապմունքներ
- Ետ մնացող սովորողների ընդգրկվածությունը երկարօրյա խմբերում
- Ձևավորված արտադասարանական խմբերի ակտիվ գործունեություն
- Սովորողների հետաքրքրվածությունը որոշ առարկաների նկատմամբ
- Տնօրենության կողմից կազմակերպված ճիշտ ռազմավարություն

### Թույլ կողմերը

- Որոշ ծնողների անտարբերություն

### Ռիսկեր

Ուսումնառության արդյունքների նկատմամբ անտարբերություն

**Գնահատում՝**

1.Սովորողների կրթության որոկի բարձրացման հետ կապված ոչ մի գործողություն չի իրականացվել –0 միավոր
2. Սովորողների կրթության որակի բարձրացման համար իրականացվել է մինչև 20% աշխատանք – 1 միավոր
3.Սովորողների կրթության որակի բարձրացման համար իրականացվել է մինչև 30% աշխատանք - 2 միավոր
4.Սովորողների կրթության որակի բարձրացման համար իրականացվել է մինչև 40% -4 միավոր
5.Սովորողների կրթության որակի բարձրացման համար իրականացվել է 50% և ավելին – 5 միավոր

## Առկա են հետևյալ հիմնախնդիրները

- Կրթության ցանկացած փուլում սովորողին՝ուսումնառության գործընթացում իր կարողությունների չափով մասնակցություն ունենալու խանգարող կայուն դժվարություններ
- Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների հայտնաբերման ձեռնարկվող միջոցներ,ուսումնառության լրացուցիչ պայմաններ
- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից

- ԲՏՃՄ ուսումնական բնագավառի առարկայական որակյալ մասնագետների պակաս
- Կամավոր ատեստավորմանը մասնակցել ցանկացող ուսուցիչների պասիվություն
- Դպրոցում աշակերտների և ուսուցիչների կենսագործունեության համար պայմանների բարելավում /հատկապես վերելակի խնդիրը/
- Կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ջանքերի համատեղում և ակտիվ մասնակցություն
- Ներդպրոցական վերահսկողության ուժեղացում ՝ ընդգրկելով բոլոր պատասխանատուներին՝ տնօրենին, տնօրենի տեղակալներին, մ/մ նախագահներին, մասնակից դարձնելով նաև ծնողներին
- Աշակերտական ինքնավարության կատարելագործում
- Անվտանգության պահակային ծառայություն
- Մեդիագրագիտության պակաս,արդյունքում՝ համացանցային տարբեր վտանգներ
- Արտազաղթի աճ
- Որոշ սովորողների և ծնողների անտարբերություն ուսման նկատմամբ
- Կախվածություն բջջային հեռախոսներից և համացանցի սոցիալական կայքերից
- նոր տեխնոլոգիաների թույլ տիրապետում, կիրառում՝ հեռավար հարթակների օգտագործման անընդմեջ փոփոխման արդյունքում
- Ընթերցասիրության պակաս, ինքնակրթության ակտիվության նվազում
- Դասասենյակների վերազինումը ՏՀՏ նոր սարքավորումներով

**Այդ նպատակներին հասնելու համար պետք է կրթության առաջընթացի հիմքում դնել << Սովորել սովորելու>> կարողունակության զարգացումը և կարևորել հետևյալ նախապայմանները՝**

- վերազինել դպրոցի դասասենյակները ժամանակակից ՏՀՏ –ով:
- Կրթության գործում կարևորել սովորողի տրամաբանության,լեզվամտածողության և ինքնուրույն ստեղծագործական մտքի և հնարավորությունների զարգացումը
- Կարևորել **ԲՏՃՄ ուսումնական բնագավառի առարկաների** դասավանդումը/նորարար, գիտական գիտելիքներով, ՏՀՏ և մեդիա

կարողություններով զինված ուսուցիչներ, քանի որ այն անձը ով լավ է տիրապետում այդ առարկաները, հակված է հետազոտության և պատրաստ է որոնելու ինքնուրույն լուծումներ:

- Կարևորել ուսուցիչների կարողությունների զարգացումը, դասավանդման մոտեցումները
- Կարևորել թիմային,արդյունավետ աշխատանքը
- Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքները

նպատակաուղղել սովորողների հայրենասիրական և պետականության ոգու էլ ավելի ամուր ամրապնդմանը

- կազմակերպել աշակերտների ֆիզիկական ու ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստող բազմաբնույթ աշխատանքներ, հատուկ ուշադրության կենտրոնում պահելով **ֆիզկուլտուրայի և ՆԶՊ** առարկաների դասավանդումը՝ զուգահեռ անցնելով **ԱԲՕ**
- այցելել զորամասեր, այցելել Վ.Սարգսյանի , ոստիկանության թանգարաններ, Վ.Սարգսյանի անվան ռազմական ուսումնարան, կազմակերպել հանդիպումներ զինվորների, ազատամարտիկների, պատերազմի հաշմանդամների, վետերան ոստիկանների հետ, զոհված ազատամարտիկների ծնողների հետ,ստեղծել փառքի անկյուն դպրոցի զոհված բոլոր հերոս տղաների, ստեղծել տեսանյութեր տղաների մասին ,կազմակերպել հերոս տղաների մասին ֆիլմերի դիտում:
- բարձրացնել աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ միաժամանակ սերմանելով, հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի նկատմամբ
- Հաշվի առնելով Արցախյան պատերազմները և դրանց հետևանքները երկու առարկաներին զուգահեռ սովորեցնել ողջ մնալու արվեստը,քանի որ Հայաստանը պատերազմական երկիր է և երեխաներին փոքրուց պետք է սովորեցնել ռազմական հնարներին:
- Կազմակերպել արշավներ՝ հայրենի վայրերը ճանաչելու, արժևորելու, պահպանելու նպատակով:

**Ֆինանսական գործունեություն**

Ջոն Կիրակոսյանի անվ. հ.20 հիմնական դպրոցում ֆինանսական միջոցները գոյանում են հիմնականում պետբյուջեի հատկացումներից, նաև թույլատրելի հնարավոր արտաբյուջետային մուտքերից: Դպրոցի ֆինանսավորումը կատարվել է ըստ տարրական և հիմնական դպրոցների մեկ աշակերտի ֆինանսավորմամբ /նոր կարգի համաձայն՝դասարան թվով/, ավելացրած՝ պահպանության ծախսերը:

Դպրոցի ֆինանսական վիճակը կայուն է:

ՀՀ Հանրակրթության մասին օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի համաձայն՝ ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար դպրոցի տնօրենը տրամադրում է համակարգողին անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կարիքը ՝ պահանջվող ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար: Նախորդ 5 տարիների ֆինանսական գործունեությանը հավանություն է տվել կոլեգիալ կառավարման մարմինը և այն հաստավել է լիազոր մարմնի կողմից: Բոլոր ֆինանսական միջոցները ծախսվել են օրենքով սահմանված կարգով:

**Դպրոցի բյուջեն**

| | **Սուբսիդիա** | **Մնացորդ** |
|---|---|---|
| 2019թ. | 127712,3 հազ. դրամ | 26527,8 հազ.դրամ |
| 2020թ. | 139420,8 հազ.դրամ | 27045,5 հազ.դրամ |
| 2021 թ. | 134263,8 հազ.դրամ | 24999,7 հազ.դրամ |
| 2022թ. | 146820,1 հազ դրամ | 29356,4 հազ.դրամ |
| 2023թ. | 138015,0 հազ.դրամ | |

Դպրոցը ոչ մի պարտք չունի ոչ մի կազմակերպությանը և չունի ֆինանսական ճեղքվածք, ավելին՝ կա տնտեսում:

Առ 1.04.2023թ. դպրոցի դրամական միջոցների ազատ մնացորդը կազմում է **18345,6 հազ. դրամ** :

Մինչև տարեվերջ այն կաճի:

Ուսուցիչների վերապատրաստումների համար դպրոցը տրամադրել է հետևյալ գումարները՝

**2021թ.- 243800 դրամ**

**2022թ.- 408000 դրամ**

Նախորդ 5 տարիների ընթացքում դպրոցը ձեռք է բերել **նոր գույք /աշակերտական սեղան, աթոռ, պահարան, ուսուցչի սեղան, ՏՀՏ միջոցներ**:

| | | |
|---|---|---|
| 2019թ. | Ինտերակտիվ պրոյեկտոր | 960000 ՀՀ դրամ |
| | Դպրոցական կահույք | 930000 ՀՀ դրամ |
| 2020թ. | Էլեկտրոնային գրատախտակ | 960000 ՀՀ դրամ |
| | համակարգիչներ | 784000 ՀՀ դրամ |
| 2021թ. | 3 ինտերակտիվ հեղուկ բյուրեղյա դիսպլեյ, 2 ցրիչ, 2 բոլորը մեկում համակարգիչ, 2 հեռուստացույց, 1 դյուրակիր համակարգիչ | 7.127.000 ՀՀ դրամ |
| | Դպրոցական գույք | 900000 ՀՀ դրամ |
| 2022թ. | Դպրոցական կահույք | 1.809.000 ՀՀ դրամ |
| 2023թ. | 2 ցրիչ | 700.000 ՀՀ դրամ |
| | Աշակերտական գույք | 945000 ՀՀ դրամ |

**Տարրական դպրոցի դասագրքերը անվճար են, իսկ սոցիալապես անապահով և ԿԱՊԿ ունեցող սովորողների դասագրքերի գումարները նաև փոխհատուցվում են պետության կողմից:**
**2019 թ.-ին փոխհատուցվել է 212200 ՀՀ դրամ**
**2020թ.-ին փոխհատուցվել է 215000 դրամ**
**2021թ.-ին փոխհատուցվել է 229400 դրամ**
**2022թ.-ին փոխհատուցվել է 238300 դրամ**

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՀՀ Հանրակրթության մասին օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի համաձայն՝ դպրոցի տնօրենը ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ կարիքները տրամադրում է համակարգողին՝ պահանջվող ծախսերը գնահատելու, նախահաշիվկազմելու և լիազոր մարին ներկայացնելու համար: Նախորդ 5 տարիների ֆինանսական գուծունեությունն իրականացվել է նախորդ կառավարման համակարգի շրջանակներում՝ կոլեգիալ կառավարման մարմնի և լիազորված մարմնի համագործակցության արդյունքում: Բոլոր ֆինանսական միջոցները ծախսվել են օրենքով սահմանված կարգով, գերծախս և շեղումներ չեն եղել՝ բացառությամբ 2019-2020 թթ. Ուսուցիչների ատեստավորման համար տրամադրվող գումարի մասով (շեղում), որը պայմանավորված էր կորոնավիրուսի համաճարակով:

### 2022-2023 ուստարվա ծախսերը

| Հ/հ | | հազար դրամ |
|---|---|---|
| 1. | Սովորող / ուսուցիչ հարաբերությունը | 13,03 |
| 2. | Սովորող /սպասարկող վարչական անձնակազմ հարաբերությունը | 39,1 |
| 3. | Դասարանների միջին խտությունը | 30.4 |
| 4. | Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը | 182,2 |
| 5. | Ուսուցչի միջին աշխատավարձը | 128,3 |
| 6. | Վարչական աշխատողների միջին աշխատավարձը | 226,3 |
| 7. | Սպասարկող կազմի միջին աշխատավարձը | 122,8 |
| 8. | Հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը (ուսումնական պրակտիկա, վճարովի ծառայություն և վարձակալություն) | 2484,5 |
| 9. | Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը | 0 |
| 10. | Հովանավորչական դրամաշնորհային միջոցների տարեկան չափը | 0 |
| 11. | Աշխատավարձների վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը | 134200,8 |
| 12. | Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան չափը | 456,1 |
| 13. | Նոր գույքի, այդ թվում սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան չափը | 2052,6 |

**Տեղեկանք**

**<<Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի աշակերտների և աշխատակիցների վերաբերյալ 2022 թ. տարեկան**

| հ/հ | Անվանում | Թվաքանակ / գումար |
|---|---|---|
| **1.** | **Աշակերտների փաստացի թվաքանակ** | 810+11 նախակրթարան |
| **2.** | **Աշխատողների փաստացի միջի թվաքանակը, որից** | 84 |
| 2.1 | վարչական անձնակազմի թվաքանակ | 5 |
| 2.2 | սպասարկող անձնակազմի թվաքանակ | 16 |
| 2.3 | մանկավարժական անձնակազմի թվաքանակ | 63 |
| **3.** | **Աշխատողների փաստացի աշխատավարձի ֆոնդ, որից** | 134200,8 |
| 3.1 | վարչական անձնակազմի աշխատավարձի ֆոնդ (հազ.դրամ) | 13579,4 |
| 3.2 | սպասարկող անձնակազմի աշխատավարձի ֆոնդ (հազ.դրամ) | 23579,3 |
| 3.3 | մանկավարժական անձնակազմի աշխատավարձի ֆոնդ (հազ.դրամ) | 97042,1 |

Ուժեղ կողմեր՝

- դպրոցի բյուջեի ճիշտ և նպատակային օգտագործում
- դպրոցի ֆինանսական գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովում
- վստահելի համագործակցություն լիազորված մարմնի և կառավարման խորհրդի հետ
- հաշվապահի կողմից ֆինանսական հաշվետվությունների ժամանակին ներկայացում
- բյուջեի նախահաշվի քննարկում կառավարման խորհրդում, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներում
- օրենքով սահմանված կարգով բյուջեի նախագծի ներկայացում լիազորված մարմնին
- օրենքի սահմաններում պետբյուջեյից սոցիալապես անապահով ընտանիքներում ընդգրկված, ԿԱՊԿ ունեցող սովորողների դասագրքերի վարձավճարի փոխհատուցում

**Թույլ կողմ**

- Բարեգործության, նպատակային ներդրումների, օրենքով սահմանված կարգով լրացուցիչ աղբյուրների ֆինանսական բացակայություն:

**Ռիսկեր**

-Պետության համար ֆորսմաժորային իրավիճակ

-Բարեգործության,նպատակային ներդրումների,օրենքով սահմանված կարգով լրացուցիչ աղբյուրների ֆինանսական բացակայություն

-Դասարանների թվի պակաս

-Վարձակալության պայմանագրերի պայմանավորվածությունների խախտում

- Անբարենպաստ գնումների, ծառայությունների պայմանագրերի կնքում

**Ռիսկերը մեղմացնող կամ  վերացնող գործողություններ՝**

- Ընդլայնել համագործակցությունը,գտնել բարեգործներ,նպատային ներդրողներ
- Ակտիվ մասնակցել ծրագրերին,դրամաշնորհներին և մրցույթներին
- Համագործակցել համակարգողի

**Գնահատում՝**

1. Ֆինանսական գործունեությունը իրականացվել է խախտմամբ և օգտագործվել ոչ արդյունավետ՝ –0 միավոր
2. Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը մինչև 50% – 1 միավոր
3. Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը մինչև 80%-3 միավոր
4. Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը մինչև 100%-4 միավոր
5. Ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը և տնտեսումը – 5 միավոր

Որպես հավակնորդ, դպրոցի զարգացման ծրագրի հիմքում դնելով դպրոցի կողմից իրականացված ամբողջ գործունեության վերլուծությունը, արժևորում եմ ամբողջությամբ պահպանել, զուգահեռ ապահովել ժամանակակից պահանջներին համահունչ կրթության առաջացիկ զարգացումը: Եթե դպրոցում առկա է աշխույժ, զարգացող, նախաձեռնող, մշտապես հարստացող և ոգեշնչող մտավոր գործունեության վրա հենված ներառական կրթական միջավայր,ապա այնտեղ իրականացվող աշխատանքը կլինի արդյունավետ ու կառուցողական:

**Դպրոցը շարունակելու է աշխատել՝ գիտակցելով իր պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ: Դպրոցի աշխատանքի կարևորագույն ուղղություններն են լինելու՝**

- ✓ դպրոցում աշակերտների և ուսուցիչների կենսագործունեության համար պայմանների բարելավում
- ✓ միջանձնային հարաբերությունների, հանդուրժողականության ձևավորում
- ✓ բնության, հասարակության, մարդու մասին աշակերտի գիտական գիտելիքների ամբողջական համակարգի ձևավորում
- ✓ բարեխիղճ և համարժեք կերպով շրջապատում տեղի ունեցող երևույթներին արձագանքելու, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու կարողության ձևավորում
- ✓ քաղաքացիական ինքնագիտակցության ձևավորում
- ✓ արժեքային համակարգի, համամարդկային արժեքների, լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ հարգանքի ձևավորում
- ✓ շրջապատում գեղեցիկը տեսնելու, գնահատելու կարողության զարգացում
- ✓ ինքնաճանաչման, ինքնազարգացման, ինքնաիրագործման և ինքնահաստատման ներքին պահանջի ձևավորում

- ✓ աշակերտական ինքնավարության կատարելագործում
- ✓ ծնողական համայնքի դերի բարձրացում
- ✓ բոլոր շահագրգիռ կողմերի հետ համագործակցում՝ ապահովելով թափանցիկ միջավայր և բաց հաշվետվողականություն
- ✓ հայեցի կրթության և դաստիարակության կազմակերպման, ուսուցման նոր տեխնոլոգաներին, ձևերին և մեթոդներին ուսուցիչների տիրապետման և նրանց մասնագիտական նոր մոտեցումների աջակցուն
- ✓ դպրոցի համակարգչային կաբինետների վերազինում ժամանակակից ՏՀՏ –ով:
